

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՎԱՐԱԿՈՒՄ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ  
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱԿԱՆ  
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА  
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ  
SOCIAL SCIENCES

ՀԱՐԴ 5 ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
СЕРИЯ 5 СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА  
VOLUME 5 SOCIOLOGY, ECONOMICS

№ 3 (144)

ԵՐԵՎԱՆ – 2014

Յանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Յրատարակվում է 1967 թվականից:

Журнал выходит три раза в год. Издается с 1967 года.

The Bulletin is published thrice a year. It has been published since 1967.

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»  
"БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ"  
"BANBER YEREVANI HAMALSARANI"

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.  
Խմբագրական խորհուրդ.

Ալեքսանյան Ա. Ս., Ավետիսյան Լ. Վ. (գլխ. խմբագրի տեղակալ), Գաբուզյան Ա. Յ.,  
Գոնչար Ն. Ա. (գլխ. խմբագրի տեղակալ), Խաչատրյան Ա. Կ., Յարությունյան Է. Ա.,  
Չովակիմյան Ա. Ե. (պատասխ. քարտուղար), Հովսեփյան Լ. Ս., Սիմոնյան Ա. Յ.

Главный редактор: Мирзоян Г. К.

Редакционная коллегия:

Ավետիսյան Լ. Վ. (зам. главного редактора), Ալեքսանյան Ա. Ս., Արյունյան Է. Ա.,  
Գաբузян Ա. Ա., Գոնчар Ն. Ա. (зам. главного редактора), Օվակимян Ա. Յ.  
(ответ. секретарь), Օվսեպյան Լ. Ս., Խաչатрян Ա. Կ.,

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.

Editorial Board:

Aleksanyan A. S., Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Gabuzyan A. H.,  
Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan E. A., Hovakimyan A. E. (*Executive Secretary*), Hovsepyan L. S., Khachatryan A. K., Simonyan A. H.

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ, ՏԻՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
СОЦИОЛОГИЯ, ЭКОНОМИКА  
SOCIOLOGY, ECONOMICS

Խմբագրական խորհուրդ - Խաչատրյան Ա. Կ. (պատասխանատու խմբագիր), Արանեսյան Ա. Վ., Առաքելյան Ա. Յ., Ասիկյան Ս. Ն., Գալստյան Գ. Ս., Թիլման Ա. (Գերմանիա), Ղանթարջյան Ս. Լ., Մանասյան Հ. Գ., Մկրտիչյան Ա. Ե., Չորբայյան Լ. (ԱՄՆ), Սահակյան Ա. Կ.

Редакционная коллегия: Хачатрян А. К. (ответственный редактор),  
Аракелян А. Г., Асикян С. Н., Атанесян А. В., Галстян Г. С., Кантарджян С. Л.,  
Манасян Э. Г., Мкртичян А. Е., Саакян А. К., Тилман А. (Германия),  
Чорбаджян Л. (США)

Editorial Board: Khachatryan A. K. (Managing Editor), Atanesyan A. V.,  
Arakelyan A. H., Asikyan S. N., Galstyan G. S., Tilman A. (Germany), Ghan-  
tarjyan S. L., Manasyan H. G., Mkrtichyan A. E., Chorbajyan L. (USA), Sa-  
hakyan A. K.

© Բանբեր Երևանի համալսարանի - 2014

© Երևանի պետական համալսարանի հրատարակչություն - 2014

# ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԻՆՍԻՏՈՒՏԸ ՐԵՏԻՆՈՐՅՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

### ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ընտանիքը՝ որպես սոցիալական ամենահին ինստիտուտ, շարունակում է մնալ հասարակությունների վերաբռնադրության հիմնական միջոցներից մեկը: Ցանկացած ընտանիքում մենք կարող ենք տեսնել հասարակական հարաբերությունների բարդ համակարգ: Ընտանիքը և հասարակությունը պայմանավորում են միմյանց: Որպես սոցիալական ինստիտուտ՝ ընտանիքը ձևավորվում է հասարակության կողմից՝ նրա որոշակի պահանջմունքները բավարարելու համար, սակայն որպես խունք այն միջնորդավորում է հասարակական պահանջմունքների բավարարումն իր նորմատիվ և արժեքային համակարգերով: Ընտանիքի բոլոր անդամները, իրենց կարգավիճակից ու դերերից կախված, լինում են հասարակական տարբեր միջավայրերում, ներառվում տարբեր հարաբերությունների մեջ ու ընտանիք բերում այդ ամենի մասին իրենց տպավորություններն ու պատկերացումները, և այդտեղ ամեն ինչ միախառնվում է՝ որոշակիորեն ազդելով յուրաքանչյուրի վարքագծի վրա: Այնտեղ հայտնված երեխաները սոցիալականացման մեխանիզմներով յուրացնում են սոցիալական փորձը և սահուն մուտք գործում հասարակություն՝ իրենց վարքում համարելով անհատականը, ընտանեկանը և հասարակականը: Սոցիալականացման սուբյեկտների շարքում ընտանիքը ստանում է առավելություն մյուսների համեմատ: Արյունակցական և ազգակցական կապերը կարևոր նախադրյալ են այդ մրցակցությունում հաղթելու համար, սակայն միշտ չեն, որ դա հաջողվում է: Հասարակությունների զարգացումը վկայում է, որ ընտանիքի ինստիտուտի համար գնալով ավելի ու ավելի է դժվարանում հասարակության վերաբռնադրության իր գործառույթներն իրականացնել: Դրա պատճառները հետևյալներն են: Նախ, խստանում են հասարակության կողմից ընտանիքին ներկայացվող պահանջները, որոնք արդեն բոլոր ընտանիքները չեն, որ կարող են բավարարել: Հասարակության համար արդեն միևնույնը չեն, թե ինչ է տեղի ունենում ընտանիքում երեխաների ու մյուս անդամների հետ: Այն փորձում է ավելի ու ավելի հաճախ միջամտել երեխաների խնամքի և սոցիալականացման գործընթացներին, վերահսկել դրանք, հետևել կանանց ու տարեցների իրավունքների պաշտպանվածությանը և այլն: Եթող էլ փոխվում են մարդկանց արժեքային կողմնորոշումները, այդ թվում՝ և ընտանեկան արժեքները: Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, լուրջ փոփոխություններ է ապրում, ընտանիքի նոր ձևեր են առաջանում, հաճախանում են ամուսնալու-

ծությունները<sup>1</sup>: Եվ վերջապես՝ հասարակական ցնցումները, որոնց հորձանուտում պարբերաբար հայտնվում է ընտանիքը, թուլացնում են նրա գործառական կարողությունները<sup>2</sup>: Այդ դեպքում հասարակության նորմալ վերարտադրությունը դաշնում է ռիսկային:

Հայաստանում խորհրդային կարգերի փլուզումից հետո ընտանիքը մնաց բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրներին դեմ հանդինան՝ աղքատություն, գործազրկություն, անօրևանություն, միգրացիա, կորուստ ու վիշտ: Դրանց հավելվեցին պատերազմի հետևանքները: Երկարեւ վարագույի վերացումը ճանապարհ բացեց արևանյան արժեքների համար: Դրանք ներթափանցեցին Հայաստան, դարձան մշակույթի մաս ու սկսեցին ազդել սոցիալականացման և դաստիարակության համակարգերի վրա: Ընտանիքի ինստիտուտը պատրաստ չէր ննան փորձությունների, և նրա հիմքերը թուլացան: Արևանութքը վաղուց էր արդեն կարուտախստով հիշում իր ամուր ու կայուն ընտանիքը, որտեղ իշխում էին սերն ու երջանկությունը: Կապիտալիզմը վաղուց արդեն խարխլել ու թուլացրել էր այն: Մեր երկրում հաստատված շուկայական հարաբերությունները նույնպես տանում են դրան: Մեր բառապաշտում արդեն հաճախ են հնչում «քաղաքացիական ամուսնություն» և «պայմանագրային ամուսնություն» արտահայտությունները, հեշտացվել է ամուսնալուծության գործընթացը, երբեմն լրատվամիջոցներում քննարկվում է անգամ բազմակության հնարավորությունը, ընդունվել ու ընդունվում են օրենքներ, որոնք փորձում են պաշտպանել ընտանիքի անդամների իրավունքները հենց ընտանիքի ոտնձգություններից և այլն: Ժողովրդագիրները, սոցիոլոգները պարբերաբար ահազանգում են ծնելիության կրծատման մասին, որի հիմնական պատճառը ընտանիքի ժողովրդագրական վարքագիծն է: Մարդիկ չեն ցանկանում շատ երեխաներ ունենալ, որովհետև դա լրացուցիչ հոգս ու պատասխանատվություն է, սոցիալական ռիսկ է և իրենց, և երեխաների համար: Ոմանք չեն ցանկանում նույնիսկ ծնող դաշնալ, որովհետև արդում են այլ արժեքներով: Այսօր Հայաստանում ընտանիքի ինստիտուտը դժվարությամբ է իրականացնում հասարակության կենսաբանական վերարտադրության իր գործառույթը: Դրա մասին փաստում են բժիշկները, սոցիոլոգները, ժողովրդագիրները և խնդրին առնչվող այլ մասնագետներ: Ըստ վիճակագիրների՝ վերջին քսան տարում ծնելիության ցուցանիշները Հայաստանում ճգնաժամային են: Որոշ գնահատումներով՝ նախորդ դարի 80-ականների համեմատ՝ այսօր Հայաստանում ծնելիությունը նվազել է ավելի քան կրկնակի<sup>3</sup>: Դրա հիմնական պատճառը աղքատությունն է, որն ընտանիքներից շատերին ուղեկցում է երկրի անկախացումից մինչ օրս: Այժմ էլ երկրի բնակչության մեկ երրորդը համարվում է աղքատ<sup>4</sup>, և աղքատությունը շատ ընտանիքների դարձնում է սոցիալական խոցելի ու անպաշտպան կեցության տարբեր խնդիրներ դիմակայելիս: Այդ հիմնահարցերից թերևս ամենալուրջը երեխաների խնամքի և սոցիալականացման

<sup>1</sup> Steu F. Robertson Elliot. The Family: Change or Continuity? London, 1986:

<sup>2</sup> Steu R. Dallos and E. McLaughlin (Ed.). Social Problems and the Family. London, 1990:

<sup>3</sup> Steu ajstor.am/am/news/2014/10/10 ruben.....1/855356

<sup>4</sup> Steu «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը», 2013, էջ 37, www.armstat.am/am

խնդիրն է, որի լուծումը պայմանավորում է հասարակության սոցիալական վերարտադրության որակը: Իսկ որ ընտանիքի ինստիտուտը երկրի անկախացումից հետո դժվարությամբ է լուծում այդ խնդիրը, վկայում են բազմաթիվ փաստեր: Սահիտակի երկրաշարժից հետո Յայաստանում դրսնորվեց մի երևույթ, որը շատ դիպուկ բնութագրեցին՝ անվանելով «փողոցի երեխաներ», այսինքն՝ երեխաներ, որոնց համար տուն էր դարձել փողոցը՝ իր բոլոր ոլուկերով հանդերձ: Յարյուրավոր երեխաներ հայտնվեցին իրենց համար խիստ վտանգավոր այդ միջավայրում: Խնդրահարուց դարձավ ոչ միայն նրանց խնամքի, առողջության ու կրթության ապահովումը, այլև նրանք դարձան վարքի հակասոցիալական մոդելների վերարտադրման «հոլոմք»:

Ընտանիքի ինստիտուտի խարիսման հաջորդ վկայությունն էր այն, որ հազարավոր երեխաներ իրենց համար բնական այդ միջավայրից տեղափոխվեցին ապրելու շուրջօրյա խնամքի հաստատություններում՝ գիշերիկներում և մանկատներում: Զարմանալին այն էր, որ դա տեղի էր ունենում նրանց մեջ մասի առնվազն մեկ ծնողի կենդանության պարագայում: Ընտանիքների համար մանկալքության հիմնական արդարացումը աղքատությունն էր: Բայց երևույթը ձևավորվեց ու տարածվեց նաև հասրակության վերաբերմունքի պատճառով: Շատերին թվում էր, թե այդպես ավելի լավ է երեխաների համար. իրականում դա վկայում էր «առանց ծնողական խնամքի մնացած երեխաների» (ինեն այդպիսի կարգավիճակ ստացան այդ երեխաները) հիմնախնդիրների լուծնան մասնագիտական ռեսուրսների բացակայության մասին: Առանց ծնողական խնամքի մնացած և հաշմանդամ երեխաների խնամքի ու կրթության կազմակերպման խորհրդային ավանդույթները նպաստեցին երեխաների խնամքի հաստատությունների թվի արագ ավելացմանը և գերբնակեցմանը: Յարազատ երեխաներին լրելու որոշ մայրերի պատրաստակամությունը համապատասխան մարմիններին ստիպեց մանկատներ հիմնել որոշ ծնդատներին կից, որտեղ լույս աշխարհ եկող մանկիները մայրերի կողմից թողնվում էին բախտի քմահաճուքին:

Ինչպես նշվեց, ընտանիքի ինստիտուտը թուլացնող գործոններից է միգրացիան, որը, սկզբում ունենալով սեզոնային բնույթ, դարձավ արտագաղթ: Անկախ պատճառներից ու տեսակներից, միգրացիայի հետևանքով ընտանիքը կիսվում է՝ դառնալով «բաժանված»<sup>5</sup> իրեն հատուկ բոլոր հետևանքներով: Նման ընտանիքին հատուկ խնդիրները մանրամասն նկարագրել են Թոմասն ու Զնանեցկին իրենց հայտնի աշխատության մեջ<sup>6</sup>:

Այսպիսով, այսօր Յայաստանում ընտանիքները տառապում են զանգվածային գործազրկությունից ու աղքատությունից, որոնք իրենց հերթին հանգեցնում են միգրացիայի: Ընտանիքը չի կարողանում լիարժեք

<sup>5</sup> Բաժանված կոչվում է այս ընտանիքը, որի որևէ անդամ հիվանդության, բանտարկության, այլ վայր աշխատանքի մեկնելու և այլ պատճառով ժամանակավորապես բացակայում է ընտանիքից (տես Carlton E. Munson. Social Work with Families. Theory and Practice New York, 1980, էջ 169):

<sup>6</sup> Տե՛ս W. Thomas, F. Znaniecki. The Polish Peasant in Europe and America. Chicago, 1918:

իրականացնել իր անդամների՝ առաջին հերթին երեխաների խնամքի ու սոցիալականացման գործառույթները: Ընտանիքը դառնում է կոնֆլիկտային ու անկայուն, հաճախանում են ընտանեկան բռնությունները և շեղվող վարքի դրսնորումները: Այսօրվա հայաստանյան ընտանիքը սոցիալական հիմնախնդիրների կրծիկ է, որն այնքան խճճված է, որ դժվար է միանշանակ առանձնացնել հիմնախնդիրների պատճառները: Չատ դեպքերում երկար ժամանակ չլուծված հիմնախնդիրները ծնում են նորերը: Օրինակ՝ գործազրկությունը ծնում է աղքատություն, որն էլ իր հերթին՝ կոնֆլիկտներ ու բռնություններ և այլն: Պատահական չէր, որ նորանկախ Հայաստանում 1993 թվականին ծևավորված առաջին սոցիալական ծառայությունների թիրախը դարձան ընտանիքները: Այդ կազմակերպությունները ձեռնամուխ եղան բնակչության աղքատության կրծատման խնդրի լուծմանը: Սկզբում ներդրվեց «Փարոս» խորհրդանշական անունը ստացած համակարգը, որը հետագայում վերանվանվեց «Աղքատության ընտանեկան նպաստ»: Սոցիալական ծառայողները, կիրառելով կարիքավորության գնահատման պետության կողմից մշակված չափանիշները, փորձում էին հայտնաբերել սկզբում աղքատ անհատներին, հետագայում՝ համապատասխանաբար արդեն աղքատ ընտանիքներին և նրանց ցուցաբերել որոշակի աջակցություն: Այս գործընթացներից անկախ, բայց դրանց գույքահեռ՝ Հայաստանում ներդրվում էր «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը<sup>7</sup>, որը խոստանում էր ավելի որակյալ դարձնել բնակչության սոցիալապես խոցելի խճերի պաշտպանությունը:

Իննունականների սկզբին, երբ Հայաստանում «սոցիալական աշխատանք» մասնագիտության զարգացման հնարավորությունների մասին դեռևս առաջին քննարկումներ էին ընթանում, շատերը կասկածում էին հաջողությանը: Նրանց հիմնական փաստարկն այն էր, որ հայ ընտանիքը փակ է, ուստի թույլ չի տա, որ որևէ սոցիալական աշխատող՝ անգամ օգնելու մտադրությամբ, մուտք գործի իր տարածք: Եվ իսկապես, մասնագիտության ներդրման առաջին տարիներին սոցիալական աշխատողները ընտանիքների հետ գործ ունենալիս հաճախ էին առնչվում խնդիրների: Հատկապես երբ խնդիրը վերաբերում էր երեխաների իրավունքների պաշտպանությանը կամ ընտանեկան նպաստների առնչությամբ տնայցերին, ընտանիքները փորձում էին խոչընդոտներ ստեղծել մասնագետների միջամտության ճանապարհին: Երբ գործողության մեջ դրվեց «Ընտանեկան նպաստ» համակարգը, սահմանվեց նաև կարգ, որ ընտանիքի անապահովության մասին հայտարարագիր լրացնողը իր ստորագրությամբ հավաստում էր, որ չի խոչընդոտի սոցիալական աշխատողի տնայցին<sup>8</sup>: Տնայցը կարևոր էր ընտանիքի անապահովության մասին ներկայացված տեղեկատվության հավաստիության գնահատման տեսանկյունից: Բացի այդ, այն թույլ էր տալիս լրացնության տեղեկություններ ստանալ ընտանիքի մասին: Չնայած այս պարտավորվածությանը՝ ընտանիքները հաճախ էին

<sup>7</sup> Տե՛ս Ա. Խաչատրյան, Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը Հայաստանում, «Բանբեր Երևանի Համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2012, 136.5, էջ 5-11:

<sup>8</sup> Տե՛ս «Զեռնարկ Սոցիալական ծառայությունների կենտրոնների համար», Եր., 2002, թիվ 1, էջ 100:

փորձում մոլորեցնել սոցիալական աշխատողներին, որպեսզի դառնան նպաստառու: Այսօր արդեն վստահաբար կարելի է պնդել, որ աղքատության ընտանեկան նպաստի համակարգի ներդրումը նաև անցանկալի հետևանք ունեցավ: Այն նպաստեց կրավորական և սպառողական վարքագիծ ձևավորմանը և խորացմանը: Աղքատության նոր մշակույթը հետխորհրդային Հայաստանում հետևանք էր նաև ընտանեկան նպաստի համակարգի: Շատերն էին փորձում դառնալ այդ համակարգի շահառու: Մարդիկ դիմում էին տարբեր օրինական և անօրինական միջոցների, որպեսզի երևան աղքատ և ինչ-որ բան ստանան տրամադրվող մարդասիրական օգնությունից, նպաստներից և այլն: Եթե հրապարակվեցին ընտանեկան նպաստի նշանակման չափանիշները, որոշ ընտանիքներ փորձում էին ամեն գնով «աճեցնել» իրենց կարիքավորության միավորը՝ կեղծ ամուսնալուծություններ էին կազմակերպում, իրենց բնակարանի գույքը փորձում էին թաքցնել սոցիալական աշխատողների տնայցերի ժամանակ, հրաժարվում էին արտադրական գործունեությունից, կեղծ փաստարդիք էին ներկայացնում և այլն: Սոցիալական աշխատողները մեծ ջանքեր էին թափում, որպեսզի ապահովեն սոցիալական ծառայությունների հասցեականությունը: Ընտանեկան նպաստի համակարգն այն աստիճանի ծովացրեց որոշ մարդկանց, որ եթե պետությունը սկսեց իրականացնել «Նպաստ՝ աշխատանքի դիմաց» ծրագիրը, մարդիկ դժկանությանը էին համաձայնում մասնակցել, թեև առաջարկվող փոխհատուցման չափն ավելին էր, քան ընտանեկան նպաստը: Շատերը գերադասում էին ստանալ համեմատաբար փոքր ընտանեկան նպաստը, բայց ոչինչ չանել:

Այսպիսով, ընտանեկան նպաստի համակարգը հայաստանյան ընտանիքների մեծ մասին դարձող սոցիալական աշխատողների շահառու: Շատ ընտանիքների հետ էլ սոցիալական աշխատողները սկսեցին աշխատել երեխաների կյանքում ծագած խնդիրների առնչությամբ՝ մանկալքություն, ընտանեկան բռնություններ, իրավունքների ոտնահարում, իրավախախտ վարք, հաշմանդամություն և այլն: Սոցիալական աշխատողների պրակտիկան վկայում է, որ սոցիալական հիմնախնդիրների լուծնան ընթացքում նրանք շատ հաճախ են գործ ունենում ընտանիքների հետ: Ցանկացած հիմնախնդիր լուծելիս, երբ շահառուն անհատն է, սոցիալական աշխատողը դիտարկում է նրա դեպքը միկրոմիջավայրի համատեքստում: Դրա հիմնական բաղադրիչը ընտանիքը և նրա բնակարանն է: Ցանախ այդտեղ են գտնվում հիմնախնդիրների արճատները և դրանց հաղթահարման համար անհրաժեշտ միջոցների մեծ մասը: Իզուր չէ այն պնդումը, որ անհատական սոցիալական աշխատանք իրականացնողը նաև ընտանեկան աշխատող է: Եթե ամերիկյան սոցիալական աշխատողներին առաջարկել են առանձնացնել շահառուների այն կարիքները, որոնց բավարարման նպատակով նրանք ծառայություններ են մատուցում, բակալավրի դիպլոմ ունեցողների 38,6 տոկոսը, իսկ մագիստրոսի դիպլոմ ունեցողների 45,1 տոկոսը նշել են ընտանիքի գործառումը որպես ամենահաճախ հանդիպող երեք կարիքներից մեկը<sup>9</sup>: Եթե Հայաստանի սոցիալական աշ-

<sup>9</sup> Steu Armando T. Morales, Bradford W. Sheafor. Social Work. A Profession of Many Faces. Boston, 1977, էջ 117:

խատողների շրջանում այսօր նման հարցում արվի, ապա համոզված ենք, որ ընտանիքը ավելի հաճախ կնշվի որպես նրանց աշխատանքի թիրախ: Դայաստանում սոցիալական աշխատողների ներգրավվածության տեսանկյունից երեխաների պաշտպանության ոլորտն ամենաներկայացուցչականն է՝ խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ, մարզպետարանների՝ ընտանիքների, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ, երեխաների խնամքի հաստատություններ, մերառական դպրոցներ, համայնքային ծառայություններ, միջազգային և տեղական կառույցներ և այլն: Նաև սոցիալական աշխատողների ակտիվ միջամտությամբ է պայմանավորված պաշտպանության այսպիսի ցանցի ձևավորումը: Նրանց գործունեությունը ոլորտում հանգեցրեց արմատական բարեփոխումների. նախաձեռնվեցին մանկալքության կանխարգելման, հաստատությունների բեռնաթափման, խնամատար ընտանիքների ստեղծման, հաստատություններում երեխաների խնամքի նվազագույն չափորոշիչների ներդրման, մանկատան շրջանավարտների, ներառական կրթության կազմակերպման և այլ ծրագրեր, որոնց իրականացումը խոստանում է ավելի պաշտպանված դարձնել երեխաներին, բարենպաստ պայմաններ ապահովել նրանց լիարժեք խնամքի և սոցիալականացման համար: Նշված բոլոր ծրագրերում ընտանիքը սոցիալական աշխատողների գործունեության հիմնական միջավայրն է: Նրանց միջամտության հիմնական չափանիշը երեխայի լավագույն շահի ապահովումն է, որը բոլորովին նոր պատկերացում է բերում հայաստանյան սոցիալական մշակույթը: Այդ շահի ապահովումը և ընդհանրապես երեխաների իրավունքների պաշտպանությունը սոցիալական աշխատողներին ստիպում և ստիպելու են հակառակել ընտանիքներում իշխող ավանդական շատ պատկերացումների, փոխել ընտանիքի պատկերացումները երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ, վերանայել ծնողավարման իրենց գիտելիքներն ու հմտությունները: «Ծնողավարությունը» մի հասկացություն է, որով բնութագրվում է ծնողների համապատասխան հմտությունների մակարդակը, և երբ դա ցածր է ընտանիքում, այն երեխաների խնամքի ու սոցիալականացման տեսանկյունից դառնում է ռիսկային: Սոցիալական աշխատանքը գալիս է փոխելու ընտանիքի ինստիտուցիոնալ մշակույթը: Այն բերում է ժողովրդավարության և իրավունքների մասին իր պատկերացումները, փորձում է իրական իրավահավասարություն հաստատել կանանց և տղանարդկանց միջև, ընտանիքը դարձնել էգալիտար: Սոցիալական աշխատողը երեխային դիտում է որպես անձ և փորձում է պաշտպանել նրա իրավունքները սկսած ներարգանդային զարգացման շրջանից: Սոցիալական աշխատողներն ամեն ինչ անում են՝ պաշտպանելու երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը և տեղավորումը հաստատությունում դիտում խնամքի կազմակերպման ծայրահեղ միջոց, երբ այլ ընտրանքները բացառվում են<sup>10</sup>: Նրանք փորձում են ընտանիքից դուրս բերել սահմանափակ կարողություններով մարդկանց ու ներառել հասա-

<sup>10</sup> Տե՛ս Մ. Անտոնյան, Ա. Գյուլը-Կարապետյան, Ն. Դուրյան, Ա. Խաչատրյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Սարգսյան, Երեխաների պաշտպանություն: Ուսումնաօժանդակ ձեռնարկ Երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար, Եր., 2009, էջ 221:

րակություն՝ դրա համար աշխատանք տանելով ընտանիքում և նրանից դուրս, միջավայրը հարմարեցնելով իրենց շահառուների կարիքներին: Սոցիալական աշխատողները հոգում են ընտանիքում տարեցների պաշտպանվածությունը, փորձում կանխել նրանց սոցիալական մեկուսացումը:

Սոցիալական աշխատողներն իրենց միջամտությամբ փորձում են բարելավել ընտանեկան միկրոկլիման, նպաստել կոնֆլիկտների կարգավորմանը, իսկ եթե ամուսինների միջև տարածայնություններն անհաշտելի են, ապա կազմակերպել նրանց քաղաքակիրք բաժանումը և երեխաների շահերի պաշտպանությունը, եթե դրանք կան: Բոլոր դեպքերում սոցիալական աշխատանքն ընտանիքում հանգեցնում է վերջինիս ուժեղացմանը, նրա գործառական կարողությունների մեծացմանը: Սոցիալական աշխատանքն ընտանիքի ինստիտուտի գործառումը դարձնում է ավելի թափանցիկ ու կանխատեսելի, ավելի բաց պետության միջամտությունների համար: Ոմանք կասեն, որ դա կարող է հանգեցնել ընտանիքի կողմից իր պարտավորությունների հանդեպ պատասխանատվության թուլացմանը, սակայն չպետք է մոռանալ, որ ընտանիքը նախ և առաջ սոցիալական ինստիտուտ է և ստեղծված է հասարակությանը ծառայելու համար: Սոցիալական աշխատանքի հետագա զարգացումն անխուսափելիորեն հանգեցնելու է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում սոցիալական աշխատողների լիազորությունների մեծացմանը: Ինչպես եվրոպական շատ երկրներում, Հայաստանում նույնպես սոցիալական աշխատողներն իրավունք կստանան ներխուժելու ընտանիքի տարածք, երբ երեխայի իրավունքները վտանգված են, և ընտանեկան միջավայրը նրա հետագա կյանքի համար դարձել է վտանգավոր: Եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում սոցիալական աշխատողները հաճախ են երեխաներին բաժանում հարազատ ծնողներից, երբ վերջիններս դրսևորում են երեխաների շահերին անհամատեղելի վարքագիծ՝ թնրամոլություն, հարբեցողություն, բռնություններ և այլն: Իսկ Հայաստանում երկար քննարկումներից հետո դեռևս չի ընդունվել ընտանեկան բռնության մասին հայեցակարգը, որը խոստանում է ավելի պաշտպանված դարձնել երեխաներին և ընտանիքի մյուս անդամներին համապատասխան իրավիճակներում:

Այսպիսով, ընդհանրացնելով կարող ենք ասել, որ սոցիալական աշխատանք մասնագիտության ներդրումը և զարգացումը Հայաստանում նպաստում են ընտանիքի ինստիտուտի գործառական կարողությունների մեծացմանը: Սասնագիտական լուծում են ստանում նրան անհանգստացնող սոցիալական բազմաթիվ հիմնախնդիրներ, ուստի ընտանեկան միջավայրը նրա անդամների համար դառնում է ավելի անվտանգ, ապահով ու բարենպաստ, իսկ ընտանիքը՝ ավելի դեմոկրատական ու բաց մասնագիտական միջամտությունների համար:

**Բանալի բառեր** – ընտանիք, աղքատություն, գործազրկություն, միզրացիա, սոցիալական աշխատանք, միջամտություն, սոցիալական մշակույթ

**АРТАК ХАЧАТРЯН – Социальная работа и институт семьи в постсоветской Армении.** – В статье рассматривается функционирование института семьи в современном армянском обществе. Как факторы, снижающие функцио-

нальные возможности семьи, отмечаются безработица, бедность, миграция, в свою очередь порождающие множество социальных проблем. Это безнадзорность детей, конфликтность и насилие в семье, ущемление прав её социально уязвимых членов. С появлением профессиональных социальных работников семья становится основным объектом их воздействия. В результате институт семьи в Армении претерпевает серьёзные изменения. Сегодняшняя семья более открыта вмешательству специалистов, а семейная среда приобретает более безопасную и благоприятную для жизни атмосферу.

**Ключевые слова:** семья, безработица, бедность, миграция, социальная работа, интервенция(вмешательство), социальная культура

**ARTAK KHACHATRYAN – Social Work and Family Institution in Post-Soviet Armenia.** – The problems of functioning of the Family Institution in Post-Soviet Armenia are being discussed in this article. Factors decreasing the functional capacities of the Family are being distinguished by many social problems: the neglect of children and their appearance in institutions; conflicts and violence in the Family, violation of the rights of socially vulnerable members of the Family. With implementation of the Social Work profession, the Family is becoming the main target of its intervention. As a result of interventions of social workers, the Family Institution in Armenia undergoes many changes. It is becoming more democratic and open before the intervention of professionals. Family Environment is becoming safer and more favourable for the life of family members.

**Key words:** *family, unemployment, poverty, migration, social work, intervention, social culture*

# **ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

---

## **ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԱՊԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

**Հասարակական-տնտեսական զարգացումը որպես ամբողջական արդյունք՝ տնտեսական բաղադրիչն այդ համատեքստում:** Երկրների զարգացման մակարդակի և որակական առանձնահատկությունների վերաբերյալ առավել ամբողջական և օբյեկտիվ գնահատական տալու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ է հասարակական և տնտեսական զարգացումները դիտարկել որպես մեկ միասնական ամբողջություն։

Հասարակական-տնտեսական զարգացումը բազմաշերտ և համալիր գործընթաց է։ Այն ընդգրկում է քաղաքական, տնտեսական և սոցիալական ամբողջ համակարգերի տեղաշարժը՝ արտացոլված ոչ միայն տեղական, այլ նաև համաշխարհային զարգացումների համատեքստում։ Զարգացման գործընթացը տեղի է ունենում բավական բարդ միջավայրում՝ պայմանավորված ինչպես տնտեսական, այնպես էլ արտատնտեսական գործոններով, մասնավորապես՝ քաղաքական (ներքին և արտաքին), բնական, սոցիալական, տեխնոլոգիական, ինստիտուցիոնալ, ժողովրդագրական, մշակութային, ազգային-հոգեբանական և այլ ազդեցություններով։ Այստեղ տնտեսական համակարգը, որպես հասարակական համակարգի առանձին կարևոր բաղկացուցիչ, չի կարող դիտարկվել այդ փոխազդեցություններից դուրս՝ որպես ինքնուրույն գործող համակարգ և զարգացման առանձին սուբյեկտ։ Սա նշանակում է, որ հասարակական-տնտեսական զարգացման որակական բնութագրերը մեծապես պայմանավորված են հասարակության ու տնտեսության տիպային հատկանիշներով և դրանց փոխազդեցություններով։ Մի դեպքում դրանք կարող են նպաստել երկարաժամկետ կայուն զարգացմանը, մեկ այլ դեպքում՝ խոչընդոտել։ Այս առումով շատ կարևոր է ճիշտ գնահատել, թե որ տիպի հասարակությունը և տնտեսական համակարգն են առավել նպատակահարմար՝ զարգացում ապահովող տնտեսական աճի առումով։

Տեսարանները և քաղաքականություն իրականացնողները տնտեսական աճը երկար ժամանակ դիտել են հասարակական-տնտեսական զարգացման հենք և կարևոր գերակայություն։ Պատմական որոշակի ժամանակահատվածում դա ընթացել է հենց այդ ձևով։ Տնտեսական աճը մշտապես ուղեկցվել է կայուն տնտեսական զարգացմանը։ Այնուամենայնիվ, աստիճանաբար սպառելով զարգացման հնարավորությունները, տնտեսական աճը ոչ միայն չի ապահովել համարժեք զարգացում, այլև երեմն հանգեցրել է հետընթացի՝ արտահայտված տարածաշրջանային անհավասար զարգացածության, եկամուտների ու հարստության անհա-

վասար բաշխվածության և սոցիալական ծայրահեղ բևեռվածության, աղքատության աճի, միջին խավի բացակայության և այլ ձևերով։ Այստեղ բավական խոսուն են ժամանակակից տեսաբանների առաջ քաշած հարցադրումները և մոտեցումները։ Մտահոգությանը, թե «...դժվար է պարզել՝ ո՞ւր է ընթանում աճի տեսությունը»<sup>1</sup>, տրվում է բավական հետաքրքիր մեկնարանություն։ «...Տնտեսական աճի տեսության հեղինակները չեն կարող հավակնել ստեղծելու համընդգրկուն և համընդհանուր տեսություն։ Ակնհայտ է, որ տնտեսական աճը չափազանց բարդ երևույթ է։ Եվ տնտեսական աճի տեսությունը պետք է հաշվի առնի ինչպես բնական ռեսուրսները, ինստիտուտները և օրենքները, այնպես էլ հոգեբանական և սոցիալական բազմաթիվ գործոններ։ Յամընդգրկուն տեսության մշակումը համարյա անհրագործելի խնդիր է»<sup>2</sup>։ Այսինքն՝ «...տնտեսական աճը չի կարող լինել շարունակական երկարաժամկետ գործընթաց»<sup>3</sup>, ինչը նշանակում է, որ պետք է ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը և ճկունորեն «...հարմարվել նոր տնտեսական իրականությանը»<sup>4</sup>։ Այսպիսով, կարելի է փաստել, որ զարգացումն ունի ավելի տարրողունակ, բազմաշերտ ու խորքային բովանդակություն, քան տնտեսական աճը։ Այս տեսակետից անհրաժեշտ է զարգացման հետ շաղկապելով նպատակադրումը, իսկ տնտեսական աճի հետ՝ դրանց իրագործումը՝ զարգացումը և տնտեսական աճը դիտարկել «նպատակ-միջոց» փոխհարաբերության մեջ։ Դրա արդյունավետ իրագործումը կախված է բոլոր այն նեխանիզմների գործողություններից, որոնք կոչված են տնտեսական աճով ձեռք բերված արդյունքները ծառայեցնելու զարգացման նպատակներին։ Այս տեսակետից տնտեսական աճը զարգացման միակ ուղին և պարտադիր նախադրյալը չէ։ Զարգացումը որոշակի պայմաններում կարող է տեղի ունենալ նաև գաղափարախոսական և արժեհամակարգային արդիականացման, կառուցվածքային փոփոխությունների, սոցիալական բարելավումների, ինստիտուցիոնալ բարեփոխումների և այլ ձևերով։ Յիմնական շեշտը դնելով կյանքի որակի բարելավման վրա՝ հարկ է աճի բոլոր փուլերի համար արդյունավետուն համադրել տնտեսական աճի որակի բաղադրիչները։

- տնտեսական աճի աղբյուրների, ռեսուրսային նախադրյալների կամ ապահովվածության աստիճանը, ինչպես նաև դրա վրա ուղղակիորեն ազդող գործոնների որակական բնութագրիչները և դրանց դիմամիկան (ձեռնարկատիրական, տեխնոլոգիական, արտադրական, աշխատանքային, մարդկային գործոններ),
- տնտեսավարման բարենպաստ պայմանների ապահովում (ձեռնարկատիրական, ներդրումային, աշխատանքային և այլն),
- կառուցվածքային վերափոխումներ (գաղափարախոսական, տարածաշրջանային, ճյուղային, արտադրական, սոցիալական, շուկայական, ինստիտուցիոնալ, ենթակառուցվածքային և այլն),

<sup>1</sup> Solow R. Towards a Macroeconomics of the Medium Run//Journal of Economic Perspectives, 2000, № 1, p. 153.

<sup>2</sup> Сафрончук М. В. Курс экономической теории. Киров, 2004, с. 635.

<sup>3</sup> Gordon R. Is US Economic Growth Over? Faltering Innovation Confronts the Six Headwinds. NBER Working Paper № 18315, August 2012, p. 3.

<sup>4</sup> Heinberg R. The End of Growth: Adapting to Our New Economic Reality. New Society Publishers, Original edition, 2011, p. 125.

- թողարկվող վերջնական բարիքների որակը և այդ որակի բարելավման դինամիկան,
- տնտեսական աճի ու սոցիալ-տնտեսական արդյունավետության դինամիկան բնութագրող ցուցանիշներ (տեմպերի մեծությունը և փոփոխությունը, կայունությունը, մրցակցությունը և այլն):

Տնտեսական աճի որակի բարդութիչները բազմաբնույթ են՝ արտահայտված ուղղակի և հետադարձ բարդ փոխազդեցություններով: Այդ բաղադրիչները կարող են միաժամանակ հանդես գալ նաև որպես չափանիշ, և/կամ դրանցից կարելի է բնեցնել գարգացման համապատասխան պայմաններ:

Հասարակական-տնտեսական գործընթացները, գտնվելով մշտական շարժման մեջ, ուղեկցվում են քանակական ու որակական անընդհատ փոփոխություններով, որոնք էլ հենց պայմանավորում են երկրի զարգացման հնարավորությունները և տնտեսական աճի պայմանները՝ կրթված և որակավորված աշխատուժի առկայությունը, տնտեսության օպտիմալ կառուցվածքը, ենթակառուցվածքների զարգացումը, ինստիտուցիոնալ հենքը, բնական ռեսուրսներով ապահովվածությունը, տնտեսական ինքնուրունությունը և այլն: Այսինքն՝ երկրի ներդրումային ներուժի զարգացման մակարդակը և տնտեսական աճը (արդյունքները) ազդում են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) և նրա բաղադրիչների քանակական ավելացման ու որակական կատարելագործման վրա երկրի ներուժի և իրական ազգային համախառն արտադրանքի (ԱՀԱ) ավելացման ձևով: Այս տեսակետից կարելի է ասել, որ տնտեսական աճի կարևորագույն բնութագրիչներն են.

• **Երկրի տնտեսական ներուժը**, որը կազմում է տվյալ երկրի նյութական բարիքների արտադրության առավելագույն հնարավոր ծավալը: Այն առանձին ժամանակաշրջաններում կարող է ամբողջ հզորությամբ չօգտագործվել՝ մնալով առկա արտադրական հնարավորություններից ցածր (նման իրավիճակն առանձնապես բնորոշ է ճգնաժամային ժամանակահատվածներին),

• **Երկրի տնտեսական հզորությունը** բնութագրվում է նյութական բարիքների արտադրության ծավալով, որի հիմնական ցուցանիշներն են համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և ազգային եկամուտը (ԱԵ): Այն, ի տարբերություն տնտեսական ներուժի, ցույց է տալիս տնտեսության իրական վիճակը,

• **Երկրի տնտեսական զարգացման մակարդակը** որոշվում է բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով և/կամ ԱԵ-ով և արտացոլում է՝

- յուրաքանչյուր մարդու և ամբողջ հասարակության կյանքի մակարդակն ու որակը,

- բնակչության մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի և ազգային եկամտի ծավալի ավելացումը,

- ազգային տնտեսության կառուցվածքային զարգացումը,

- երկրի մրցունակության բարելավումը,

- երկրի ներուժի ու հզորության ավելի ամբողջական օգտագործումը և այլն:

Տնտեսական աճի արդյունքները դրսևորվում են աշխատանքի արտադրողականության մակարդակում, ՀԱԱ և ԱԵ աճի տեմպերում, բնակ-

չության կյանքի մակարդակում ու պահանջարկների բավարարվածության աստիճանում<sup>5</sup>:

Յաշվի առնելով, որ տնտեսական աճի պայմանները բխում են տվյալ երկրի տնտեսական իրողությունից և կարող են շատ տարբեր լինել երկրից երկիր, որպես զարգացման ռազմավարության ելակետ պետք է լինեն տնտեսական աճի ներուժի ստեղծման և իրացման համար պահանջվող միջավայրի ձևավորումը և անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը և այդ հենքի վրա տնտեսական աճի որակական չափանիշների հստակեցումը: Այդպես է եղել 1929-33 թթ. ճգնաժամից հետո, երբ փոխվեցին տնտեսական զարգացման չափորոշիչները և դասական տնտեսագիտական մտածելակերպն իր տեղը զիջեց քեյնսականությանը: Այդպես եղավ 1970-ականներն, երբ լճացումը (ստագֆյացիան) հանգեցրեց նորազատական գաղափարախոսության ձևավորմանը: Այդպես է նաև այսօր՝ պայմանավորված 2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամով, որի պայմաններում տնտեսական զարգացման հենքային չափորոշիչների և տնտեսագիտական բազային նոտեցումների վերանայման ամփոփությունը դարձել է օրակարգային հրատապ խնդիր:

**Հասարակական-տնտեսական զարգացման տրամաբանության և հայեցակարգային մոտեցումների արդի առանձնահատկությունները:** Ժամանակի հետ փոխվում են թե՛ զարգացման բովանդակությունը, թե՛ զարգացման վերաբերյալ պատկերացումները: Այս երևույթն արտացոլվում է ոչ միայն տեսագործնական աշխատանքներում և երկրներում իրականացվող քաղաքականության մեջ, այլ նաև հանրության լայն շրջանակներում: Փոփոխությունների այս գործընթացն ուղղորդելու և կազմակերպելու նպատակով կարևոր է լուսումնասիրել իրական կյանքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումները և այդ հենքի վրա փորձել հստակեցնել հասարակական-տնտեսական զարգացման արդի առանձնահատկություններից բխող նոր ուղենիշերը: Այստեղ խոսքը ցանկալի հասարակության ու տնտեսության բնութագրերի հստակեցման և դրանց հասնելու ուղիների մասին է: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել, որ բարեհաջող զարգացման քաղաքականությունը ենթադրում է տնտեսական փոփոխության և այդ շրջանակներում տեղ գտած երևույթների ճիշտ ու ժամանակին գնահատում: Ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ, ի հեճուկս որոշ տեսաբանների և քաղաքականություն իրականացնողների, «տնտեսական պարբերաշրջան» երևույթը շարունակում է գոյություն ունենալ, և ճգնաժամների պարբերաբար կրկնվելը օբյեկտիվ օրինաչափություն է: Ասվածը պայմանավորված է այն փաստով, որ իրական տնտեսությունը չի կարող մշտապես հավասարակշռության վիճակում լինել, որ զարգացած և զարգացող երկրները, գտնվելով անհավասար պայմաններում, նպաստում են զարգացման տարաբնույթ անհավասարակշռություն-

<sup>5</sup> Պատմանշակութային, աշխարհատնտեսական, աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական պայմանների բազմազանությունը և այդ հենքի վրա երկրի ներդրումային ներուժի տարաբնույթ համակցությունները հնարավորություն չեն տալիս տնտեսական զարգացումը գնահատելու մեկ ընդհանուր ցուցանիշով: Յաշվի առնելով ասվածը, ինչպես նաև ենելով քննարկվող խնդիրների նախապատվություններից՝ աշխատանքում օգտագործվում է «հասարակական-տնտեսական զարգացում» եզրը:

ների առաջացմանը, որ ազգային տնտեսությունները, զարգանալով խիստ անհամաչափ, պարբերաբար հայտնվում են ծայրահեղ բներացված սոցիալական վիճակում և այլն: Հասարակական-տնտեսական զարգացումների արդի դրսնորումները հանգեցնել են արմատական վերափոխումների անհրաժեշտության, ինչը ենթադրում է տեսամեթոդական և գործնական լուրջ փոփոխություններ՝<sup>6</sup>: Պատահական չէ, որ աշխարհին այսօր հասարակական-տնտեսական զարգացման նոր ուղիների և հայեցակարգային նոր մոտեցումների փնտրութիւնների մեջ է:

**Տնտեսական զարգացումը և սոցիալական կապիտալը:** Հասարակական-տնտեսական զարգացման բնույթը, տնտեսական աճի որակական չափորոշիչները և զարգացման բնութագրերն անմիջականորեն պայմանավորված են հասարակության ու տնտեսական համակարգերի բովանդակային առանձնահատկություններով: Զարգացման ռազմավարական հենքի և ուղենիշային գերակայությունների ճիշտ ընտրությունն առաջին հերթին պայմանավորված է կոնկրետ ժամանակաշրջանին բնորոշ արժեքային համակարգով և զարգացման այն շարժառիթներով, որոնց ձգտում է տվյալ հասարակությունը: Հատկանշական է, որ հասարակական-տնտեսական հայեցակարգային զարգացումների ներքո, տնտեսականից զատ, կարևորվում են նաև արտատնտեսական գործոնները: Եթե դասական տնտեսագետների համոզմամբ՝ տնտեսական աճ ապահովող հենքային գործոններ էին հողը, աշխատանքը և ֆիզիկական կապիտալը, ապա տնտեսական աճի և զարգացման վերաբերյալ պատկերացումների փոփոխության հետևանքով ընդլայնվեց նաև այդ գործոնների ցանկը: Օրինակ, Բերերը, առաջադրելով այն գաղափարը, որ մարդկային գործունեությունը չի սահմանափակվում միայն տնտեսական ոլորտով, իսկ հասարակական հարաբերությունները՝ զուտ արտադրամիջոցների սեփականատերերի և վարձու աշխատողների դասակարգային պայքարի դրսնորումներով, հիմնավորեց մարքայան մոտեցման մասնակիությունը: Բուրդեն նույնպես մարդուն տեսնում է ոչ միայն որպես տնտեսական, այլ նաև քաղաքական, գիտական, մշակութային գործունեության ակտիվ մասնակից, ուստի շրջանառության մեջ դնելով «մշակութային կապիտալ» հասկացությունը՝ հիմնավորեց զարգացման գործուն դրա կարևորությունը: Նրա համոզմամբ՝ «մշակութային կապիտալ հասկացությունն ընդգրկում է հասարակության վերնախավի այն առավելությունները (գեղագիտական արժեքներ, մարդկանց հետ համագործակցելու ունակություններ, ուսման մեջ բարձր արդյունքներ ձեռք բերելու շահագրգռվածություն), որոնք վերջիններս փոխանցելով իրենց երեխաներին՝ կարող են նպաստել նրանց սոցիալական առաջընթացին»<sup>7</sup>: Ընդունելով այս մոտեցման սահմանափակությունը, որը կարևորում էր միայն վերնախավի վերարտադրության խնդիրը, հետագայում սոցիալական կապիտալն ընդլայնվեց որպես «... նորմերի, կանոնների, կապերի ամբողջություն, որը ձևավորվում է անհատների փոխգործումնեության շնորհիվ և հիմնված է վստահության վրա. սոցիա-

<sup>6</sup> Տե՛ս Ա. Սարիբեկյան, Ֆինանսատնտեսական ճգնաժամը. հաղթահարման ուղիները և հետզգնաժամային զարգացումները, Եր., 2010, էջ 311:

<sup>7</sup> **Бурдье П.** Социальное пространство и генезис классов. Социология политики. М., 1993, с. 48.

լական կապիտալը, ձևավորելով սոցիալական ցանցեր, թույլ է տալիս ակտիվներն ու տեղեկատվությունը փոխանակել ավելի արագ և ավելի փոքր գործարքային (տրամսակցիոն) ծախսերով»<sup>8</sup>: Իհարկե, «սոցիալական կապիտալ» երևույթին անուղղակի անդրադարձել են դեռևս Ա. Սմիթը, Կ. Մարքսը, Կ. Մենգերը և ուրիշներ: Այնուամենայնիվ, «սոցիալական կապիտալ» եզրույթը գիտական շրջանառության մեջ է մտել նախորդ դարի վարժունականների վերջին, որը դիտվեց որպես «մարդկանց սոցիալական փոխներգործություն՝ ընտանիքի և համայնքի շրջանակներում»<sup>9</sup>: Այնուհետև այն ավելի մեծ ուշադրության է արժանացել ուրսունականներին տնտեսական զարգացման սոցիոլոգիայի համատեքստում, մասնավորապես՝ ձեռնարկատիրության (միկրոնակարդակ) և հասարակություն-պետություն հարաբերության (մակրոնակարդակ) շրջանակներում, որտեղ սոցիալական կապիտալը դիտվել է հայեցակարգային կարևոր բաղադրիչ: Այստեղ տնտեսագիտության և սոցիոլոգիայի համատեղման հիմք են հանդիսացել երկու կարևոր՝ «ներգրավվածություն» (սիներգիա) և «ինքնավարություն» (փոխկապվածություն) հայեցակարգային բաղադրիչները՝ որպես մակրո- և միկրոնակարդակներում սոցիալական արդյունավետ փոխհարաբերության երաշխիքներ:

«Սոցիալական կապիտալ» երևույթը, ենթարկվելով որոշակի փոփոխությունների, այսօր բավական ամբողջական բնույթ է կրում: Այն մի կողմից դիտվում է որպես «նորմերի» և «կապերի» համադրություն, մյուս կողմից՝ որպես «բարոյական ռեսուրս կամ մշակութային մեխանիզմ»: «Նոր տնտեսական սոցիոլոգիայի» շրջանակներում էլ ավելի կարևորվեց սոցիալական կապիտալի դերը՝ որպես համատեղ շահույթին ուղղված՝ կոլեկտիվ գործողությունը խթանող սոցիալական նորմեր և ցանցեր: Նման մոտեցման կողմնակից է Ռոբերտ Փարենեմը, որը տնտեսական զարգացման տեսության և քաղաքականության նախադրյալների ապահովման համար առանձնապես կարևորում է սոցիալական կապիտալի ձևավորման, վերարտադրման և իրացման գործընթացը՝ որպես վստահության պաշարի և ներդաշնակ համագործակցության անսպառ աղբյուր, պետություն-հասարակություն արդյունավետ համագործակցության գործուն միջոց և քաղաքացիական հասարակության կենսունակ հենք<sup>10</sup>: Նոր դասական տնտեսագետներ Թ. Շուլցը<sup>11</sup> և Յ. Բեքերը<sup>12</sup>, ներմուծելով սոցիալական կապիտալ հասկացությունը, հիմնական շեշտը դրեցին առողջ և կրթված հասարակության վրա՝ որպես մյուս գործոնների արդյունավետ իրացման գրավական: Նոր ազատականների կարծիքով, մեծ ներուժ ունեցող բաղաքացիական հասարակությունը կարող է ոչ միայն լինել առողջ հակաշիռ պետական քաղաքականությանը, այլև մեծապես նպաստել քաղաքացիների կազմակերպչական հմտությունների զարգացմանը:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 54:

<sup>9</sup> Hanifan L. J. The Rular School. Community Center//Annals of the American Academy of Political and Social Science, 1967, p. 138.

<sup>10</sup> Տե՛ս Ռ. Դեմիարդ, Հանրային կազմակերպության տեսություններ, չորրորդ հրատարակություն, Ռուսական և արևելանվլողական ուսումնասիրությունների կենտրոն, Արհանձնայի նահանգային համալսարան, Թեմփի-Երևան, 2006, էջ 237:

<sup>11</sup> Տե՛ս Shultz T. W. Investment in Human Capital, American Economic Review, № 51, էջ 16:

<sup>12</sup> Տե՛ս Becker G. Human Capital, University of Chikago Press, 1993, էջ 25:

Այսպիսով, գոյություն ունեն սոցիալական կապիտալի տարրեր ձևեր և բաղադրիչներ, մակարդակներ և չափորոշիչներ, ինչպես նաև տարրեր հնարավոր հետևանքներ՝ որպես այդ բազմազանության տարաբնույթ համադրությունների արդյունք: Նման զարգացումների շրջանակներում դիտարկվում են «սոցիալական կապիտալի» չորս հիմնական հայեցակարգային մոտեցումներ՝ *համայնքային* (դիտարկվում են տարրեր ակումբների և կազմակերպությունների անդամների միջև փոխհարաբերությունները և սոցիալական կապիտալ կուտակելու համայնքային հնարավորությունները), *ցանցային* (կարևորվում են մարդկանց միջև հորիզոնական և ուղղահայաց կապերը), *հնատիտուցիոնալ* (դիտարկվում է ֆորմալ հնատիտուցների ազդեցությունը սոցիալական տարրեր խնբերի ներսում սոցիալական կապիտալի կուտակման վրա) և *սիներգետիկ* (միավորում է ցանցային և հնատիտուցիոնալ հայեցակարգերը՝ որպես գործարարության, պետության և հասարակության արդյունավետ համագործակցության հիման վրա սոցիալական կապիտալի կուտակման աղբյուր): Զ. Կոուլմանի կարծիքով՝ «սոցիալական կապիտալ» հասկացությունը կարելի է բացահայտել ըստ անհատի ռացիոնալության ու վարքագծի նպատակայնության սկզբունքների, ինչը հնարավորություն է տալիս բացատրելու ոչ միայն անհատների, այլ նաև խնբերի սոցիալական վարքագիծը»<sup>13</sup>: Նրա կարծիքով՝ «սոցիալական կապիտալը» նույնքան արտադրողական է, որքան կապիտալի ցանկացած այլ տեսակ: Ավելին, այն թույլ է տալիս հասնելու այնպիսի արդյունքների, ինչպիսիք չեն կարող ապահովել մյուսները<sup>14</sup>: Մյուրդալը՝ որպես հնատիտուցիոնալ տնտեսագետ, զարգացունը դիտարկում է քաղաքական, սոցիալական և տնտեսական համակարգերի փոխազդեցության ներքո՝ համաշխարհային զարգացումների համատեքստում<sup>15</sup>: Վերջինս առանձնապես կարևոր է արդի գլոբալ զարգացումների պայմաններում:

**Հասարակություն-պետություն փոխհարաբերության արդի առանձնահատկությունները:** Հասարակական-տնտեսական զարգացման խնդիրների շրջանակներում առանձնապես կարևորվում է հասարակություն-պետություն փոխհարաբերության հարցը: Այն հիմնավորման և ուսումնասիրման կարիք ունի հասարակական-տնտեսական զարգացման յուրաքանչյուր կոնկրետ շրջափուլի համար՝ պայմանավորված կոնկրետ իրավիճակային առանձնահատկություններով և դրանցից բխող խնդիրներով: Տնտեսագիտության տեսության և հանրային կառավարման ոլորտի տեսաբաններն ու պրակտիկները<sup>16</sup>, մշտապես կարևորելով այս խնդիրները, անընդհատ անդրադարձել են և պետության ու քաղաքացիների փոխհարաբերության, և հասարակության առաջնորդության ու դեկավարման խնդիրներին՝ դրսնորելով տարաբնույթ, երբեմն հակասական մոտեցում-

<sup>13</sup> **Коулман Дж.** Капитал социальных и человеческих наук и современность, № 3, 2001, с. 131.

<sup>14</sup> Տես նոյն տեղը, էջ 135:

<sup>15</sup> Տես «Social Capital: Reviewing the Concept and its Policy Implications», Australia: Productivity Comission, 2003, էջ 5-23, 25-49:

<sup>16</sup> Տես «Social Capital and Economic Development: Toward a Theoretical Synthesis and Policy Framework, Theory and Society», 1997, էջ 139-177, «Social Kapital: Reviewing the Concept and its Policy Implications», Australia: Productivity Comission, 2003, էջ 25-49:

ներ: Շերիլ Քինգը և Կամիլա Ստայվերսը, բազմակողմանիորեն անդրադարձնալով քննարկման առարկա խնդիրներին, առաջ են քաշում այնպիսի լուծումներ, որոնք կարող են նպաստել քաղաքացիական հասարակության վրա պետության կենտրոնացմանը՝ որպես համագործակցության արդյունավետ ներուժ: Նրանք քաղաքացիների արձագանքման ավելի բարձր պատրաստակամության ու վստահության համապատասխան աճ են որոնում՝ պետական կառավարման համակարգում քաղաքացիական ներգրավածության ակտիվ ջանքերի շնորհիվ<sup>17</sup>: Նշված հարցերի վերաբերյալ հետաքրքր մոտեցումներ են դրսնորում Ոիչարդ Բոքսը, Զոն Բրայսոնը, Բարբարա Ֆրոսբը, Ոոբերտ Փաթնամը՝ հստակորեն ամրագրելով այն միտքը, որ ժողովրդավարական առումով առավել առողջ են այն կառավարությունները, որոնք աջակցություն են ստանում քաղաքացիական ակտիվ հասարակությունից<sup>18</sup>: Դասկանալի է նաև Շերիլ Քինգի և Կամիլա Ստայվերսի մտավախությունն առ այն, որ «հասարակության ներգրավածությունը չպետք է դիտվի անհատների կյանքի էական բարեփոխումների փոխհատուցում»<sup>19</sup>: Այս տեսակետից առանձնապես հետաքրքր է Պիտեր Դե Լեոնի այն միտքը, թե հանրային քաղաքական գիտությունները հեռացել են ժողովրդավարական գործընթացներին աջակցելու իրենց սկզբնական նպատակից և գուցե նույնիսկ նպաստել են ժողովրդավարության անկմանը<sup>20</sup>: Պետության և հասարակության, կառավարիչների ու քաղաքացիների միջև հարաբերությունները միավորվում են Թերոի Կուպերի նոտեցումներում: Նա գտնում է, որ քաղաքացիական հասարակությունը ներառում է ոչ միայն իրավունքներ, այլ նաև պարտականություններ, ինչով պայմանավորված քաղաքացիության բարոյական հիմքը դառնում է հենք հանրային կառավարողի բարոյական կեցվածքի համար<sup>21</sup>: Ուշագրավ են նաև դիտարկված հարցերի իրական դրսնորումները: Ոոբերտ Դենիհարդը նշում է. «Իրական կյանքում կատարվել են քաղաքացիական ներգրավվածության խթանման բազմաթիվ փորձեր՝ ուղղված ինչպես պատասխանատու քաղաքացիական հասարակության, այնպես էլ արդյունավետ պետական կառավարման համակարգի ձևավորմանը»<sup>22</sup>, որի ժամանակ մի կողմից պատասխանատու կառավարումը սերտորեն համագործակցում է մարդկանց հետ, մյուս կողմից պատասխանատու քաղաքացիություն աջակցում է հանրային կառավարմանը՝ առավելագույն նպաստելով ավանդականից դեպի ժողովրդավարական կառավարման համակարգին անցմանը: Ըստ Ոոբերտ Փաթնամի՝ «...վերջերս տեղի է ունեցել քաղաքացիական ներգրավվածության էական նվազում՝ հանգեցնելով հասարակական կապիտալի անկմանը, հետևաբար նաև՝ հանրային կյանքի վատացմանը»<sup>23</sup>:

<sup>17</sup> Տե՛ս «Social Capital: Reviewing the Concept and its Policy Implications», Australia: Produktivity Comission, 2003, էջ 29:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 24-35:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 32:

<sup>20</sup> Տե՛ս Ռ. Դենիհարդ, նշվ. աշխ., էջ 32:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 238:

<sup>21</sup> Տե՛ս «Social Capital and Economic Development: Toward a Theoretical Synthesis and Policy Framework, Theory and Society», 1997, էջ 173:

<sup>22</sup> Ռ. Դենիհարդ, նշվ. աշխ., էջ 229:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 237:

Պետություն-հասարակություն համագործակցության և դրան առնչվող հարցերի, ինչպես նաև պետական միջամտության և տնտեսության վրա պետության ազդեցության չափի վերաբերյալ քննարկումները եղել են XX դարի երկրորդ կեսի առանցքային հիմնահարցերից մեկը: Այդ ուղղությամբ ուսումնասիրություններն այսօր ավելի են ակտիվացել՝ պայմանավորված հետզգնաժամային զարգացման ներկա շրջափուլային դրսուրումներով: Խնդիրն իսկապես արդիական է ամբողջ աշխարհում, մանավանդ՝ ազատական շուկայական հարաբերություններին անցած նորանկախ պետություններում, այդ թվում Հայաստանում, երբ հետանցումային ավելի քան քսան տարիների ընթացքում պետության և հասարակության դերի, ինչպես նաև պետություն-հասարակություն արդյունավետ համագործակցության կարևորության վերաբերյալ թեզը խիստ աղճատվել է և լրացուցիչ հետազոտության կարիք ունի: Երկրում շարունակվող հասարակական-տնտեսական վերափոխումների գործընթացն այսօր պահանջում է նոր հարաբերությունների և մոտեցումների անհրաժեշտություն, որտեղ հասարակական կարծիքի դերի բարձրացումը և երկրի կառավարման գործընթացներին հասարակության առավելագույն ներգրավածությունը խիստ օբյեկտիվ գործընթաց են: Այն հնարավորություն կտա, քատ եռթյան գնահատելով երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումները, ունենալ ակտիվ մասնակցություն երկրում տեղ գտած գործընթացներին: Այստեղ մի կողմից կարևորվում է պետական ինստիտուտների և պաշտոնատար անձանց գործունեության բափանցիկության մակարդակի բարձրացման, մյուս կողմից՝ հասարակության իրազեկվածության և կրթվածության մակարդակի բարձրացման ու քաղաքացիական հասարակության ծևավորման խնդիրները, որոնց նպատակային իրագործումը կարող է դառնալ հասարակություն-պետություն արդյունավետ համագործակցության գործուն երաշխիք:

**«Սոցիալական կապիտալի» դրսուրման առանձնահատկությունները անցումային տնտեսությամբ երկրներում:** Սոցիալական կապիտալի կուտակումը տեղի է ունենում միաժամանակ միկրո- և մակրոնակարդակներում: Դրանց անընդհատ փոխլրացման պայմաններում: «Պայմանավորված այդ մակարդակներում առկա խնդիրներով՝ անցումային երկրներում սոցիալական կապիտալը դեռևս ծևավորման փուլում է: Սոցիալական կապիտալի կուտակման գործընթացի դանդաղման հիմնական պատճառներից է ինստիտուցիոնալ անբավարար մակարդակը: Չնայած միկրոնակարդակում սոցիալական կապիտալի ծևավորման ու կուտակման վրա հիմնականում ազդում են ոչ ֆորմալ ինստիտուտները (մարդկանց, ընտանիքների, ընկերային, համայնքային և գործընկերային փոխհարաբերությունների շրջանակներում), այնուամենայնիվ «սոցիալական կապիտալ» կուտակելու ունակությունը ոչ թե անհատի, այլ սոցիալական կառուցվածքի հատկամիջ է: Այս տեսակետից առանձնապես կարևորվում է ֆորմալ ինստիտուտների դերը: Սոցիալական կապիտալը, մակրոնակարդակում հանդես գալով ֆորմալ ինստիտուտների (օրենսդիր և գործադիր իշխանություն, դատադիրական համակարգ, հասարակական կազմակերպություններ և այլն) ներքո, արտահայտվում է որպես հասարակա-

կան բարիք, քանի որ դրա ձևավորմանն առավելապես նպաստում է պետությունը, իսկ օգտվում է հասարակությունը: Բնականաբար, որքան մեծ է ինստիտուցիոնալ վստահությունը, այնքան հասարակությունում բարձր է բարոյահոգեբանական մթնոլորտը, ու կենսունակ է երկրի արժեհամակարգային հենքը, այնքան արդյունավետ է պետություն-հասարակություն համագործակցությունը, ու մեծ են հասարակական-տնտեսական զարգացման հնարավորությունները: Յակառակ դեպքում սոցիալական կապիտալը, հասարակության մեջ բաշխվելով անհավասարաչափ և կուտակվելով հիմնականում միկրոմիջավայրում ու այլ չքացահայտված կառույցներում, կարող է ձևախեղել սոցիալական կապիտալը մակրոմակարդակում՝ պատճառ դառնալով եկամուտների անհավասար բաշխվածության և սոցիալական ծայրահեղ շերտավորման, բարոյահոգեբանական անկման, արտահոսքի և այլն: Այսպիսով, մի կողմից որքան անարդյունավետ են տվյալ հասարակությունում գործող ինստիտուտները, այնքան մեծ է սոցիալական կապիտալի խզվածությունը միկրո- և մակրոմակարդակում, մյուս կողմից՝ այդ խզվածության հետևանքով ստեղծված իրավիճակը (ձեռներեցություն-իշխանություն սերտածում, կոռուպցիա, հարկերից խուսափում, համատարած անվստահություն և այլն) խանգարում է երկրների ինստիտուցիոնալ առողջացմանը: Նման իրավիճակը հիմնականում բնորոշ է բոլոր անցումային երկրներին, այդ թվում՝ Հայաստանին:

Սոցիալական կապիտալի ձևավորման ակունքները մարդու կենսաբանական ակունքներում են և պայմանավորված են սոցիալական կարգուկանոնի վերականգնման ներքին հզոր պահանջով, իրավացիորեն փաստում է Ֆրենսիս Ֆուկույաման<sup>24</sup>: Այս տեսակետից առանձնապես կարևոր է պետության դերը՝ ուղղված հասարակության բոլոր խավերի շահերի իրացմանը նպաստող գործունակ ինստիտուտների ստեղծմանը և դրանով իսկ հասարակության վստահության վերականգնմանը, պետություն-հասարակություն փոխհարաբերության արդյունավետության բարձրացմանը: Մրա իրագործման համար անհրաժեշտ է շատ կարևոր երկու նախապայման. պետությունը պետք է կարողանա ձերբագատվել հասարակության ներ խմբերի շահերի պաշտպանի պարտականություններից և կատարել ամբողջ հասարակության շահերի պաշտպանության իր գործառույթը, իսկ հասարակությունն էլ պետք է բավարար կրթված ու իրազեկված լինի՝ իր իրավասություններն ու պահանջներն իրագործելու համար: Այս կապակցությամբ որոշ տեսարաններ և փորձագետներ կարծում են, որ զարգացման գործում առաջնահերթությունը պատկանում է ոչ թե ինստիտուտներին, այլ մարդկային կապիտալին՝ ապացուցելով, որ «... մարդկային կապիտալը զարգացում ապահովող ավելի կարևոր գործոն է, քան ինստիտուտները: Իսկ ինստիտուտների կատարելագործումը տեղի է ունենում այն բանից հետո, եթե երկիրը հաղթահարում է աղքատությունը՝ շնորհիվ ծիշտ ընտրված քաղաքականության»<sup>25</sup>: Յատկանշական է, որ անցումային բոլոր երկրների, այդ թվում՝ Հայաստանի զարգացման այս

<sup>24</sup> Steu F. Social Capital and Civil Society. Washington, IMF, www.inf.org/external

<sup>25</sup> Глейзер Э. Являются ли институты причиной экономического роста? Эковест, Новосибирск, 2006, с. 282.

շրջափուլում առանցքային են «բնակչության որակի և գիտելիքի դերը», հասարակության ազգային արժեհամակարգի, ազգային ճիշտ մտածողության, կրթված մարդու դերը<sup>26</sup>: Այստեղ շատ կարևոր է այն հանգանանքը, որ մարդկային ռեսուրսը մի կողմից զարգացում իրագործող է, մյուս կողմից՝ այդ զարգացման արդյունքների կրող և հանրության ընդհանուր կենսապահովման և բարեկեցության բարձրացման հենք: Այս տեսակետից շարունակում է արդիական մնալ Մ. Թոդարոյի մոտեցումը, որը, առանցքային համարելով մարդկանց և կենսամակարդակի, և ինքնահարգանքի բարձրացումը, առանձնապես կարևորում է դրանք ապահովող ինստիտուտների, սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի դերը<sup>27</sup>:

**Հասարակական-տնտեսական արդի զարգացումները և մոտեցումները:** Տնտեսական խորը վերափոխումների արդի ժամանակահատվածում համաշխարհային տնտեսությունը բնութագրվում է որպես գլոբալ, բարդ և խիստ դինամիկ համակարգ՝ բազմամակարդակ և անհավասար զարգացման դրսնորումներով: Զարգացած երկրները, որտեղ բնակչում է աշխարհի բնակչության 15.6 %-ը, ապահովում են ՀՆԱ-ի 47%-ը և միջազգային առևտությունը 50%-ը: Երեք երկրներ՝ ԱՄՆ, ճապոնիա, Գերմանիա, որոնց բաժին է ընկնում աշխարհի բնակչության 8%-ը, կուտակում են համաշխարհային եկամտի մոտ կեսը<sup>28</sup>: Զարգացած երկրներում է կենտրոնացած աշխարհի տնտեսական և գիտատեխնիկական ներուժի մոտ 75%-ը<sup>29</sup>: Այստեղ հատուկ տեղ են զբաղեցնում զարգացող, մասնավորապես՝ անցումային երկրները, որոնցից շատերը դեռևս պահպանում են կախվածությունը զարգացած երկրներից:

Վերջին շրջանի գլոբալ բուռն զարգացումների շուրջ դատողությունները խիստ բազմաբնույթ են և հակասական: Մի կողմից՝ երկրներն այլև չեն կարող գոյատևել առանց մեկը մյուսի, և նրանցից ցանկացածի խնդիրը դաշնում է համընդհանուր, մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսությունը, հանդես գալով որպես մեկ համընդհանուր քաղաքատնտեսական մշակույթի բարդ համակարգ, մեծացնում է հակասությունը տնտեսության գլոբալ և տեղական (լոկալ) մակարդակների միջև:

Գլոբալ զարգացումների ներկա փուլի կարևորագույն առանձնահատկություններից է նյութական արտադրության ոլորտից դեպի գիտատար և բարձր տեխնոլոգիաների ոլորտ կատարվող անցումը, ինչը որոշիչ ազդեցություն է բողնում հասարակական կեցության (ինչպես զուտ տնտեսական, այնպես էլ սոցիալական, էկոլոգիական, ժողովրդագրական և այլն) վերափոխումների վրա: Գործունեության տվյալ ձևը զարգացած շատ երկրներում այսօր արդեն ընդգրկում է աշխատունակ բնակչության գրեթե 65%-ը<sup>30</sup> և ունի աճելու միտում՝ ՀՆԱ-ում անընդհատ մեծաց-

<sup>26</sup> Տե՛ս Theodore W. Schultz-Prize Lecture: The Economics of Being Poor. Nobel Media AB 2013. Web. 19 Aug. 2013, [http://www.nobel\\_prize/economic](http://www.nobel_prize/economic)

<sup>27</sup> Տե՛ս Todaro M. Economic Development, Addison-Wesley Publishing Company, W., 1996, 6-st ed., էջ 685:

<sup>28</sup> Տե՛ս The Global Competitiveness Report, 2008-2009, World Economic Forum, Geneva, 2008, էջ 359:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 360, 485:

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղը:

նելով տեղեկատվական տնտեսության ոլորտի մասնաբաժինը: Լավ տեղեկացված լինելու շնորհիվ զարգացած երկրներից շատերը փոխել են իրենց սոցիալական նկարագիրը. առավել դիմանմիկ և արդյունավետ է դարձել տնտեսությունը, մեծացել են տնտեսության ճկունությունը և բազմազանեցումը (դիվերսիֆիկացումը), բարձրացել է կյանքի որակը: Միաժամանակ ուժեղացել է մրցակցությունը, և համաշխարհային գլոբալ տնտեսական շուկայում առաջացել են լրացուցիչ դժվարություններ, բարձրացել է տնտեսության համակենտրոնացման մակարդակը՝ ստեղծելով արդյունաբերական հսկաներ, արագացել են կապիտալի և աշխատանքի միջազգային միգրացիայի տեմպերը, ինչի հետևանքով տեղի են ունենում ֆինանսական լուրջ տեղաշարժեր՝ անկանխատեսելի հետևանքներով: Առավել, քան երբեմ, հրատապ են դարձել տնտեսական ու սոցիալական անվտանգության հիմնահարցերը: Այս ամենի պատճառով խիստ կարևորվում է արդյունքների նկատմամբ վերահսկողությունը: Ըստ այդմ՝ էլ ավելի է խորանում դերային նոր որակի վերաբաշխման և ուժային նոր բնույթի կենտրոնների ձևավորման գործընթացը: Մի խոսքով, աշխարհն այսօր դարձել է մի կողմից առավել հասանելի ու չափազանց դիմանմիկ, մյուս կողմից՝ խիստ անկանխատեսելի և անվերահսկելի: Գոյություն չունեն առաջնաթագի հստակ և համընդիմանուր կիրառելի բանաձևեր՝ պայմանավորված ինչպես երկրում ստեղծված հասարակական-տնտեսական հրավիճակով ու առկա խնդիրներով, այնպես էլ կյանքի որակի վերաբերյալ յուրաքանչյուր հասարակության ունեցած պատկերացումներով և գերակայություններով: Միաժամանակ, այստեղ ակնհայտ է մի քան. անհրաժեշտ է նոր գաղափար, նոր հայեցակարգային հենք, նոր մոտեցում:

Այն երկրները, որոնց հաջողվել է դուրս գալ կայուն աճի ուղի, գտել են համարժեք, մասնավորապես տնտեսական մոբիլիզացիոն մեխանիզմներ՝ խարսխված արդի գաղափարախոսական ուղենիշների և ազգային արժեհամակարգային հենքի վրա: Դա հնարավորություն է տվել առավելագույնս հավաքագրել և իրագործել սեփական ռեսուրսներն ու հնարավորությունները: Նման նոտեցումն առավել արդիական է և միաժամանակ բավականին բարդ անցումային տնտեսությամբ երկրներում, որտեղ տնտեսական, սոցիալական և քաղաքական վերափոխումների շարունակական գործընթացը պետք է ներդաշնակորեն համատեղվի հետճնաժամային քաղաքականությանը՝ անշուշտ հաշվի առնելով հետանցումային իրողությունների առանձնահատկությունները:

Քննարկված խնդիրները կենսական և արդիական են նաև Հայաստանի համար, որտեղ ճգնաժամը՝ իր սոցիալ-տնտեսական խոր հետևանքներով դառնալով լուրջ մարտահրավեր, այսօր գլոբալ զարգացումներից դուրս չմնալու հնարավորությունները վերագնահատելու կարևոր դաս է: Սա նախ և առաջ նշանակում է երկրում իրականացվող քաղաքականության գնահատում և անհրաժեշտ ճշգրտումների կատարում, իսկ ապա՝ զարգացման հստակ չափորոշիչների, սկզբունքների ու մոտեցումների մշակում և առաջնահերթությունների սահմանում: Առաջդրված հարցերի արդյունավետ լուծումների համար շատ կարևոր է զարգացման յուրաքանչյուր նոր փուլի համար ելքային պայմանների ճիշտ որոշումը: Սա էլ ավելի է կարևորվում այն առումով, որ նոր ելքային

պայմանները, դառնալով նոր հասարակական-տնտեսական համակարգի մուտք և դրվելով ռազմավարական նախագծային որոշման հիմքում, կարող են մեծապես կանխորոշել առաջընթացի բնույթը<sup>31</sup>:

Հայաստանում իրականացված հետանցումային առաջին սերնդի բարեփոխումները երկրորդ սերնդի բարեփոխումների համար ապահովեցին սոցիալ-տնտեսական զարգացման բավարար հիմքեր, որոնց առանցքում դրվեցին երկրի մրցունակության բարձրացումը, տնտեսության արդիականացումն ու զարգացած երկրների չափանիշներին հնարավորինս մոտեցումը: Այստեղ առանցքային է երկարաժամկետ կայուն զարգացման ուղղված համակարգային լուծումների առաջնահերթության որոշման հարցը: Հետճանաժամային վերջին զարգացումների հետևանքով իրատապ դարձան ռազմավարական և մարտավարական նոր մոտեցումների և դրանցից բխող զարգացման նոր գերակայությունների մշակման հարցերը:

Համաշխարհային տնտեսությունում Հայաստանի բարենպաստ դիրքավորման անհրաժեշտ կովանը երկրի տնտեսության մրցունակության բարձրացումն է՝ իրական հատվածում նորարարությունների ներդրման հնարավորությունների մեծացման, արտադրողականության բարձրացման և ավելացված արժեք ստեղծող աշխատատեղերի աճի, նորագույն արտադրությունների և տեխնոլոգիաների յուրացման միջոցով: Այստեղ կարևորվում են գիտական ներուժի նպատակային վերարտադրության, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի կազմակերպման հարցերը: Այդ ինաստով մարդկային կապիտալի զարգացման վրա է խարսխվելու արդիական տեխնոլոգիաների ներդրման ընդլայնումը՝ որպես նոր որակի մրցակցության և բիզնես վարելու առանցք: Գործընթացի կարևորագույն ելքը բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցումն ու ստեղծվող նոր արժեքի մեջ մարդկային գործոնի դերի մեծացումն է, բարձր մասնագիտացված և տեխնոլոգիատար վերջնական արդյունքների թողարկման ու արտահանման ծավալների ընդլայնումը: Այստեղ առանձնապես կարևորվում է տնտեսության բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններ ապահովելու հարցը: Տնտեսության իրական հատվածի արդիականացմանն ուղղված ներդրումների խրախուսման համար կարևոր է գործարար միջավայրի անընդհատ բարելավումը: Այս համատեքստում օրակարգային են ինստիտուցիոնալ հենքի առողջացման, ենթակառուցվածքների որակի բարձրացման, կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման, մակրոտնտեսական կայունության ապահովման հիմնահարցերը<sup>32</sup>.

Հայաստանի հասարակական-տնտեսական զարգացման արդի քաղաքականությունը պետք է որդեգրի ռեսուրսային սահմանափակության փոխհատուցման այնպիսի մոտեցումներ, որոնք կխրախուսեն հասարակության հնարավորինս ընդլայնված մասնակցությունը զարգացման գործընթացին, կխթանեն մարդկային կապիտալի հետևողական զարգացումը՝ որպես տնտեսական փոխակերպման առանցք և, օբյեկտիվ սահմանափա-

<sup>31</sup> Տե՛ս Ա. Սարիբեկյան, նշվ. աշխ., էջ 311:

<sup>32</sup> Տե՛ս Ա. Սարիբեկյան, նշվ. աշխ., էջ 199:

կումներից անկախ, մրցակցային առավելություններ ծևավորելու նախապայման, առավելագույնս կներդաշնակեցնեն ներքին ու արտաքին ռեսուրսների օգտագործման ուղղությունները զարգացման առաջնահերթություններին և դրանով իսկ կստեղծեն բարենպաստ միջավայր նախաձեռնողականության ու ձեռներեցության համար: Դասարակական-տնտեսական զարգացման քաղաքականության այս շրջանակում է, որ հնարավորությունների անընդհատ ընդլայննան ու կատարելագործման սիներգիկ ազդեցությունը կհանգեցնի հասարակական-տնտեսական առաջընթաց զարգացման:

**Բանալի բառեր – հասարակական-տնտեսական համակարգ, անցումային տնտեսություն, հետճամաժամային զարգացում, հայեցակարգային մոտեցումներ, ռազմավարական զարգացում, զարգացման գերակայություն, սոցիալական կապիտալ, մարդկային գործոն, գիտելիք, մշակութային կապիտալ**

**АМАЛИЯ САРИБЕКЯН – Современные особенности общественно-экономического развития.** – В исследованиях, посвящённых общественно-экономическому развитию, периодически пересматриваются его концептуальные основы, обусловленные вызовами времени. Текущий момент характеризуется поисками новых путей и концептуальных подходов. Примечательно, что в современных общественно-экономических концепциях на первый план, помимо экономических, выходят и внеэкономические факторы в форме социального капитала. Это означает, что государство в переходных странах, в том числе и Армении, должно поощрять широкое участие общества в процессе развития и стимулировать последовательное наращивание человеческого капитала, который представляет собой источник общественно-экономического развития.

**Ключевые слова:** общественно-экономическая система, переходная экономика, стратегическое развитие, приоритет развития, социальный капитал, человеческий фактор, культурный капитал

**AMALYA SARIBEKYAN – Peculiarities and Modern Problems of Socioeconomic Development: Theoretical and Practical Revelation.** – In wide-ranging theoretical and practical researches, devoted to the socioeconomic development, the conceptual bases of these developments are periodically reconsidered in connection with the new challenges of development. Nowadays, the world is in the search of new ways and new conceptual approaches. It is noteworthy to mention that the modern policy of socioeconomic development of all transition countries, among them being Armenia, must encourage the enlarged participation of the society in the development process and stimulate the successive development of human capital as a source of constant enlargement and improvement of the opportunities of socioeconomic development.

**Key words:** social-economic system, transition economy, post-crisis development, conceptual approaches, strategic development, development priority, social capital, human factor, knowledge, cultural capital

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԸ

### ՎՈԼՈՂՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տնտեսական աճը հասարակության և տնտեսության զարգացման գլխավոր ցուցանիշն է: Այն նիաժամանակ պետության տնտեսական գործունեության գնահատման ինքնատիպ, յուրահատուկ ցուցանիշ է, տնտեսության անվտանգության ապահովման և անկախության երաշխիք: Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճը և որակական բարձր հագեցվածությունը արտահայտում են հասարակության «առողջության» վիճակը: Այն տնտեսական գործունեության բովանդակության արտահայտման «զարկերակն» է:

Թեև տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական աճի մեկնաբանման վերաբերյալ գոյություն ունեն տարբեր տեսակետներ, սակայն առավել նախընտրելի են նորքեյնայան և նորդասական տեսությունները: Մեծ դեպքեսիայի հետևանքով ծնված քեյնայան տեսությունը, կայուն տվյալների հիման վրա վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ «հավասարակշռությունը ռեսուրսների ոչ լրիվ զբաղվածության պայմաններում», հանգեց այն եզրակացության, որ տնտեսական աճի տեմպերի նվազումը պայմանավորված է տնտեսության մեջ կապիտալ ներդրումների և տեխնիկական առաջարկման խթանման բացակայությամբ: Այդ պատճառով էլ քեյնայան տեսությունը առաջնային պլան է մղում տնտեսության մեջ ներդրումների խթանման պետական միջամտությունը: Նորքեյնականներու իրենց հետազոտությունները ծավալեցին արդեն դինամիկ տնտեսության պայմաններում, ուշադրությունը կենտրոնացնելով այնպիսի գործուների պարզաբանման վրա, որոնք անհրաժեշտ են կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ սահմանելուն՝ բնակչության լրիվ զբաղվածության բարձր մակարդակի և արտադրական հզորությունների լրիվ բերնվածության պարագայում:

1950-ականների կեսերին տնտեսական աճի տեմպերի և գործուների որոշիչ հնարավոր ներուժի խնդիրներով սկսեց զբաղվել նաև նոր դասսական ուղղությունը: Ի տարբերություն նորքեյնականների՝ նորդասականները ուշադրությունը կենտրոնացրին արտադրանքի իրացման պայմանների և արդյունավետ պահանջարկի ստեղծման վրա: Այնուհետև նորդասական տեսությունը առաջին պլան մղեց արտադրական սկզբունքը, այսինքն՝ զբաղվեց տնտեսական աճի այնպիսի գործուների վերլուծությամբ, ինչպիսիք են հիմնական կապիտալը, աշխատանքի արտադրողականությունը, գիտատեխնիկական առաջարիմությունը և այլն: Օրինակ՝ ըստ Ռոբերտ Սոլոոուի մոդելի՝ արտադրության թողարկման ծավալը ֆունկցիա է աշխատուժից, կապիտալից և տեխնոլոգիայից:

Տնտեսական աճը սերտորեն կապված է ընդլայնված վերարտադրու-

թյան հետ: Ավելին, այն համարվում է վերարտադրության ոլորտում առաջացած խնդիրների լուծման եղանակի «խտացված արտահայտությունը»: Եթե յուրաքանչյուր երկրի տնտեսություն ի վիճակի է վերարտադրել ավելի մեծ ծավալի արդյունք, քան արտադրել է նախորդ տարում, ապա խոսքը ընդլայնված վերարտադրության մասին է: Միաժամանակ՝ ընդլայնված վերարտադրության դինամիկան արտահայտում է տնտեսական աճը:

Տնտեսական աճի որոշումը և չափումը կապված են ազգային հաշիվների այնպիսի կարևոր ցուցանիշների հետ, ինչպիսիք են համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կամ գուտ ազգային արդյունքը (ԶԱԱ), ազգային եկամուտը (ԱԵ) և այլն: Այսինքն՝ տնտեսական աճը լրիվ զբաղվածության և ընդլայնված վերարտադրության պայմաններում ապրանքների ու ծառայությունների արտադրության ավելացումն է՝ որոշակի ժամանակահատվածում: Իսկ տնտեսական աճի տեսնպերը հաշվարկվում են ՀՆԱ-ի աճի տեսնպերով, տոկոսային արտահայտությամբ: Այսինքն՝ ՀՆԱ-ի աճի տեսնպերը որոշվում են ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանում իրական ՀՆԱ-ի աճի համեմատական տարբերությամբ.

$$Y = \frac{y_t - y_{t-1}}{y_{t-1}} \cdot 100\% = \frac{\Delta y_t}{\Delta y_{t-1}} \cdot 100\%,$$

որտեղ  $y_t$ -ն ընթացիկ ժամանակաշրջանում իրական ՀՆԱ-ի ծավալն է, իսկ  $y_{t-1}$ -ը նախորդ տարվա իրական ՀՆԱ-ի ծավալն է:

Շուկայական հարաբերություններին անցնան սկզբնական ժամանակաշրջանում՝ մինչև 1994 թ., Հայաստանում արձանագրվեց տնտեսական անկում, ՀՆԱ-ն կրճատվեց 59%-ով: Այդ ցուցանիշով ԱՊՀ երկրների շարքում զբաղեցնում էր առաջին տեղը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում ՀՆԱ-ն կրճատվեց 40%-ով, իսկ Ուկրաինայում՝ 37%-ով<sup>1</sup>:

1994 թ. մինչև 2000 թ. Հայաստանում տնտեսական աճի տարեկան միջին տեսական կազմեց 5-6%: Իսկ 2000 թ. մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ-ում արձանագրվեց 9,6%-ից մինչև 13,9% տնտեսական աճ:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակաշրջանում Հայաստանում կրկին ՀՆԱ-ն կրճատվեց 14,8%-ով:

Ճգնաժամի հաղթահարումից հետո Հայաստանում ՀՆԱ-ն նորից սկսեց աճել, որը կարելի է տեսնել ստորև բերվող աղյուսակի տվյալներից:

#### Աղյուսակ 1

#### ՀՆԱ-ի տվյալները արտադրական եղանակով<sup>2</sup>

	Ընթացիկ գներով		Նախորդ տարվա գներով	
	2011 թ.	2012 թ.	2011 թ.	2012 թ.
Ներքին արդյունքը (համապատասխան շուկայական գներով)	3777945,6	3997630,8	3621128,5	4048135,7

Նույն ժամանակաշրջանում աճեց նաև բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, որը կարելի է տեսնել ներքոհիշյալ աղյուսակի տվյալներից:

<sup>1</sup> Տես Գ. Ղարիբյան, Անցումային տնտեսության տեսություն, Եր., 2008, էջ 43:

<sup>2</sup> Տես «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», Եր., 2013, էջ 11:

**Աղյուսակ 2**  
**Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճը 2011-2012 թթ.<sup>3</sup>**

	ՀՆԱ-ն ընթացիկ գներով՝ մլն դրամ	Բնակչության ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով		
		Իրական ծավալի ին-դեքսները նախորդ տարվա նկատմամբ, %	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
2011 թ. ՀՆԱ-ն հաշվետու տվյալներով				
տարեկան	3777945,6	104,7	1252801	3363
2012 թ. ՀՆԱ-ն վերանայված տվյալներով				
տարեկան	3927630,8	107,2	1321524	3290

ՀՀ-ում 2012 և 2013թթ. զգալի դրական տեղաշարժեր են տեղի ունեցել նաև տնտեսական ակտիվության ցուցանիշում (ՏԱՑ), որը կարելի է տեսնել ներքոհիշյալ աղյուսակի տվյալներից:

**Աղյուսակ 3**

**Տնտեսական ակտիվության ցուցանիշը<sup>4</sup>**

Ամիսներ	Ծուկայական ինդեքսներ	Նախորդ ամսվա նկատմամբ %	Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ %	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %
2012				
Յունվար	63,9	48,4	108,0	108,0
Փետրվար	67,2	105,3	109,4	108,7
Մարտ	77,6	115,4	107,0	108,1
Ապրիլ	81,8	105,3	108,9	108,3
Մայիս	93,2	114,0	109,3	108,5
Հունիս	101,6	109,0	108,9	108,6
Հուլիս	113,7	111,8	108,2	108,5
Օգոստոս	138,2	121,6	108,9	108,6
Սեպտեմբեր	158,1	113,7	105,1	108,0
Դոկտեմբեր	130,6	83,1	105,0	107,6
Նոյեմբեր	121,7	92,2	105,5	107,4
Դեկտեմբեր	142,0	115,2	106,3	107,2
2013				
Յունվար	69,9	49,8	109,4	109,4
Փետրվար	73,2	104,8	108,8	109,1
Մարտ	83,9	114,6	108,1	108,7

Տնտեսական ակտիվության ցուցանիշները (ՏԱՑ) երկրի տնտեսությունում արտադրանքի բողարկման իրական ծավալի փոփոխության անսական ազդեգատացված ցուցանիշն է: Այն ընդգրկում է տնտեսական գործունեության բոլոր տեսակները և սկզբնապես հաշվարկվում է նախորդ տարվա միջին տարեկան գներով, ինչը հնարավորություն է տալիս ունենալու տվյալ ամսվա արտադրանքի բողարկման ծավալի իրական

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 11:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 9:

փոփոխությունը նախորդ ամսվա և նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, ստեղծելու ՏԱՑ-ի ժամանակագրական շարքերի շղթայական ինդեքսներ: Յուրաքանչյուր ամսվա համար այն իրենից ներկայացնում է ամբողջական տնտեսության համար մեկ ազրեգատացված ցուցանիշ՝ ինդեքսի տեսքով: Ի տարբերություն ազգային հաշիվների մերդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ-ի ցուցանիշների՝ ՏԱՑ-ը բնութագրում է նաև տնտեսությունում ապրանքների ու ծառայությունների որակական փոփոխությունները:

3-րդ այլուսակի տվյալներից երևում է, որ, բացառությամբ հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների, շուկայական ինդեքսները աճել են<sup>5</sup>:

Ի՞նչ է ընկած տնտեսական աճի հիմքում, ինչո՞ւ տարբեր ժամանակաշրջաններում առկա են տնտեսական աճի տարբեր տեմպեր: Այս հարցերի ճշգրիտ պատասխանը տալու համար անհրաժեշտ է կատարել կառուցվածքային և որակական վերլուծություններ: Ինչպես հայտնի է, տնտեսության մեջ ստեղծված ամբողջ արդյունքը գոյանում է արտադրական գործոնների՝ աշխատանքի (L), կապիտալի, (K), հողի և այլ բնական ռեսուրսների (N) որոշակի փոխներգործության ընթացքում: Տնտեսական աճի այս բացարձակ գործոնները ներկայացված են ամենաընդհանուր, այսինքն՝ բարձր ազրեգատացված տեսքով, և դրանց ներգործությունը անբողական արդյունքի ծավալի վրա ներկայացված է հայտնի արտադրության ֆունկցիայով՝  $y=(L.K.N.)$ : Սակայն արտադրության ֆունկցիան արտահայտում է միայն քանակական ներգործությունը՝ չշոշափելով որակական բնույթը: Այսինքն՝ արտադրության ծավալի աճը տեղի է ունենում ըստ նրա դաշտի լայնության՝ լրացուցիչ աշխատանքային, կապիտալ և բնական ռեսուրսների օգտագործման հաշվին, և կոչվում է էքստենսիվ տնտեսական աճ: Այն ունի սահմանափակ բնույթ, քանի որ տնտեսական ռեսուրսները սահմանափակ են: Իսկ արտադրության ծավալի աճը ըստ նրա դաշտի խորության, այսինքն՝ աշխատանքի արտադրողականության ( $y/L$ ), կապիտալի արտադրողականության ( $y/K$ ) և հողի ու բնական ռեսուրսների արտադրողականության ( $y/N$ ) բարձրացման հաշվին, անվանվում է ինտենսիվ տնտեսական աճ և արտահայտում է արտադրական գործոնների որակական փոփոխությունները: Ինտեսիվ տնտեսական աճն ավելի արդյունավետ է, քան էքստենսիվը:

Այսուհանդերձ՝ գործնականում գուտ էքստենսիվ և գուտ ինտեսիվ տնտեսական աճ գոյություն չունի: Դրանք դրսենորվում են միաժամանակ, փոխկապակցված են:

Ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում գերիշխող դիրք է ունեցել էքստենսիվ տնտեսական աճը: ԽՍՀՄ-ում և Հայաստանում տնտեսական աճի 70%-ը բաժին է ընկել էքստենսիվ տիպին, իսկ 30%-ը՝ ինտենսիվ տիպին:

Համեմատության համար նշենք, որ ամերիկացի տնտեսագետ Դենիս Ստենի տվյալներով՝ ԱՄՆ-ում 1928-82 թթ. տնտեսական աճի միայն 32%-ն է բաժին ընկել էքստենսիվ տիպին, իսկ 68%-ը՝ ինտեսիվ տեմպին<sup>6</sup>:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 15:

<sup>6</sup> Տե՛ս Մակկոնելլի Բ., Բրո Ս. Էկոնомիկա. Մ. 1992, էջ 384:

ԽՍՀՄ-ում տնտեսական աճի էքստենսիվ տիպի գերակայությունը ուղեկցվել է հիմնական կապիտալի օգտագործման ֆիզիկական և բարոյական մաշվածի երկարացումով: Հիմնական կապիտալի օգտագործման ժամկետների արհեստական երկարացումը պայմանավորված էր զգալի քանակությամբ ամորտիզացիոն ֆոնդերի ծանրաբեռնվածությամբ, որոնք օգտագործվում էին դրանց կապիտալ վերանորոգման համար:

Դա բնականաբար նշանակում էր գործող արտադրության դիրքերի կորուստ գիտատեխնիկական առաջընթացի բնագավառում և էքստենսիվ տնտեսական աճի կոնսերվացում, որը դարձել էր արտադրության արդյունավետության նվազման հզոր լծակ և նպաստում էր վնասով աշխատող ձեռնարկությունների աճին: Էքստենսիվ աճի կոնսերվացմանը նպաստում էր սոցիալիստական կուտակման պրակտիկան: Արտադրության միջոցների կուտակումը (և ստորաբաժանման գերակայությունը) փաստորեն դարձել էր ինքնանպատակ, քանի որ ծառայում էր պետական սեփականության ծավալմանը, որի հետ էր կապվում սոցիալիզմի զարգացումն ու ամրապնդումը: Զեռնարկությունների շահույթի զգալի մասը օգտագործվում էր հիմնական կապիտալի ընդլայնման, այլ ոչ թե արտադրության արդիականացման և վերակառուցման համար, ինչը թե՝ ԽՍՀՄ-ի և թե՛ Հայաստանի դեպքում հանգեցրեց էքստենսիվ զարգացման գերակայությանը և տնտեսական աճի տեմպերի կրծատմանը:

Ցավոր, Հայաստանում դեռևս շարունակվում է էքստենսիվ տիպի տնտեսական աճը, որը մասնավորապես որսևորվում է շինարարության ոլորտում:

Թեև էքստենսիվ տնտեսական աճի գերակայությունը ԽՍՀՄ-ում հանգեցրել էր աշխատությի պակասուրդի, սակայն Հայաստանում տրանսֆորմացիոն անկումը այնքան խորն էր, որ, ընդհակառակը, պայմանավորեց զանգվածային գործազրկության առաջացմանը, որն ուղեկցում է շուկայական հարաբերությունների անցնան ողջ ընթացքում: Այդ մասին են վկայում վիճակագրական ծառայության տվյալները (տե՛ս աղյուսակ 4):

Չնայած վիճակագրական ծառայության տվյալներով ՀՀ-ում գործազրկության մակարդակը 2011 թ. կազմում էր 18%, սակայն թաքնված գործազրկության մակարդակի հաշվառմամբ այն հասնում է 27-28%-ի:

#### **Աղյուսակ 4** **Գործազրկության մակարդակը ՀՀ-ում<sup>7</sup>**

	Թիվը (1000 մարդ)		% ներով	
	2011	2012	2011	2012
Աշխատանքային ռեսուրսներ	1286,3	2260,5		
Տնտեսապես ակտիվ բնակչություն	1440,9	1418,3		
Զբաղվածներ	1175,1	1172,8		
Գործազրուկներ	265,1	245,5		
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	845,4	842,4	18,2	17,8

<sup>7</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», Եր., 2013, էջ 97:

ՀՀ-ում տրանսֆորմացիոն անկումը 1994 թ. և զանգվածային գործազրկությունը ուղեկցվեցին նաև բնակչության իրական եկամուտների զգալի նվազումով և աղքատության ու արտագաղթի մակարդակի զգալի բարձրացումով։ Ներևս շուկայական տնտեսության անցման սկզբնական ժամանակաշրջանում աշխատավարձի միջին դրույքները 10 տարում նվազեցին (համադրելի գներով) 6,5 անգամ, նվազագույն աշխատավարձ ստացողների բաժինը ավելացավ 1,5 անգամ, իսկ միջին շնչային եկամուտի մեծությունը, որն օգտագործվում է անմիջական սպառնան համար, կրծատվեց 3 անգամ։ Դրանով իսկ կարծ ժամանակաշրջանում բնակչությունը փոխեց իր վեկտորը դեպի համընդհանուր աղքատություն (57%)<sup>8</sup>։ Ներկայումս նվազագույն աշխատավարձը կազմում է 50 հազ. դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ մոտ 120 հազ. դրամ։ Մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը աղքատության մակարդակը կազմում էր մինչև 22,5%, սակայն ճգնաժամի հետևանքով կրկին աճեց և հասավ 34,1%-ի<sup>9</sup>։

Շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում արտադրության արդյունավետության բարձրացումը դարձել է տնտեսական աճի գործոն և սոցիալական ծառայությունների (կրթության, առողջապահության, գիտության և այլն) ծախսերի ավելացման աղբյուր։ Արտադրության արդյունավետությունը զարգացած երկրներում հիմնականում ապահովում է ինտենսիվ տնտեսական աճի հաշվին, որն իրականացվում է ոչ միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին, այլև համախառն արտադրանքի ավելացման, արտադրանքի նյութատարության ու կապիտալատարության իջեցման հաշվին։ Այսօր ՀՀ-ում վիճակագրական ծառայությունը նույնիսկ չի կատարում հաշվարկներ, թե ի վերջո ինչպիսին է տնտեսական աճի արդյունավետությունը։ Սակայն պետք են որոշակի վերլուծություններ, քանի որ արտադրության արդյունավետությունը մշտապես կախված է նաև տնտեսական աճի արդյունավետության աստիճանից։

Տնտեսական աճի արդյունավետությունը դարձել է երկրի տնտեսական զարգացման վճռական գործոն։ Իր հերթին տնտեսական աճի արդյունավետության մակարդակը կախված է երկրի տնտեսական աճի զարգացման մակարդակից։ Այդուհանդերձ, շուկայական տնտեսության անցման ավելի քան 20 տարիների ընթացքում թեպետ Հայաստանում ապահովվել է տնտեսական աճի բարձր տեմպեր, նույնիսկ երկնիշ թվերով, սակայն բնակչության կենսամակարդակը չի աճել համանասնաբար։ Դեռ ավելին, գների մակարդակի աճի բարձր տեմպերը անվանական աշխատավարձի նկատմամբ հանգեցրել են բնակչության իրական եկամուտների և կենսամակարդակի նվազման, քայլայվել և անարդյունավետ է գործում սոցիալական ոլորտը, աճել են կոռուպցիան և հանցագործությունները։

Այս բոլորը վկայում են, որ հասարակության զարգացումը դանդաղել է, որի գլխավոր պատճառը օլիգոպոլացված տնտեսության գերակայությունն է գրեթե բոլոր ոլորտներում։ Եթե շուկայական զարգացած երկրներում բնակչության կենսամակարդակի բարձրացումը մեծապես կախված է

<sup>8</sup> Տես «Անցումային տնտեսության տեսություն», Ուսումնական ձեռնարկ, Եր., 2008, էջ 7։

<sup>9</sup> Տես նույն տեղը, էջ 58։

տնտեսական աճի տեմպերից, ապա հարց է ծագում՝ ինչո՞ւ Հայաստանում բարձր (Երկնիշ թվերով) տնտեսական աճի պայմաններում բնակչության կենսամակարդակը չի բարձրացել համապատասխան կերպով, այլ նույնիսկ նվազել է: Հարցի ճիշտ պատասխանը տալու համար կարելի է նշել մի քանի տարրերակ:

1. Հայաստանում գերակայուն է եքստենսիվ տնտեսական աճը, հետևաբար ցածր է տնտեսական աճի արդյունավետությունը:

2. Տնտեսական աճի արդյունքները հիմնականում յուրացնում են օլիգարխմերը և պետական այրերը: Նման երևույթ եղել է Բրազիլիայում (1965-80 թթ.), երբ Երկրի ՀՆԱ-ի ավելի քան 60%-ը բաժին է ընկել բնակչության 20%-ը կազմող ունենոր խավերին:

3. Հայաստանում տնտեսական աճի բարձր տեմպերը պայմանավորված են նաև ստվերային տնտեսությունից դեպի թափանցիկ տնտեսության անցման հնարավորությունների սահմաններով:

4. Այո՛, Հայաստանում գյուղական աճ, սակայն շատ դեպքերում դա չափազանցված է՝ «նկարած» է:

5. Փուչիկ տնտեսական աճ. դա սկզբնապես կապված է եղել շինարարության ոլորտի հետ, իսկ ներկայումս՝ հաճքարդյունաբերության ոլորտի հետ:

6. Քանի որ գյուղատնտեսությունը հիմնականում չի հարկվում, ապա նույնիսկ երաշտի և ցրտահարության պայմաններում նշվում են գյուղատնտեսական համախառն արտադրանքի աճի բարձր տեմպեր:

7. Եվ վերջապես, ինչո՞ւ չի կարելի ենթադրել, որ Հայաստանում առկա են վերը շարադրված բոլոր դեպքերը:

Այսուհանդերձ, Հայաստանում տնտեսական հիմքները խարիսխված են, տնտեսության անկայունությունը տեսանելի է տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում: Հետևաբար անհրաժեշտ է անցումային ժամանակաշրջանի տնտեսական, սոցիալական և գիտատեխնիկական իրական նոր ռազմավարություն, որն ունակ լինի ապահովելու տնտեսության զարգացում և բնակչության կենսամակարդակի բարձրացում:

Լիարժեք շուկայական հարաբերություններ ստեղծելու և տնտեսության կայուն զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել արմատական վերափոխումներ՝ նաև նավորապես.

- Ստվերային կամ «արտոնյալ» իրավիճակում գտնվող ցանկացած տնտեսություն, լինի օլիգոպոլիական, թե մանր ու միջին ձեռնարկություն (ֆիրմա), օրենքի առջև պետք է լինեն հավասար իրավիճակում, մասնավորապես օլիգոպոլիական տիրապետությունը, որը գրեթե արտոնյալ վիճակում է: Օլիգոպոլիական ընկերությունները պետական բյուջե չեն վճարում իրական հարկերը, օրինակ՝ 2012 թ. Երևանի պետական համալսարանը մոտ երկու անգամ ավելի հարկեր է մուտքել պետական բյուջե, քան «Արարատցեմենտ» և «Միկացեմենտ» ընկերությունները միասին վերցրած: Օլիգոպոլիականները շուկայում բարձր գներ թելադրող են, նրանք միաժամանակ խոչընդոտում են մանր ու միջին բիզնեսի զարգացումը և միջին խավի ձևավորումը:

- **Ազատ (կատարյալ) նրացակցության կայացում.** տնտեսական նրացակցության հանձնաժողովի կատարած աշխատանքները միանգամայն անբավարար են ազատ նրացակցության ապահովման համար: Նրանց կողմից կիրառվող տուգանքները չեն ծառայում իրական նպատակին և դարձել են բյուջեն համալրելու միջոց: Անհրաժեշտ է կատարելագործել հակամենատիրական օրենսդրությունը, մասնավորապես՝ անցնել գների վերին և ներքին սահմանների որոշմանը:

- **Մանր և միջին ծեռնարկատիրության կայացում.** մասնավորապես՝ կատարելագործել հարկային և վարկային քաղաքականությունը: Մանր և միջին ծեռնարկատիրության համար կիրառել որոշակի արտոնություններ:

- **Աղքատության և արտագաղթի կրծատում.** այսօր Հայաստանում չկա ավելի կարևոր գերխնդիր, քան աղքատության և արտագաղթի կրծատումն է: Երկրում իրականացվող բոլոր տեսակի վերափոխումները պետք է նպատակառուղղված լինեն աղքատության և արտագաղթի կրծատմանը:

Վերը շարադրված խնդիրների լուծումը բարդ է և պահանջում է երկարատև ժամանակաշրջան: Սակայն կարևոր գործի սկիզբը դնելն է: Չնկատել և անտեսել այս ամենը կնշանակի տնտեսական քաղաքականության մեջ «կարճատեսություն», որը կհանգեցնի առանց այն էլ քայլայված տնտեսության վերջնական փլուզմանը:

**Բանալի բառեր** – տնտեսական աճ, տնտեսական զարգացում, տնտեսական աճի տեսակեր, համախառն ներքին արդյունք, բնակչության բարեկեցություն, կյանքի որակ, բնակչության կենսամակարդակ

**ВОЛОДЯ ОВСЕПЯН – Экономический рост и благосостояние.** – Экономический рост – главный показатель общественного и экономического развития. Он является как исходным индикатором экономической деятельности правительства, так и гарантией экономической безопасности и независимости.

Хотя статистические данные свидетельствуют о высоких темпах экономического роста в Армении, уровень жизни населения не соответствует ему. В статье рассматриваются основные причины этого несоответствия и предлагаются пути повышения благосостояния.

**Ключевые слова:** темпы экономического роста, внутренний валовый продукт, благосостояние, качество жизни, уровень жизни

**VOLODIA OVSEPYAN – Economic Growth and Standard of Living.** – Economic growth is the main indicator of social and economic development. At the same time, it is the unique indicator of economic activities of the government, a guarantee of economic security and independence. Despite the fact, that, according to the statistics, the Republic of Armenia experiences high rates of economic growth, the standard of living of the population does not grow proportionally. From this perspective, the article describes the main causes mentioned above, and suggests ways of improving the living standards of the population.

**Key words:** economic growth, economic development, rates of economic growth, gross national product, the welfare of society, quality of life, standard of living of the population

---

## ԳԼՈԲԱԼ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### ԱԼՎԱՐԴ ԽԱՌԱՏՅԱՆ

Վերջին տարիներին միջազգային տնտեսական ինտեգրացիայի ներգործությունը եկամուտների անհավասարության և աղքատության վրա, ինչպես նաև գլոբալ անհավասարության և աղքատության չափման խնդիրները դարձել են գիտական բուռն քննարկումների առարկա: Հաշվարկման մեթոդաբանությամբ պայմանավորված՝ հետազոտողները ներկայացնում են աշխարհի քաղաքացիների միջև եկամուտների բաշխման և աղքատության տարրեր գնահատականներ<sup>1</sup>: Գլոբալ անհավասարության և աղքատության միտումների հարցում ևս տեսակետները տարբեր են: Ոմանք գտնում են, որ 1980-ականներից սկսած՝ գլոբալացման նոր ալիքը նայաստել է աղքատության և գլոբալ անհավասարության կրծատմանն աշխարհում, մյուսների կարծիքով, ընդհակառակը, անհավասարությունը երկրների ներսում և երկրների միջև մեծացել է<sup>2</sup>:

Մեր նպատակն է.

- Վերլուծել գլոբալ անհավասարության և աղքատության միտումները,
- Ներկայացնել գլոբալ անհավասարության և աղքատության որոշման մեթոդաբանական խնդիրները,

•գնահատել գլոբալացման ազդեցությունը աղքատության վրա:

Եկամուտների անհավասարության և աղքատության հարցերը կարեւոր են ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական տեսանկյունից: Աճող ազգային անհավասարությունը և աղքատությունը կասեցնում են կայուն տնտեսական աճը: Եկամուտների մեծ բևեռացումը հանգեցնում է հարուստների սոցիալական անջատողականությանը (սեպարատիզմին) և միջին դասի դուրս մղվելուն, իսկ երբ սոցիալական անհավասարության ընկալումը գերազանցում է տնտեսական աճի բերած օգուտները, սոցիալական լարվածությունը կարող է վերածել քաղաքական հեղաշրջման:

**Գլոբալ անհավասարության և աղքատության որոշման մեթոդաբանական բարդությունները** ունեն մի շարք պատճառներ: Նախ՝ առանձին երկրների բնակչության եկամուտների համադրումը բարդանում է

<sup>1</sup> Տե՛ս Bourguignon F. and Morrisson C. The size distribution of income among world citizens, 1820-1990, American Economic Review, 2002. September, էջ 727-744, Milanovic B. Global income inequality by the numbers: in History and now – an overview. World bank, World Bank's Research Department, Washington, 2013, Pinkovskiy M., Sala-i-Martin X. Parametric estimations of the world distribution of income. Working Paper 15433, National Bureau of Economic Research, October 2009:

<sup>2</sup> Տե՛ս Dollar D. Globalisation, Inequality and Poverty Since 1980, The World Bank Research Observer, Vol. 20, Issue 2, 2005. էջ 145-175, Sutcliffe B. World inequality and Globalization. Oxford review of economic policy, Vol. 20, № 1, 2004, Dowrickand S., Akmal M. Contradictory Trends in Global Income Inequality: A Tale of Two Biases. The University of Hong Kong, School of Economics and Finance, Discussion Paper, № 355, 2002:

տարբեր երկրների տվյալների որակական տարբերությունների պատճառով: Երկրից երկիր տարբերվում են նաև հասարակական բարիքները: Բացի այդ, մեկ շնչի հաշվով եկամտի վիճակագրությունը կարող է խեղաթյուրվել ընտանիքների չափերի տարբերության հետևանքով առաջացած մասշտարի ազդեցության պատճառով:

Երկրորդ՝ գլոբալացումը ներառում է այնպիսի երևույթների շրջանակ, որոնք ունեն տարբեր հետևանքներ: Այսպես, «այլ հավասար պայմանների դեպքում» տնտեսական ինտեգրացիան տարբեր հետևանքներ կարող է թողնել զարգացող երկրների տնտեսությունների վրա աշխարհագրական դիրքի պատճառով: Տնտեսական վերափոխումները, առևտուրը և ներդրումները չեն կարող աղքատության դեմ պայքարի արդյունավետ միջոցներ լինել շուկաներից շատ հեռու գտնվող, տրանսպորտային մեծ ծախսեր պահանջող երկրների համար:

Երրորդ՝ գլոբալ անհավասարության կամ աղքատության հաշվարկման այլընտրանքային մեթոդները և վիճակագրական տեղեկատվության աղբյուրները կարող են հանգեցնել տարբեր արդյունքների, հետևաբար նաև երևույթի տարբեր ընկալումների:

Բ. Միլանովիչն առաջարկում է գլոբալ անհավասարության երեք հայցակարգ: Առաջինի համաձայն՝ անհավասարությունը գնահատվում է երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի տարբերությամբ: Գնահատման գործընթացում յուրաքանչյուր երկիր ունի հավասար ներդրում: Երրորդի համաձայն՝ անհավասարությունը գնահատվում է երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի տարբերությամբ՝ յուրաքանչյուր երկիր վերագրելով բնակչության թվին համապատասխան կշիռ: Երրորդ հայեցակարգում շեշտը դրվում է անհատի վրա: Յուրաքանչյուր անհատ աշխարհի քաղաքացիների անհավասարության հաշվարկման մեջ ներառվում է իր փաստացի եկամտով, անկախ երկրից<sup>3</sup>: Եկամուտների գլոբալ բաշխումը գնահատվում է վիճակագրական ոչ լիարժեք տվյալների հիման վրա: Գնահատելու նպատակով հետազոտողները կիրառում են տարբեր մեթոդներ՝ էնտրոպիա<sup>4</sup>, պարամետրական<sup>5</sup>, ոչ պարամետրական<sup>6</sup>, GAWA (Geary–Allen World Accounts)<sup>7</sup>: Անհավասարության գնահատման դասական ցուցանիշներից բացի՝ ներառվում են գնահատման նոր ցուցանիշներ<sup>8</sup>: Երկրների եկամուտների համեմատության համար գործող փոխանակային կուրսը, իրական կամ անվանական գնողունակության պարիտետը օգտագործելու դեպքում ստացվում են տարբեր արդյունքներ:

Սեթողի ընտրությունից կախված՝ գլոբալ անհավասարությունը կամ աղքատության մակարդակը կարող է գնահատվել իրականից բարձր կամ

<sup>3</sup> Տե՛ս Milanovic B., Global Income Inequality. A Review World Economics. Vol. 7, № 1, January–March 2006, էջ 131:

<sup>4</sup> Տե՛ս Capeau B. and Decoster A. The Rise or Fall of World Inequality. Big Issue or Apparent Controversy? Tijdschrift voor Economie en Management, Vol. XLVIII, 4, 2003:

<sup>5</sup> Տե՛ս Pinkovskiy M., Sala-i-Martin X., նշվ. աշխ.:

<sup>6</sup> Տե՛ս Sala-i-Martin X. The World Distribution of Income (Estimated from Individual Country Distributions), NBER Working Paper 8933, 2002:

<sup>7</sup> Տե՛ս Almas I., Sorensen E. Global Income Inequality and Cost-of-Living Adjustment: The Geary–Allen World Accounts, Institutt for SAMFUNNSØKONOMI, Department of Economics. October 2012:

<sup>8</sup> Տե՛ս Sutcliffe B. World inequality and Globalization. Oxford review of economic policy, Vol 20, № 1, 2004:

ցածր: ՀՆԱ-ն՝ որպես գլոբալ անհավասարության չափման միջոց, ցույց է տալիս անհավասարության ավելի մեծ թվեր, քան տնային տնտեսությունների եկամուտների կամ ծախսերի հիման վրա կատարված հաշվարկները: Պատճառը զարգացած երկրներում հանրային բարիքների առատությունն է և աղքատ երկրներում տնային արտադրանքի սպառման մեծ ծավալները:

Երկրների տարբեր տարիների աղքատության նակարդակների համարումը բարդանում է ոչ միայն դրանցում աղքատության գծի տարբերության, այլև Համաշխարհային բանկի կողմից աղքատության հաշվարկման մեթոդաբանության փոփոխության պատճառով<sup>9</sup>:

**Գլոբալ անհավասարության և աղքատության միտումները:** ժամանակակից տնտեսական պատմությունը վկայում է, որ արդյունաբերական հեղաշրջումից սկսած՝ աշխարհի առաջատար երկրներում կենսամակարդակն արագ տեմպով աճել է, որի հետևանքով զգալիորեն մեծացել է գլոբալ անհավասարությունը:

1980-ականներից սկսած՝ գլոբալացման երրորդ ալիքը լայն հնարավորություններ բացեց զարգացող երկրների, նաև ավագան Ասիայի խիստ բնակեցված երկրների՝ Չինաստանի, Հնդկաստանի, Բանգլադեշի և Վիետնամի համար, որոնք մեկ շնչի հաշվով ապահովեցին տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր, քան զարգացած երկրները: 1960-2010 թթ. Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրներում տարեկան միջին կշռված գնողունակության պարիտետով հաշվարկված մեկ շնչի հաշվով աճի տեմպը 2,9-ից դարձել է 8,6 տոկոս (տե՛ս աղյուսակ 1), Հարավային Ասիայի երկրներում՝ 0,6-ից 5,9 տոկոս, իսկ Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներում՝ 1,3-ից 2,5 տոկոս: Տնտեսական աճի տեմպերը նվազել են Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում: 2000-2010 թթ. մեկ շնչի հաշվով միջին տարեկան աճի տեմպը զարգացող երկրների համար կազմել է 5,1 տոկոս՝ ի տարբերություն զարգացած երկրների 1,1 տոկոս աճի: Եթե 1960-1980 թթ. աշխարհի բնակչության գերակշռող մաս կազմող 125 երկրների ամենաաղքատ՝ մեկ հինգերորդ խմբի (25 երկիր) բնակչությանը կշռված մեկ շնչի հաշվով տնտեսական աճի տարեկան տեմպը կազմել է 1,8 տոկոս, իսկ ամենահարուստ մեկ հինգերորդ խմբինը՝ 3,3 տոկոս, ապա 1980-1997 թթ. այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 4 տոկոս և 1,7 տոկոս<sup>10</sup>:

Արդյո՞ք գլոբալացման գործընթացը և տնտեսական աճի բարձր տեմպերը զարգացող երկրներում նպաստեցին աղքատության կրճատմանը: Տեղեկատվության մի շարք աղբյուրներ վկայում են գլոբալացման դարաշրջանում զարգացող երկրներում աղքատության արագ նվազման մասին. 1910-1960 թթ. (50 տարվա ընթացքում) աղքատությունը նվազել է 22 տոկոսով<sup>11</sup>, 1960-1975 թթ.՝ 8 տոկոսով<sup>12</sup>, իսկ 1985-2000 թթ.՝ 25 տոկոսով

<sup>9</sup> Տե՛ս Deaton A. Health, Inequality and Economic Development. Working Paper 8318, National Bureau of Economic Research, June 2001, Wade R. H. Is Globalization Reducing Poverty and Inequality? World Development, Vol. 32, № 4, 2004, էջ 567-589:

<sup>10</sup> Տե՛ս Editors: Gruen D., O'Brien T., Lawson J. Globalisation, living standards and inequality, Continuing Challenges. Proceedings of a Conference. Reserve Bank of Australia. May 2002, էջ 2:

<sup>11</sup> Տե՛ս Bourguignon F. and Morrisson C. The size distribution of income among world citizens, 1820-1990. American Economic Review, 2002. September, էջ 727-744:

(34,4-ից հասնելով 13,1 տոկոսի): 1980 թ. ոչ աղքատների սպառման յուրաքանչյուր 10 տոկոս աճի դեպքում աղքատների սպառումն աճել է 18 տոկոսով<sup>13</sup>: Տեղեկատվության այլ աղբյուրների համաձայն՝ զարգացող երկրներում 1960-75 թթ. աղքատությունը նվազել է 13 տոկոսով (51-ից 38 տոկոս), իսկ մեկ շնչի հաշվով եկամուտն աճել է 47 տոկոսով, այն դեպքում, երբ 1985-99 թթ. մեկ շնչի հաշվով եկամուտն աճել է 51 տոկոսով, իսկ աղքատության մակարդակը նվազել է 10 տոկոսով (33-ից 23 տոկոս)<sup>14</sup>: Կարծում ենք, այս տվյալների համաձայն՝ աղքատությունը դանդաղ է նվազում, և կասկածելի է, որ գլոբալացումը նպաստում է աղքատության կրճատմանը:

#### **Աղյուսակ 1**

#### **Տարեկան միջին կշռված գնողունակության պարիստետով հաշվարկված մեկ շնչի հաշվով աճի տեմպը 1960-2010 թթ. (տոկոս)<sup>15</sup>**

Տարածաշրջան	1960-1980 թթ.	1980-2000 թթ.	2000-2010 թթ.
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան ավազան	2,9	6,1	8,6
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	---	1,1	5,2
Հատինական Աներիկա և Կարիբյան ավազան	3,1	0,1	2,6
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	3,2	0,2	2,9
Հարավային Ասիա	0,6	3,0	5,9
Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներ	1,3	-0,6	2,5
Զարգացող երկրներ	2,1	3,1	5,1
Բարձր եկամուտով երկրներ	3,9	2,3	1,1

Գլոբալացման նոր դարաշրջանում աղքատության փոփոխության միտումը բացահայտելու նպատակով աղյուսակ 2-ում ներկայացրել ենք Համաշխարհային բանկի հին և նոր մեթոդաբանությամբ գնահատված և տարբեր հեղինակների կողմից հաշվարկված 1980-2008 թթ. աղքատության մակարդակները: Գնահատականները տարբեր են, սակայն նոր մեթոդաբանությամբ կատարված հաշվարկների արդյունքները ցույց են տալիս աղքատության մակարդակի նվազման միտումն ինչպես աշխարհում, այնպես էլ առանձին տարածաշրջաններում: Նշենք, որ գլոբալ աղքատության նվազման գործում մեծ դեր է խաղացել աղքատության մակարդակի կրճատումը Չինաստանում: 1981-2008 թթ. ժամանակահատվածում 84 տոկոսից այն նվազել է 13,1 տոկոսի<sup>16</sup>:

<sup>12</sup> Տե՛ս Asian Development Bank, 2002:

<sup>13</sup> Տե՛ս Institute for International Economics. <http://www.iie.com>

<sup>14</sup> Տե՛ս World Bank. World Development Indicators.

<sup>15</sup> Աղբյուրը՝ Salvatore D. Growth, Poverty and Governance in the Age of Globalization.

Fordham University, New York. 2012, էջ 6:

<sup>16</sup> Տե՛ս World Bank, Update of World Bank's Estimates of Consumption Poverty in the Developing World, February 29, 2012:

1980-ականներից սկսած՝ աշխարհում նվազում է ինչպես աղքատության մակարդակը (աղքատների բաժինն ընդհանուր բնակչության մեջ), այնպես էլ աղքատության մեջ ապրող մարդկանց բացարձակ թիվը. 1981 թ. 1937,8 մլն-ից աղքատների թիվն աշխարհում 2008 թ. դարձել է 1289,0 մլն մարդ: Գլոբալ աղքատության նվազումը չի նշանակում, որ այն պակասում է բոլոր տարածաշրջաններում: Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներում 1980-ականներից հետո աղքատների թիվն աճել է: 1981 թ. այս երկրներում աղքատները կազմել են 204,9 մլն, 1993 թ.՝ 330,0, իսկ 2008 թ.՝ 386,0 մլն<sup>17</sup>: Տնտեսական հաջողություններ գրանցվել են մի քանի երկրում, մասնավորապես՝ Ուգանդայում և Բուսավանայում: 1960 թ. Աֆրիկային բաժին էր ընկնում աշխարհի ծայրահեղ աղքատների մեկ տասնեռորդը, 1998 թ.՝ երկու երրորդը, իսկ 2012 թ.՝ կեսից ավելին<sup>18</sup>: Սա նշանակում է, որ աղքատության կառուցվածքը փոխվում է, ծայրահեղ աղքատությունը «կենտրոնանում է» Աֆրիկայում:

## Աղյուսակ 2

### Աղքատության մակարդակը 1980 -2008 թթ.<sup>19</sup>

	Նամաշխարհ. բանկի հիմն մեթոդաբան. գնահատված արդյունքներ*	Տարբեր հեղինակների կողմից գնահատված արդյունքներ	Նամաշխարհ. բանկի նոր մեթոդաբան. գնահատված արդյունքներ**
Աշխարհ	1985 թ. 33,0 % 1987 թ. 28,0 % 1990 թ. 29,0 % 1999 թ. 23,0 %	1980 թ. 44,0% 1985 թ. 34,4 % 1987 թ. 30,0 % 1990 թ. 25,0 % 2000 թ. 13,1 %	1981 թ. 52,2 % 1993 թ. 40,9 % 2008 թ. 22,4 %
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան ավազան			1981 թ. 77,2 % 1993 թ. 50,7 % 2008 թ. 14,3 %
Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա			1981 թ. 1,9 % 1993 թ. 2,9 % 2008 թ. 0,5 %
Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներ	1993 թ. 39,1 %	1993 թ. 49,7%*	1981 թ. 51,5 % 1993 թ. 59,4 % 2008 թ. 47,5 %
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	1993 թ. 23,5 %	1993 թ. 15,3%*	1981 թ. 11,9 % 1993 թ. 11,4 % 2008 թ. 6,5 %
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	1993 թ. 4,1 %	1993 թ. 1,9 %*	1981 թ. 9,6 % 1993 թ. 4,8 % 2008 թ. 2,7 %
Դարավային Ասիա			1981 թ. 61,1 % 1993 թ. 51,7 % 2008 թ. 36,0 %

Աղքատության գիծը սահմանվել է \* օրական 1 դոլար, \*\* օրական 1,25 դոլար:

<sup>17</sup> Տե՛ս **World Bank**. Update of World Bank's Estimates of Consumption Poverty in the Developing World, February 29, 2012:

<sup>18</sup> Տե՛ս World Development Indicators, 2014:

<sup>19</sup> Տե՛ս **World Bank**. Update of World Bank's Estimates of Consumption Poverty in the Developing World. February 29, 2012, **Wade R.** Is Globalization Reducing Poverty and Inequality? World Development Vol. 32, № 4, 2004, էջ 573, **Institute for International Economics**. <http://www.iie.com> էջ 3, **Angus D.** Measuring poverty in a growing world. Review of Economics and Statistics. Vol. 87, № 1, 2005, էջ 1-19:

Այսուսակ 3-ում ներկայացված 1980-2010 թթ. տնտեսական աճի տեմպի և աղքատության կրծատման տեմպի տարածաշրջանային տվյալները վկայում են, որ Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի, ինչպես նաև Հարավային Ասիայի երկրներում տնտեսական աճի բարձր տեմպերը նպաստել են աղքատության կրծատմանը: Մյուս տարածաշրջանների երկրների համար որոշակի օրինաչափություն չի նկատվում: Տնտեսական աճի տեմպի և աղքատության կրծատման տեմպի միջև եղած կապը բացահայտելու նպատակով 1980-2010 թթ. տվյալների հիման վրա հաշվել ենք այս ցուցանիշների կոռելյացիայի գործակիցը: Կոռելյացիայի 0,93 գործակիցը վկայում է, որ աշխարհի մասշտաբով տնտեսական աճի տեմպերի արագացումը նպաստում է աղքատության կրծատման արագացմանը:

### Այսուսակ 3 1980-2010 թթ. տնտեսական աճի տեմպը և աղքատության կրծատման տեմպն ըստ տարածաշրջանների<sup>20</sup>

Տարածաշրջան	Տնտեսական աճի տեմպ, %	Աղքատության կրծատման տեմպ, %
Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան ավազան	7,35	62,9
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	3,15	1,4
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	1,35	5,4
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	1,55	6,9
Հարավային Ասիա	4,45	25,1
Սահարայից հարավ ընկած աֆրիկյան երկրներ	0,95	4,0

1980-ականներից սկսած՝ բացարձակ աղքատությունն աշխարհում դրսևորում է անկման միտում, մինչդեռ հարաբերական աղքատությունը՝ աճի: Եթե 1960 թ. ԱՄՆ մեկ շնչի հաշվով եկամուտը աշխարհի ամենաաղքատ երկրի (Լեսոտոյի) մեկ շնչի հաշվով եկամտին գերազանցում էր 48,3 անգամ, 10-րդ աղքատ երկրի (Գվինեայի) մեկ շնչի հաշվով եկամտին՝ 27,6 անգամ, ապա 2010 թ.՝ համապատասխանաբար 151,7 և 51,1 անգամ (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության և Գվինեայի մեկ շնչի հաշվով եկամուտներին): Աշխարհի 20 ամենահարուստ և 20 ամենաաղքատ երկրների մեկ շնչի հաշվով միջին եկամուտների հարաբերությունը 1960 թ. 23,0-ից 2010 թ. դարձել է 43,3 (տես այսուսակ 4):

Գլոբալ անհավասարության գնահատականների և միտումների հարցում տնտեսագիտական գրականությունում կարծիքները տարբեր են (տես այսուսակ 5): Խ. Ս. Մարտինի հետազոտությունների համաձայն՝ 1970-1998 թթ. գլոբալ անհավասարությունը կրծատվել է<sup>21</sup>, 1970-2006 թթ.

<sup>20</sup>Տես World Development Indicators, 2012:

<sup>21</sup>Տես Sala-i-Martin, X. The Disturbing ‘Rise’ of Global Income Inequality, NBER Working Paper 8904, 2002a, Sala-i-Martin X. The World Distribution of Income (Estimated from Individual Country Distributions), NBER Working Paper 8933, 2002b:

Զինիի ինդեքսը 0,653-ից նվազել է 0,612-ի: Աշխարհի ամենահարուստ 20 տոկոս բնակչության միջին եկամտի հարաբերությունը ամենաաղքատ 20 տոկոսի միջին եկամտին 2000 թ. կազմել է 8,22՝ 1970 թ. 10,32-ի հանդեպ, ամենահարուստ և ամենաաղքատ դեցիլային խմբերի միջին եկամուտների հարաբերությունը նվազել է 9,3 տոկոսով (28,22-ից՝ 25,70)<sup>22</sup>:

#### Աղյուսակ 4

**Իրական գնողունակության պարիտետով գնահատված մեկ շնչի հաշվով եկամտի հարաբերությունը հարուստ և աղքատ երկրներում  
1960-2010 թթ.<sup>23</sup>**

Տարի	ԱՄՆ մեկ շնչի հաշվով եկամուտը՝ ամենաաղքատ երկրի համեմատությամբ	ԱՄՆ մեկ շնչի հաշվով եկամուտը՝ 10-րդ ամենաաղքատ երկրի համեմատությամբ	Մեկ շնչի հաշվով եկամուտը 20 ամենահարուստ երկրներում՝ 20 ամենաաղքատ երկրների համեմատությամբ
1960	48,3	27,6	23,0
1970	47,1	31,0	26,2
1980	47,4	31,3	25,7
1990	51,6	32,5	30,8
2000	73,3	44,6	36,3
2010	151,7	51,1	43,3

Բ. Միլանովիչի գնահատմամբ՝ 1988-1993 թթ. գլոբալ անհավասարությունն աճել է: 1988 թ. աշխարհի ամենահարուստ 5 տոկոսի միջին եկամտի հարաբերությունը ամենաաղքատ 5 տոկոսի միջին եկամտին 78 էր, իսկ 1993 թ.՝ 144<sup>24</sup>: Նետագա վերլուծություններում հեղինակը եզրակացնում է, որ 2002-2008 թթ. գլոբալ Զինին նվազել է 1,4 կետով<sup>25</sup>: Բ. Սաթբլիֆի հետազոտության համաձայն՝ 1980-ից գլոբալ անհավասարությունն աճել է: Աշխարհի ամենահարուստ 10 տոկոս բնակչության միջին եկամուտը ամենաաղքատ 10 տոկոսի միջին եկամտին 1950 թ. գերազանցել է 36,2, իսկ 2001 թ.՝ 47,2 անգամ<sup>26</sup>: Ֆ. Բուրգինյոնը և Ս. Մորիսոնը գտնում են, որ 1820-1980 թթ. գլոբալ անհավասարությունը դրսևել է աճի միտում. Զինիի գործակիցը 1960 թ. 0,635-ից 1980 թ. աճել է մինչև

<sup>22</sup> Տե՛ս **Sala-i-Martin X.** The World Distribution of Incom: Falling Poverty and ... Convergence Period. The Quarterly Journal of Economics. Vol. CXXI May 2006. Issue 2, էջ 351-397, էջ 384, **Pinkovskiy M., Sala-i-Martin X.** Parametric estimations of the world distribution of income. Working Paper 15433, National Bureau of Economic Research, October 2009:

<sup>23</sup> Տե՛ս **Salvatore D.** Growth, Poverty and Governance in the Age of Globalization. Fordham University, New York. 2012, էջ 9:

<sup>24</sup> Տե՛ս **Milanovic B.** True World Income Distribution, 1988 and 1993, First Calculation Based on Household Surveys Alone. The Economic Journal, Vol. 112, Issue 476, 2002:

<sup>25</sup> Տե՛ս **Milanovic B.** Global income inequality: current trends, issues of justice and politics. Luxembourg Income Study Center. LIS SUMMER LECTURE Luxembourg, 1 July 2014, էջ 31, **Milanovic B.** Global income inequalityby the numbers: in History and now – an overview. World bank. World Bank's Research Department, Washington, 2013:

<sup>26</sup> Տե՛ս **Sutcliffe B.** World inequality ang Globalization. Oxford review of economic policy, Vol. 20, № 1, 2004, էջ 20:

0,657-ի: 1980 թ. սկսած՝ անհավասարությունը կայունացել է, որից հետո միջերկրային անհավասարությունը նվազել է, իսկ ներերկրայինը՝ աճել<sup>27</sup>:

### Աղյուսակ 5 Գլոբալ անհավասարության Զինիի գործակիցը<sup>28</sup>

	1960	1970	1980	1990	2000	2006	Միտուն
Ֆ. Բուրգյոն, Ս. Մորիսոն (2002)	0,635	0,650	0,657	0,657			Կայուն
Բ. Սաքըլիֆ (2003)			0,667	0,650	0,627		↓
Խ. Ս. Մարտին (2002)		0,657	0,662	0,654	0,633		↓
Բ. Միլանովիչ (2002)			0,628	0,660			↑
Բ. Սաքըլիֆ (2004)	0,545	0,539	0,525	0,536	0,545		↑
Բ. Միլանովիչ (2005)				0,660	0,650		↓
Խ. Ս. Մարտին (2006)		0,653	0,660	0,652	0,637		↓
Ս. Պիմկովսկի, Խ. Ս. Մարտին (2009)		0,676	0,666	0,651	0,633	0,612	↓

Գնահատականների տարբեր լինելու պատճառը, կարծում ենք, վերլուծության մեթոդաբանությունների տարբերությունն է: Ս. Մարտինը և Բ. Միլանովիչը 1988-93 թթ. համար ստացել են հակասող արդյունքներ, քանի որ եկամուտների համադրության համար Միլանովիչն օգտագործել է անվանական գնողունակության պարիտետը և հետազոտությունը կատարել է հիմք ընդունելով տնային տնտեսությունների եկամուտներն ու ծախսերը, իսկ Ս. Մարտինն օգտագործել է 1996 թ. իրական գնողունակության պարիտետը և հետազոտությունը կատարել մեկ շնչի հաշվով՝ ՀՆԱ-ի հիման վրա: Միլանովիչը ասիական երկրների բնակչությանը դիտարկել է գյուղ/քաղաք տեսանկյունից: Ս. Մարտինը գծային ժամանակային տրենողի հիման վրա գնահատել է որոշ երկրների բացակայող տվյալները 1970-1998 թթ. և, ի տարբերություն Միլանովիչի, չի ներառել Արևելյան Եվրոպայի անցունային տնտեսությամբ երկրները: Բոր Սաքըլիֆի հետազոտություններում գլոբալ անհավասարության աճի պատճառը, կարծում ենք, հաշվարկներում բոլոր երկրներին հավասար կշիռներ վերագրելն է: Որոշ հեղինակների աշխատանքներում գլոբալ անհավասարությունը իրականից մեծ է ներկայացվում եկամուտները ոչ թե գնողունակության պարիտետով, այլ ԱՄՆ դոլարով արտահայտված շուկայական փոխանակային կուրսով գնահատելու արդյունքում<sup>29</sup>:

**Կարծում ենք՝ գլոբալ անհավասարությունը գնահատելիս աշխարհի**

<sup>27</sup>Տե՛ս Bourguignon F., Morrison C. The size distribution of income among world citizens, 1820-1990, American Economic Review, 2002. September, էջ 727-744:

<sup>28</sup>Զինիի ինդեքսը անհավասարության վիճակագրական չափանիշ է, որը արժեքները ենթունում 0-ից 1 միջակայքից: 0 արժեքը նշանակում է բոլոր անձանց համար հավասար եկամուտ:

<sup>29</sup>Տե՛ս Wade R. Is Globalization Reducing Poverty and Inequality? World Development Vol. 32, № 4, էջ 567–589, 2004:

յուրաքանչյուր բնակչի հավասար մասնակցությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է երկրներին տալ կշիռներ՝ ըստ բնակչության թվաքանակի: Եկամուտների միջերկրային համադրության համար նպատակահարմար է կիրառել գնողունակության պարիստետը, ոչ թե փոխանակային կուրսը: Նման մեթոդաբանության կիրառման դեպքում գլոբալ անհավասարությունը դրսևորում է անկման միտում:

Եկամուտների գլոբալ անհավասարությունը չափելիս եկամուտների ներերկրային բաշխումները հարաբերականորեն փոքր դեր ունեն: Անհավասարությունը աշխարհի բոլոր բնակչիների միջև հաշվարկվում է ներերկրային և միջերկրային անհավասարությունների հիման վրա: Եկամուտների ներերկրային բաշխումը ներկայացնում է տարբեր դասերի հարաբերակցությունը երկրի ներսում, միջերկրային բաշխումը՝ երկրի դիրքը եկամուտների համաշխարհային բաշխման մեջ: Անձի եկամտի վրա ներգործում են սեռը, կրթությունը և մի շարք այլ գործոններ, բայց գլոբալ անհավասարության տեսանկյունից ամենակարևոր գործոնը այն երկրի դիրքն է (երկրի միջին եկամուտը), որի քաղաքացին է տվյալ անձը:

Աշխարհի մասշտաբով ներերկրային անհավասարությունը որոշակի միտում չի դրսնորում. որոշ երկրներում այն աճել է (Չինաստան, ԱՊՀ երկրներ, ԱՄՆ), մյուսներում՝ նվազել (Վիետնամ, Ուգանդա), մինչդեռ զարգացած երկրներում անհավասարությունն աճել է: Եկամուտների անհավասարության աճն այս երկրներում հիմնականում տեղի է ունենում բաշխման վերևի կվինտիլի եկամուտների աճի և ոչ թե ներքևի կվինտիլի եկամուտների անկման հետևանքով<sup>30</sup>: ԱՄՆ-ում 1979-97 թթ. ամենահարուստ մեկ տոկոս ընտանիքների եկամուտները հարկերի վճարումից հետո աճել են գրեթե 160 տոկոսով, իսկ եկամուտների բաշխման միջին մասում՝ միայն 10 տոկոսով: Ամենաբարձր եկամուտները ունեցող մեկ տոկոս խմբի ներսում օգուտների մեծ մասը կենտրոնացել է վերևի 0,1 տոկոսի մոտ<sup>31</sup>: Մեծ Բրիտանիայում անհավասարությունն ավելի մեծ է, քան Եվրոպական մեծ տերություններում: 2008-2009 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո այն ավելի խորացավ. 2008-2013 թթ. գնաճը Մեծ Բրիտանիայում կազմեց 20 տոկոս. Էներգակիրների գներն աճեցին 60, իսկ սննդամբերինը՝ 30 տոկոսով: Այնտեղ ցածր եկամտով տնային տնտեսությունները ճգնաժամից տուժեցին առավելագույնս<sup>32</sup>:

Դեցիլային գործակցով (դեցիլային խմբերի միջին եկամուտների հարաբերությամբ) գնահատելու դեպքում գլոբալ անհավասարությունը ներկայանում է ավելի մեծ, քան Զինիի գործակցով գնահատելիս: 2005 թ. աշ-

<sup>30</sup> Տե՛ս Senior B. Fellow, Economic Studies Program “Has Income inequality really increased in US?” The Brookings Institution, January 11, 2007, Smeeding T. Globalisation, Inequality and the Rich Countries of the G-20: Evidence from the Luxembourg Income Study (LIS). Globalisation, living standards and inequality. Continuing Challenges. Proceedings of a Conference. May 2002, էջ 179-207:

<sup>31</sup> Տե՛ս Wade R. Is Globalization Reducing Poverty and Inequality? World Development Vol. 32, № 4, 2004, էջ 578, Borjas J., Ramey A. Rising wage Inequality in the United States: Cause and Consequences-Time Series Evidence on the Source of Trends in Wage Inequality, American Economic Review, 1995, Vol. 84, Issue 2, էջ 10-16:

<sup>32</sup> Տե՛ս Cribb J., Hood A., Joyce R., Phillips D. Living Standards, Poverty and Inequality in the UK: Institute for Fiscal Studies. June 2013:

խարիի բնակչության ամենահարուստ 10 տոկոսը ստանում էր աշխարիի եկամուտների 55 տոկոսը, իսկ ամենաաղքատ 10 տոկոսը՝ եկամուտների 0,44 տոկոսը (տե՛ս այսուսակ 6): Խորացել է եկամուտների թվաքացումը ամենահարուստ դեցիլի ներսում: 2005 թ. աշխարիի բնակչության ամենահարուստ մեկ տոկոսը ստանում էր համաշխարհային եկամուտների 13,4 տոկոսը, 5 տոկոսը՝ 36,5 տոկոս:

#### **Աղյուսակ 6**

#### **Եկամտի բաշխումը 2005 թ.<sup>33</sup>**

Աշխարիի բնակչության տոկոսը	Գնողունակության պարիտետով հաշվարկված եկամտի (գումարային) տոկոսն աշխարհում	Գերմանիայի օրինակը (Եկամտի տոկոսը՝ գումարային)
5	0,14	1,3
10	0,44	3,3
25	1,9	11,1
50	6,6	28,9
80	25,0	60,1
90	45	75
Վերևի 10	55	25
Վերևի 5	36,5	18,4
Վերևի 1	13,4	5,8

Եթե վերջին տասնամյակներում գլոբալ անհավասարությունը դրսևորում է անկման, իսկ աշխատավարձերի անհավասարությունը՝ աճի միտում, ապա դա բնավ զարմանալի չէ, որովհետև նախ՝ տիպիկ զարգացող երկրներում բնակչության ոչ մեծ մասը վարձու աշխատողներ են, տնային տնտեսությունների մեծ մասն ընտրանքում գյուղացիներ են: Յարուստ երկրներում, որտեղ բնակչության գերակշռող մասը վարձու աշխատողներ են, աշխատավարձերի անհավասարության աճը հանգեցնում է եկամուտների անհավասարության աճի: Երկրորդ՝ զարգացած երկրներում աշխատավարձերի բաշխման անհավասարությունը հաճախ չափվում է մինչ հարկումը եղած աշխատավարձով: Լավ արտահայտված պրոգրեսիվ եկամտահարկ ունեցող երկրի եկամուտների անհավասարությունը չի համընկնում աշխատավարձերի անհավասարությանը:

Տնտեսագիտական գրականությունում կարծիքներ կան<sup>34</sup>, որ թեև զարգացող երկրներն ունեն մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի ավելի արագ տեմպ, քան զարգացած երկրները, բայց և այնպես առաջընթացը դանդաղ է ընթանում, և հաջողությամբ զարգացող երկրների եկամուտները առաջիկա շուրջ մեկ հարյուրամյակում չեն հասնի հարուստ երկրների եկամուտներին:

Կարծում ենք, գլոբալ անհավասարության կրծատման ուղիներից են նախ՝ զարգացող երկրներում գլոբալացման առավելություններն օգտա-

<sup>33</sup> Տե՛ս **Milanovic B.** Global income inequality: the past two centuries and implications for 21st century Autumn 2011, էջ 36:

<sup>34</sup> Տե՛ս Commonwealth Treasury of Australia 2001, էջ 42-44:

գործելու (նորագույն տեխնոլոգիաների ներդրում, օտարերկրյա ուղղակի ներդրումներ և այլն) միջոցով տնտեսական աճի բարձր և կայուն տեմպերի ապահովումը, երկրորդ՝ աշխատութիւն միջազգային միգրացիան, որը բարձրացնում է կենսամակարդակը արտագաղթի երկրում (միգրանտների դրամական փոխանցումները մեծացնում են ամբողջական պահանջարկը և նպաստում տնտեսական աճին, աշխատանքի շուկայում աշխատութիւն կրատումը բարձրացնում է երկրում մնացածների աշխատավարձը, հայրենիք վերադառնալով՝ միգրանտը իր հետ բերում է արտասահմանյան փորձը և գիտելիքները), երրորդ՝ յուրաքանչյուր երկրի կառավարության կողմից իրականացվող եկամուտների վերաբաշխման քաղաքականությունը:

Այսպիսով, գլոբալ անհավասարությունը վերջին 30 տարում նվազել է, որը համաշխարհային անհավասարության աճի երկարաժամկետ միտումից հետո հուսադրող շրջադարձ է: Եկամուտների անհավասարությունն աշխարհում կրճատվել է, սակայն աղքատության դեմ պայքարը համասեռ չի եղել. այն դեպքում, երբ նախկինում աղքատ մի քանի երկրներ հասել են մեծ հաջողությունների, մյուսներում նույնիսկ գրանցվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի նվազում:

**Աղքատության վրա գլոբալացման ազդեցության քանակական գնահատումը:** Աղքատության վրա գլոբալացման ազդեցությունը քանակապես գնահատելու նպատակով 214 երկրի 2000-2012 թթ. տվյալների հիման վրա կատարել ենք ռեգրեսիոն վերլուծություն: Ռեգրեսիայի մոդելներում բոլոր փոփոխականների համար օգտագործել ենք 2000-2012 թթ. տվյալների միջինը: Կատարել ենք հետևյալ նշանակումները.

Gini - Եկամուտների անհավասարության Զինիի գործակից,

GDPpc - մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ԱՄՆ դոլար,

Pov - աղքատության մակարդակ<sup>35</sup>, բնակչության տոկոսը,

Fdi - օտարերկրյա ուղղակի ներդրումներ, ԱՄՆ դոլար,

Ex - արտահանում, տոկոսը ՀՆԱ-ի նկատմամբ,

Lexp - կյանքի սպասվող տևողություն, տարի:

Մոդելի հատկությունն է.

$Pov_i = b_0 + b_1 * Fdi_i + b_2 * Gini_i + b_3 * Lexp_i + b_4 * Ex_i + b_5 * GDPpc_i + u_i$

Նշենք, որ աղքատության, տնտեսական աճի և անհավասարության փոփոխականացությունը բարդ է. աղքատությունն ինքնին կարող է ներգործել տնտեսական աճի վրա: Ենդոքենության և հակադարձ պատճառականության առկայության պատճառով դժվար է աղքատության մոդելի համար լավ հատկություն ստանալ: Ուստի մեր հիմնական նպատակն է ստուգել գլոբալացման ներգործությունը աղքատության վրա:

Գլոբալացումը ներկայացնող փոփոխականներ ենք համարել առևտիրի ազատականացումը, որը չափվում է արտահանման տոկոսը ՀՆԱ-ի նկատմամբ փոփոխականով և ֆինանսական ինտեգրացիայի ցուցանի-

<sup>35</sup> Յուրաքանչյուր երկրի համար դիտարկվել է ազգային աղքատության գծից ցածր ապրող բնակչության տոկոսը:

շը, որը չափվում է օտարերկրյա ուղղակի ներդրումներ փոփոխականով: Այսուսակ 7-ում ներկայացված են ռեգրեսիոն վերլուծության արդյունքները. t-վիճակագրությունները գրված են փակագժերում, բոլոր գործակիցները գնահատված են՝ հաշվի առնելով տարացրվածությունը (հետերոսկետաստիկությունը):

#### **Աղյուսակ 7**

##### **Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները. Կախյալ փոփոխական՝ աղքատության մակարդակ**

Անկախ փոփոխական	1	2	3	4
Fdi	4,97E-10** (2,41)	2,95E-10* (1,85)	4,18E-10** (2,50)	3,28E-10* (2,00)
Gini	0,794*** (4,18)	0,509*** (3,40)	0,525*** (3,32)	0,621*** (3,97)
Lexp		-1,199*** (-7,40)	-0,908*** (-4,39)	-0,598** (-2,56)
Ex			-0,194** (-2,53)	-0,138* (-1,79)
GDPPc				-0,001** (-2,51)
Adjusted R-squared	0,20	0,54	0,47	0,51
White Heteroskedasticity				
Test F-Statistic	1,16	0,59	0,50	0,50
Probability	0,33	0,74	0,83	0,87
Obs*R-squared	4,67	3,81	3,87	5,04
Probability	0,32	0,70	0,79	0,83
Akaike info criterion	8,31	7,78	7,81	7,74

Նշանակալիության \*տասը տոկոս, \*\*հինգ տոկոս, \*\*\* մեկ տոկոս մակարդակներ:

Ռեգրեսիայի արդյունքների համաձայն՝ գլոբալացման ազդեցությունը աղքատության վրա միջազգային առևտության և ֆինանսական գլոբալացման տեսանկյունից տարբեր է: Միջազգային առևտություն (Ex փոփոխականը) վիճակագրութեն նշանակալի բացասական ազդեցություն ունի աղքատության մակարդակի վրա, մինչդեռ ֆինանսական ինտեգրացիան ունի նշանակալի դրական ազդեցություն: Միջազգային առևտության կապերի զարգացումը նպաստում է բնակչության կենսանակարդակի աճին և աղքատության կրճատմանը, մինչդեռ ֆինանսական գլոբալացումը մեծացնում է աղքատությունը: Ֆինանսական ազատականացումը զարգացող երկրներում մեծացնում է տնտեսական աճի անկայունությունը, որով և անուղղակիորեն կարող է վնասել աղքատներին: Զարգացող երկրները ավելի մեծ չափով են տուժում հանաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերից թեկուզ և այն պատճառով, որ տեղական ֆինանսական շուկաները պակաս առաձգական են:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի գործակիցը բացասական է նշանակալիության հինգ տոկոս մակարդակի վրա. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճը նպաստում է աղքատության կրճատմանը: Եկամուտների անհավասարության

գործակիցը դրական վիճակագրորեն ակնառու է նշանակալիության մեկ տոկոս մակարդակի վրա: Սովորաբար ավելի մեծ անհավասարության երկրներն ունեն ավելի աղքատ բնակչություն:

Այսպիսով, գլոբալացումը երկակի ներգործություն ունի աղքատության մակարդակի վրա. ֆինանսական գլոբալացումը նպաստում է աղքատության աճին, իսկ առևտրի ազատականացումը՝ կրծատմանը: Այնուհանդերձ, գլոբալացումը աղքատությունը որոշող միակ գործոնը չէ: Նախկինում լավ ինտեգրված երկրները, հատկապես Արևելյան Ասիայում, ներառյալ ճապոնիան և «ասիական վագրերը», ոչ թե պարզապես ազատականացրել են արտաքին ռեժիմը, վերակարգավորել ներքին շուկաները կամ սեփականաշնորհել պետական ձեռնարկությունները, այլ իրենց տնտեսությունն ազատականացրել են աստիճանաբար ու ընտրանքային. դա սկսել են հայրենական արդյունաբերության զարգացմամբ: Հայրենական մրցունակ արդյունաբերության ստեղծմանն ուղղված քաղաքականությունը համաշխարհային տնտեսությանը լավագույնս ինտեգրվելու գրավականներից է:

**Եզրակացություններ:** 1980-ականներից սկսված գլոբալացման նոր դարաշրջանում.

- զարգացող երկրները, հատկապես ասիական խիտ բնակեցված երկրները, մեկ շնչի հաշվով ապահովեցին տնտեսական աճի ավելի բարձր տեմպեր, քան զարգացած երկրները: Տնտեսական աճի և աղքատության մակարդակի միջև առկա է ուժեղ կոռելյացիոն կապ,

- աղքատության մակարդակն աշխարհում դրսևորում է նվազման միտում: Փոխվում է գլոբալ աղքատության կառուցվածքը. ծայրահեղ աղքատությունը «կենտրոնանում է» Աֆրիկայում: Անբողջ աշխարհում հարաբերական աղքատությունն աճում է,

- Եկամուտների անհավասարությունն աճում է գրեթե բոլոր զարգացած երկրներում, իսկ զարգացող երկրներում անհավասարության որոշակի միտում չի նկատվում,

- աշխարհի յուրաքանչյուր բնակչի հավասար մասնակցությունն ապահովելու նպատակով գլոբալ անհավասարությունն անհրաժեշտ է գնահատել բնակչությամբ կշռված: Բնակչությամբ կշռված գնողունակության պարիստետով հաշվարկված գլոբալ անհավասարությունը դրսևորում է անկման միտում,

- գլոբալ անհավասարության անկման միտումը և երկրների ներսում աշխատավարձերի անհավասարության աճի միտումը միմյանց չեն հակասում,

- դեցիլային գործակցով հաշվարկված, ինչպես նաև՝ բնակչությամբ չկշռված և/կամ շուկայական փոխանակային կուրսով գնահատված գլոբալ անհավասարությունը ներկայացնում է անհավասարության ավելի խորքային պատկեր, քան իրականում կա,

- գլոբացումը ունի երկակի ներգործություն աղքատության մակարդակի վրա. ֆինանսական գլոբալացումը նպաստում է աղքատության աճին, իսկ առևտրի ազատականացումը՝ կրծատմանը:

**Բանալի բառեր** – գլոբալ անհավասարություն, աղքատություն, տնտեսական աճ, զարգացող երկրներ, գնողունակության պարփակություն, առևտորի ազատականացում, ռեգրեսիոն վերլուծություն

**АЛВАРД ХАРАТЯН – Глобальное неравенство и бедность: современные проблемы.** – В работе показаны причины методических трудностей, возникающих при количественной оценке глобального неравенства и бедности. Изучались тенденции глобального неравенства, абсолютной и относительной бедности. Рассчитана корреляционная связь между экономическим ростом и уровнем бедности. С применением многомерных регрессионных моделей выявлено двойное воздействие глобализации на уровень бедности.

**Ключевые слова:** глобальное неравенство, бедность, экономический рост, развивающиеся страны, паритет покупательной способности, либерализация торговли, регрессионный анализ

**ALVARD KHARATYAN – Global Inequality and Poverty: Present-Day Problems.** – In this paper, the causes of technical difficulties encountered in quantifying global inequality and poverty are identified. The trends in global inequality, absolute and relative poverty are studied.

The correlation between economic growth and poverty level is calculated. With the use of multivariate regression models a double impact of globalization on poverty is revealed.

**Key words:** global inequality, poverty, economic growth, developing countries, purchasing power parity, trade liberalization, regression analysis

---

## ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

### ՎԱՐԴՈՒՅԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Ժամանակակից տնտեսության կառավարման հիմնական նպատակներից են սեփականության, այլ գույքային իրավունքների պաշտպանությունը և դրանց հիման վրա կառուցված հարաբերությունների (հատկապես՝ քաղաքացիական պայմանագրերից ծագող պարտավորությունների) զարգացումը այն հաշվով, որպեսզի պետություն- տնտեսավարող սուբյեկտ շրջանակում չտուժեն վերջինիս իրավունքները և շահերը:

Կարևոր է նաև նկատել, որ արդի շուկայական տնտեսության կառավարման տարածված ձևերի արմատները հասնում են արդյունաբերական հեղաշրջման ժամանակահատված, ուստի ամենկին էլ պատահական չէ, որ սեփականության կառավարման առավել զարգացած մեխանիզմները պատճականորեն ձևավորվել են Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իսպանիա), ինչպես նաև ճապոնիայում, ԱՍԽ-ում և Կանարյանում<sup>1</sup>:

Զարգացած երկրներում սեփականության ժամանակակից կառուցվածքը կարող է բնութագրվել որպես սեփականության երկու հիմնական կատեգորիաների՝ մասնավոր և պետական սեփականության արդյունավետ համադրություն, որոնցից յուրաքանչյուրն ուրույն նշանակություն ունի տվյալ երկրի տնտեսության համար: Սեփականության հարաբերությունների զարգացնան պատմությունը ցույց է տալիս տնտեսության պետական և մասնավոր հատվածների մշտական պայքարը՝ պետության կողմից մասնավոր նախաձեռնության խրախուսումը կամ ճնշումը, որին հետևում են կամ ակտիվների մեջ մասի փոխանցումը մասնավոր հատվածին, կամ էլ ընդհակառակը՝ արտադրության անկումն ու ճգնաժամը: Դրանով պատմությունը ապացուցել է երկու անհաջող ախոյանների՝ պետության և մասնավոր բիզնեսի համագործակցության և համապատասխանաբար՝ պետական ու մասնավոր հատվածների փոխազդեցության արդյունավետությունը:

Քննարկենք աշխարհում լայն տարածում ստացած սեփականության կառավարման ձևերից մեկը՝ հավատարմագրային (անգլ. trust) կառավարումը:

Գույքի հավատարմագրային կառավարման հարաբերությունները տարածված են աշխարհի շատ երկրներում: Դրանք ունեն որոշ տարբերություններ՝ պայմանավորված առաջին հերթին տվյալ երկրի իրավական համակարգով: Երավունքի անգլո-սաքսոնական համակարգ ունեցող երկրներին բնորոշ է թրաստի, իսկ մայորամաքրային համակարգով երկրներին՝ հավատարմագրային կառավարման ինստիտուտը:

<sup>1</sup>Տե՛ս «Управление государственной собственностью: Учебник». М., 1997, էջ 195:

Թրաստի ինստիտուտի հայրենիքը Մեծ Բրիտանիան է, քանի որ այս-  
տեղ է այն առաջին անգամ ստացել իրավական կարգավիճակ և զարգա-  
ցել որպես ֆինանսական շուկայի լիարժեք ինստիտուտ: Անգլիացի իրա-  
վաբանները ոչ միայն մշակեցին, այլև կատարելագործեցին գույքի տիրա-  
պետման ձևը, համաձայն որի՝ այն պատկանում է թրաստին, բայց վե-  
րահսկվում է նախկին տիրոջ կողմից: Թրաստի ինստիտուտը զարգացել  
20-րդ դարի սկզբին և ակնհայտ տնտեսական առավելությունների շնոր-  
հիկ՝ տարածվել նաև այլ երկրներում:

Հավատարմագրային սեփականությունը ընդհանուր իրավունքում  
հարաբերությունների համակարգ է, որի դեպքում գույքը, որը սկզբնապես  
պատկանել է հիմնադրին, փոխանցվում է հավատարմագրային սեփակա-  
նատիրոջ (կառավարչի) տնօրինմանը, սակայն դրանից առաջացող եկա-  
մուտը ստանում են շահառուները (բենեֆիցիարները): Հիմնադիրը, որը  
միաժամանակ կարող է լինել նաև շահառու, հատուկ համաձայնության  
շրջանակներում իրեն պատկանող արժեքները փոխանցում է կառավարչի  
տնօրինությանը, որը պարտավոր է դրանց հետ կատարել այնպիսի գոր-  
ծարքներ, որոնք շահառուներին ապահովում են առավելագույն շահույթ  
կամ համապատասխանում են հիմնադիրի այլ հրահանգներիմ<sup>2</sup>:

Թրաստի՝ որպես սեփականության այլընտրանքային ծեփ առանձնա-  
հատկությունը այն է, որ թրաստի գույքը չի պատկանում ոչ հիմնադրին  
(նա կորցնում է սեփականության իրավունքը գույքը կառավարչին հանձ-  
նելու պահից), ոչ կառավարչին (նա միայն կառավարում է այդ գույքը և  
գույքի տիտղոսի ձևական տերն է), ոչ էլ շահառուներին՝ մինչև թրաստի  
դադարման ժամկետը: Կարելի է ասել, որ թրաստն ինքնուրույն սեփակա-  
նություն է, որն անխօնելիորեն կապված է այն ստեղծողի (թրաստի հիմ-  
նադրի) և շահառուների հետ:

Իրավունքի մայոցամաքային համակարգ ունեցող երկրներում գոր-  
ծում է թրաստի այլ հասկացություն՝ «հավատարմագրային կառավարում»,  
սակայն դատելով դրա սահմանումից՝ տնտեսական բնույթը ըստ  
եռթյան մնում է նույնը: Մի շարք երկրներում, այդ թվում՝ նաև Հայաստա-  
նում<sup>3</sup> և Ռուսաստանում, հավատարմագրային կառավարման հանձնված  
գույքը չի համարվում սեփականության առանձին ծեփ: այն շարունակում է  
մնալ հիմնադրի սեփականությունը, որի վրա կարող են տարածվել նրա  
պարտավորությունները:

Հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող է լինել ինչպես  
անշարժ, այնպես էլ շարժական ցանկացած գույք: Մտավոր սեփականու-  
թյան օբյեկտները նույնպես կարող են փոխանցվել թրաստի:

Հիմնադիրն իրավունք ունի իր գույքը փոխանցել ինչպես իր կյանքի  
ընթացքում (թրաստ կյանքի ընթացքում, անգլ. Inter Vivos Trusts), այնպես  
էլ իր մահվանից հետո (կտակային թրաստ, անգլ. Testamentary Trusts):  
Կառավարիչը (trustee) պատասխանատվություն է կրում թրաստային հա-  
մաձայնության պայմանների կատարման համար և որպես կանոն ստա-  
նում է հիմնադրի (trustor) գույքը կառավարելու լայն լիազորություններ,  
ընդ որում հիմնադրի կողմից նախատեսված դեպքերում կարող է ստանալ

<sup>2</sup> Տե՛ս «Free Legal Dictionary» <http://legal-dictionary.thefreedictionary.com/trust>

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք», հոդված  
954:

նաև թրաստային եկամուտը և կապիտալը շահառուների միջև բաշխելու հատուկ իրահանգներ կամ որոշել, թե ինչպես պետք է սահմանվեն թրաստի դադարման պահը և գույքի բաշխումը շահառուներին: Նման պայմանները, որպես կանոն, տեղ են գտնում հիմնադրի կողմից կառավարչին հասցեագրովող նամակ-ցանկության մեջ (անգլ. letter of wishes): Հիմնադիրը նաև իրավունք ունի նախատեսել կառավարչին փոխարինելու պայմանը, իրեն վերապահել այդ իրավունքն այլ անձի փոխանցելու հարցը և այլն: Կառավարչի ծառայությունները վճարվում են թրաստի շահառուների կամ հիմնադրի կողմից՝ սովորաբար ստացված շահույթից որոշակի տոկոս<sup>4</sup>: \*\*\*

Հավատարմագրային կառավարումը կարող է կիրառվել հետևյալ նպատակներով.

1. **Անանունություն:** Երկրների մեջ մասում կտակի բովանդակությունը (կտակողի նահիքանից հետո) և անշարժ գույքի սեփականատերերի անունները հանրությանը հասանելի են: Թրաստի շահառուների անունները սովորաբար անհայտ են, այդ պատճառով անշարժ գույքի տիրապետումը կամ կտակված գույքի բաշխումը թրաստի միջոցով թույլ է տալիս պահպանել մասնակիցների գաղտնիությունը:

2. **Գույքի համատեղ տիրապետում:** Թրաստը մի քանի սեփականատերերի կողմից ունեցվածքը (օրինակ՝ անշարժ գույքը) համատեղ տիրապետելու հարմար մեխանիզմ է:

3. **Կապիտալի պաշտպանումը վատնումից:** Թրաստները կարող են օգտագործել շահառուներին (օրինակ՝ հիմնադրի երեխաներին) պաշտպանելու համար փողը ոչ արդյունավետ ծախսելուց: Այսպես, թրաստի պայմանները կարող են սահմանափակել փողի օգտագործման չափը կամ տարիքը, որից սկսած՝ երեխան կարող է գույքը տնօրինելու իրավունք ստանալ:

4. **Բարեգործություն:** Որոշ երկրներում բարեգործության նպատակներին ուղղված ամբողջ գույքը պետք է ունենա հավատարմագրային կառավարում:

5. **Թոշակային պլաններ:** Կորպորատիվ թոշակային ֆոնդերը հաճախ կազմակերպված են որպես թրաստ, որտեղ ձեռնարկությունը հիմնադիրն է, իսկ աշխատողները՝ շահառուները:

6. **Կորպորատիվ բարդ կառուցվածքներ:** Ֆինանսների և ապահովագրության ոլորտում թրաստները ընկերությունների հետ հաճախ հանդես են գալիս որպես իրավաբանական անձինք:

7. **Սեփականությունը և եկամուտները թաքցնելը:** Թրաստը թույլատրում է անանունություն, որի դեպքում միևնույն անձը կարող է լինել և հիմնադիր, և շահառու (բայց ոչ կառավարիչ), այսինքն՝ գույքից ստանալ ողջ օգուտը, սակայն թաքցնել այն վարկատուններից: Գույքի գգալի մասի ձեռքբերումը թրաստի անվան տակ կամ փոխանցումը թրաստի թույլ է տալիս հայտնել սեփական ակտիվների բացակայության կամ անբավարության մասին և հավակնել, օրինակ, ցածր հարկադրույթի կիրառման կամ պետությունից օգնություն ստանալու:

<sup>4</sup> Տե՛ս Harwood B. M., Jacobus C. J. Real estate principles. Prentice Hall, NJ, 1996, էջ 84:

**8. Հարկերից խուսափում:** Անանունությունը և հիմնադրի, շահառուների ու կառավարիչների բաժանումը թրաստը դարձնում են հարկերից խուսափությունը և հարկերի օրենսդրությամբ պարտավոր չէ տեղեկացնել թրաստի եկամուտների մասին այն երկրի հարկային տեսչությանը, որտեղ ապրում են շահառուները: Թրաստի այս առանձնահատկությունները օգտագործվում են նաև փողերի լվացման համար: Թրաստը հարկերից խուսափելու միջոց է նաև պրոգրեսիվ եկամտահարկի դեպքում, երբ եկամտաբեր գույքը պաշտոնապես հանձնված է թրաստի (շատ երկրներում այդ սողանցքը փակ է, և թրաստի համար հարկադրույթը շատ բարձր է): Բացի այդ, գույքի փոխանցումը թրաստի շահառուներին ազատում է ժառանգության հարկից, որը գոյություն ունի թրաստ կիրառող համարյա բոլոր երկրներում:

Հիմնվելով հավատարմագրային կառավարման ծառայությունների միջազգային փորձի վրա՝ թրաստային գործառնությունները, ըստ կառավարման տեսակի, կարելի է դասակարգել երեք հիմնական խմբի:

- 1) անձնական ծառայություններ առանձին ֆիզիկական անձանց,
- 2) կորպորատիվ ծառայություններ իրավաբանական անձանց,
- 3) կոլեկտիվ ներդրումների ֆոնդեր (թրաստ ֆոնդեր):

Համաշխարհային պրակտիկայում ֆիզիկական անձանց համար նախատեսված հավատարմագրային կառավարման ծառայություններից է թրաստային հաշվի վարումը: Այն կարող է լինել արժութային, արժեթղային կամ համակցված: Հավատարմագրային կառավարման մյուս տեսակը կորպորատիվն է, որով հետաքրքրվում են իրավաբանական անձինք՝ ընկերությունները, կորպորացիաները, սեփականության տարբեր ձևեր ունեցող կազմակերպությունները:

Ինստիտուցիոնալ հավատարմագրային կառավարման անհրաժեշտությունը ծագում է այն դեպքում, երբ գույքի սեփականատերը, որը նաև նագիտացված չէ դա կառավարելու, փոխանցում է այդ գույքը կառավարման արհեստավարժ մասնագետի՝ առավել արդյունավետ օգտագործելու նպատակով: Ընկերություններին տրամադրվող ծառայությունները կարելի է դասակարգել ըստ բաժնետոնսերի ենթակայի արդյունավետ տեղաբաշխմանք, ինչպես նաև փոխառությունների սպասարկման:

Հավատարմագրային կառավարումը կարող է ենթադրել ֆինանսական ակտիվների ներդրման հնարավորություն ոչ միայն արժեթղթերում, այլև տարբեր երկրների արժույթներում: Եթե սահմանափակվենք միայն ֆոնդային շուկայով, ապա հավատարմագրային կառավարիչը կատարում է նույն գործառույթները, ինչ բաժնեմասային ներդրումային ֆոնդի (ԲՆՖ) կառավարիչը. գնում և վաճառում է արժեթղթեր և կատարում է այդ ամենը այնպես, որ դրանց ստանա ներդրումային եկամուտ: Սակայն հավատարմագրային կառավարումը ենթարկվում է այլ օրենսդրական կարգավորման: Հավատարմագրային կառավարիչը պարտավոր չէ միջոցների մի մասը պահել արժեթղթերի տեսքով, այլ կարող է օգտագործել ֆյուչերսներ և օպցիոններ: Եթե գները նվազում են, հնարավոր է վաճառել բոլոր արժեթղթերը և հաղթահարել անկումը: Չկա նաև արժեթղթերի պորտֆելի դիվերսիֆիկացման պահանջ:

Երբեմն բրոքերային ընկերություններն առաջարկում են ՊԱՍՄ-հաշվի

(անգլ. *Percent Allocation Management Module*, PAMM -տոկոսի բաշխման կառավարման մոդուլ) ծառայություն՝ հիմնադիրների կողմից ակտիվները առավել արդյունավետ վերահսկելու համար, որը տեխնիկապես զգալիորեն հեշտացնում է ինչպես միջոցների փոխանցումը կառավարման, այնպես էլ միջոցների վերադարձը:

Ներկայումս գոյություն ունեն ինչպես մասնավոր թրաստներ (որոնք գործում են ի շահ որոշակի անձանց կամ ընկերությունների), այնպես էլ հանրային, որոնք կատարում են սոցիալական գործառություններ և կազմակերպում են ի շահ անսահմանափակ թվով անձանց: Դամաշխարհային պորտֆուլյուս գոյություն ունեն թրաստի բազմաթիվ տեսակներ, որոնք բավարարում են ինչպես առանձին ֆիզիկական անձանց գույքային շահերը, այնպես էլ տարբեր առևտրային կառուցվածքների ֆինանսական հավակնությունները: Գոյություն ունեն ֆիքսված բաժնեմասով թրաստներ, որոնց դեպքում շահառուների թիվը և նրանց բաժնեմասերը հստակ որոշված են: Բարեգործական թրաստը ենթադրում է ակտիվների փոխանցում կառավարման որոշակի սոցիալական հարցեր լուծելու նպատակով (այս սխեմայով է աշխատում, օրինակ, Սորոսի ֆոնդը): Պաշտպանական թրաստը ենթադրում է գույքի հավատարմագրային կառավարում՝ ի շահ անձի, որն օգտվում է դրա միայն տնտեսական օգուտներից, իսկ կառավարման գործընթացին չի մասնակցում: Դիսկրեցիոն թրաստները, որոնք կոչվում են նաև ակտիվների պաշտպանության թրաստներ, կառավարչին ընտրության որոշակի ազատություն են տալիս շահառուների միջև կառավարումից ստացված եկամուտները բաշխելիս (որպես կանոն՝ դա տեղի է ունենում կառավարման հիմնադրի ուղղակի հրահանգով): Նման տեսակի թրաստները սովորաբար ստեղծվում են դատական և հարկային բռնագանձումներից պաշտպանվելու համար. գույքը հանձնվում է կառավարչին առանց հետկանչի:

Եվ վերջապես՝ միջազգային կամ օֆշորային թրաստը համաձայնագիր է թրաստի ստեղծման երկորի ոչ ռեզիլենտների միջև, որը նույնպես նրանց կողմից կնքվում է ոչ ռեզիլենտային ծագման հավատարմագրային սեփականության նկատմամբ: Միջազգային թրաստների ստեղծման և գործունեության հարցերը կարգավորող հիմնական փաստաթուղթը Հաագայի 1985 թ. կոնվենցիան է: Ո՞րն է թրաստային օֆշորների նշանակությունը: Օֆշորային ֆիրմայի կառավարումը ենթադրում է ընկերության իրական սեփականատերերի և դրա անվանական կառավարիչների միջև համագործակցության հավատարմագրային բնույթ, այդ պատճառով նրանց միջև հարաբերությունները ձևակերպվում են թրաստի տեսքով: Բացի այդ, օֆշորային գոտիների մեջ մասը այսօր միջազգային թրաստների համար առաջարկում է զգալի հարկային արտոնություններ, ինչպես նաև տրամադրում գույքի հավատարմագրային կառավարման տարբեր ծառայություններ: Օֆշորային ընկերությունները տարածված են այնպիսի իրավական համակարգերում, ինչպիսիք են Բահամները, Բրիտանական Վիրջինյան Կղզիները, Մեծ Կղզին, Ջերսին և Գերնսին, Նկիսը, Կիպրոսը, Մալթան, Զիբրալթարը, Հոնկոնգը, Լիխտենշտեյնը, Պանաման և այլն<sup>5</sup>:

<sup>5</sup>Տե՛ս «Траст и трастовые компании» // <http://www.offshore-mp.ru/news/company.php%3FID%3D10>

Ոուսաստանում թրաստը ծագել է 1990-ական թթ. սկզբին բանկային համակարգում. բանկերը իրավունք ստացան իրականացնել հավատարմագրային (թրաստային) գործարքներ՝ ի շահ հաճախորդների: Այնուհետև թրաստը իրավաբանորեն ձևակերպվեց 1993 թ. դեկտեմբերի 22-ին ՈԴ նախագահի «Հավատարմագրային սեփականության (թրաստի) մասին» հրամանագրով: Հավատարմագրային կառավարմանը վերաբերող հարաբերությունները վերջնականապես կարգավորվեցին 1996 թ. մարտի 1-ին՝ ՈԴ քաղաքացիական օրենսգրքի երկրորդ մասը գործողության մեջ մտնելով<sup>6</sup>:

ՈԴ-ում հավատարմագրային կառավարման օբյեկտներ կարող են լինել ձեռնարկությունները և այլ գույքային համալիրները, անշարժ գույքի առանձին օբյեկտները, արժեքները, ոչ փաստաթղթային արժեքներով հավաստագրված իրավունքները, բացառիկ իրավունքները և այլ գույք: Տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման մեջ գտնվող գույքը չի կարող փոխանցվել հավատարմագրային կառավարման: Դա հնարավոր է միայն իրավաբանական անձի լուծարման դեպքում, որի տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման ներքո գտնվում է գույքը<sup>7</sup>:

Հավատարմագրային կառավարման ինքնուրույն օբյեկտ չի կարող լինել փողը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսպես, օրինակ՝ Ոուսաստանի Դաշնությունում վարկային կազմակերպությունը, որը ԿԲ-ի կողմից տրված արտոնագրի հիման վրա իրավունք ունի իրականացնելու բանկային գործառնություններ, կարող է կնքել դրամական միջոցների հավատարմագրային կառավարման պայմանագրեր: Այլ կազմակերպությունները իրականացնում են ֆիզիկական և իրավաբանական անձանց դրամական միջոցների հավատարմագրային կառավարում միայն դաշնային օրենքով սահմանված կարգով տրամադրված արտոնագրի առկայության դեպքում: Դրամական միջոցները հավատարմագրային կառավարման հանձնելիս դրանց նկատմամբ սեփականության կառավարության իրավունքն է վերապահվում կառավարչից պահանջել դրամական միջոցների արդյունավետ կառավարման կազմակերպում: Արժեքները հավատարմագրային կառավարման հանձնելիս կառավարման հիմնադիրը չի կորցնում դրանց նկատմամբ սեփականության իրավունքը: Հավատարմագրային կառավարչի իրավունքները արժեքների նկատմամբ կարող են սահմանափակվել հատուկ նորմատիվ ակտերով: Նման սահմանափակում տեղի ունի, օրինակ, դաշնային սեփականություն հանդիսացող արժեքները մրցույթով հավատարմագրային կառավարման հանձնելիս: Դամաձայն 1996 թ. դեկտեմբերի 9-ի ՈԴ նախագահի թիվ 1660՝ «Մասնավորեցման գործընթացում ստեղծված բաժնետիրական ընկերությունների դաշնային սեփականություն հանդիսացող արժեքները մրցույթով հավատարմագրային կառավարման հանձնելու մասին» իրամանագրի՝ հավատարմագրային կառավարիչը իրավասու չէ տնօրինելու (նվիրել, վաճառել, գրավ դնել և այլն) արժեքները, իսկ բաժնետիրական ընկերության գործունեության կարևոր հարցերի վերաբերյալ նրա քվեարկությունը պետք է գրավոր համաձայ-

<sup>6</sup> Տե՛ս Օվանեսօն Ա. Траст в России – еще не реальность, но уже и не миф // РЦБ, № 24, 1996, էջ 69:

<sup>7</sup> Տե՛ս «Гражданский кодекс Российской Федерации», глава 53:

նեցվի ՌԴ կառավարության կողմից լիազորված գործադիր իշխանության դաշնային մարմնի հետ: Արժեթղթերը հավատարմագրային կառավարման հանձնելիս թույլ է տրվում դրանց միավորումը, թեպետ և դրանք կարող են հանձնված լինել կառավարման տարբեր անձանց կողմից:

ՀՀ-ում թրաստի ակտիվ զարգացումը առաջին հերթին պայմանավորված է ֆինանսական շուկայում ցածր ռիսկային արժեթղթերի եկամտարերության անկմանք, որտեղ դրա մասնակիցները բախվում են որակավորված կառավարիչների կողմից ներդրումային պորտֆելի ծևավորման անհրաժեշտությանը, և զգալիորեն աճում է հաճախորդների պահանջարկը հավատարմագրային կառավարման ծառայությունների նկատմամբ: Բացի արժեթղթերի հավատարմագրային կառավարումից՝ ստեղծվում են անշարժ գույքի հավատարմագրային կառավարման նախադրյալներ: Դեռևս չի դրսնորվել կտակային թրաստը, ինչը օրինաչափ է, քանի որ հավատարմագրային կառավարման շուկան ծևավորման և զարգացման սկզբնական փուլում է:

Առավել տարածված է, այսպես կոչված, ֆինանսական թրաստը, որի դեպքում հաճախորդը (կառավարման հիմնադիրը) ֆինանսական հաստատությանն է տրամադրում արժեթղթեր, արժեթղթերում ներդրում կատարելու նպատակով նախատեսված դրամական միջոցներ, հավատարմագրային կառավարման հետևանքով ստացված դրամական միջոցներ՝ հօգուտ հաճախորդի կամ նրա կողմից նշված երրորդ անձի՝ շահույթ ստանալու նպատակով դրանք կառավարելու համար:

Ներկայումս ՀՀ-ում յուրաքանչյուր խոշոր ֆինանսական կառույց պատրաստ է իր հաճախորդներին առաջարկել հավատարմագրային կառավարման ծառայություններ՝ նպատակ ունենալով աջակցել Հայաստանի ֆինանսական համակարգի զարգացմանը. ՀՀ բնակչության լայն զանգվածներին, արտասահմանյան ներդրողներին ներգրավել ՀՀ ֆինանսական շուկա, ինչպես նաև սպասարկել տնտեսության առաջատար ընկերություններին, որոնց համար արդիական են ակտիվների կառավարման, կենտրոնացված ֆոնդների ստեղծման հարցերը:

«Փրայմ կապիտալ» ներդրումային ՍՊԸ-ն իր հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի (և կամ) արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների հավատարմագրային կառավարման ծառայություններ: Հավատարմագրային կառավարումն իրականացվում է՝ առաջնորդվելով հաճախորդի ընտրած ներդրումային ռազմավարությամբ՝ հանձնայն ներդրումային հայտարարագրի: Հավատարմագրային կառավարման ծառայություն մատուցելու շրջանակներում ընկերությունը չի խոստանում եկամտաբերության որևէ երաշխավորված մակարդակ, և արժեթղթերում ներդրումների կատարման ռիսկը կրում է հաճախորդը: Հավատարմագրային կառավարիչը չի փոխհատուցում հաճախորդի վճասները, եթե դրանք կառավարչի կողմից անբարեխիղ վարքագծի հետևանք չեն: Հավատարմագրային կառավարման հանձնված ակտիվների առաջնային մուտքի նվազագույն չափը 20 000 000 ՀՀ դրամ է<sup>8</sup>:

«Ամերիա ասեր մենեօմենք» ՓԲԸ մասնագետները հավատարմագրային կառավարման նախապատրաստական փուլում իրենց հաճախորդնե-

<sup>8</sup>Տե՛ս <http://primecapital.am/>

րին ներկայացնում են տեղեկատվական, վերլուծական նյութեր, ներդրումային գործիքներ, ինչն օգնում է նրանց կայացնել ներդրումային որոշում, որի համաձայն՝ ընկերության մասնագետները կառավարում են հաճախորդների ակտիվները՝ կատարելով գործարքներ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում<sup>9</sup>: Հավատարմագրային կառավարման համանված ակտիվները կարող են ներդրվել հետևյալ ֆինանսական ակտիվներում:

• ՀՀ տարածքում օրենքով սահմանված կարգով թողարկված և շրջանառվող արժեթղթերում,

• ՀՀ տարածքից դուրս թողարկված և ՀՀ տարածքում օրենքով սահմանված կարգով շրջանառվող արժեթղթերում,

• ՀՀ տարածքից դուրս թողարկված և շրջանառվող արժեթղթերում:

Համաձայն «Արժեթղթերի շուկայի նախին» ՀՀ օրենքի՝ հավատարմագրային կառավարման փոխանցված միջոցների հաշվառումը և պահպանումը իրականացվում են տարանջատված հաշվներով, ինչը հաճախորդների համար կառավարչի գործարար ռիսկից պաշտպանվածության լրացուցիչ երաշխիք է:

Կորպորատիվ և անհատ հաճախորդներին հավատարմագրային կառավարման իր ծառայություններն է առաջարկում «Կապիտալ ինվեստմենտ» ՓԲԸ-ն: Ընկերությունը նախատեսում է կիրառել այսպես կոչված «բաց պայմանագրի» գործառույթը, ըստ որի՝ տարբեր անձանց ակտիվները մեկտեղվում են և հանձնվում հավատարմագրային կառավարման: Կառավարման արդյունքում ստացված եկանուտները բաշխվում են համանանորեն՝ ըստ յուրաքանչյուր մասնակցի ներդրած միջոցների: Մեկ պորտֆելում կարող են մեկտեղվել մինչև 50 անձանց միջոցներ՝<sup>10</sup>:

Կոնվերսիբանկն «Արժեթղթերի փաթեթի կառավարում» ծառայության միջոցով ֆիզիկական և իրավաբանական ռեզիլենտ համարվող անձանց համար իրականացնում է ակտիվների հավատարմագրային կառավարում՝ ըստ նրանց ներդրումային պահանջների<sup>11</sup>: «ՎՏԲ-Յայաստան բանկ» ՓԲԸ ներդրումային կապիտալի կառավարման գործիքներից է անհատական հավատարմագրային կառավարումը<sup>12</sup>:

Պետությունը նույնական մեծ նշանակություն է տալիս ՀՀ-ում գույքի հավատարմագրային կառավարման ծառայությունների զարգացմանը, որի նպատակներն են արտադրական և կառավարչական նոր տեխնոլոգիաների ներդրումը ձեռնարկություններում, մասնակցությունը սոցիալական ծրագրերի ստեղծմանը և իրականացմանը, հանագործակցությունը օտարերերյա պոտենցիալ ներդրողների, զարգացման ինստիտուտների, այլ ֆինանսական կազմակերպությունների հետ և ներդրումների ներգրավումը, տեղական և օտարերերյա մասնավոր կապիտալի մասնակցությանը համատեղ նախագծերի ստեղծումը և իրականացումը, պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների վերակառուցումը և նոր արտադրությունների կազմակերպումը և այլն:

Հավատարմագրային կառավարմանը վերաբերող հարաբերություն-

<sup>9</sup> Տե՛ս <http://www.amerigroup.am/>

<sup>10</sup> Տե՛ս <http://capital.com.am/>

<sup>11</sup> Տե՛ս <http://www.converseinvest.am/hy/asset-management/>

<sup>12</sup> Տե՛ս <http://www.vtb.com/armenia/>

ները ամրագրված են 1998 թ. նայիսի 5-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ գլխում, 1996 թ. հունիսի 30-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքում և 2007 թ. հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ ՔՕ 52-րդ գլխի 954 հոդվածի համաձայն՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադիրի կամ նրա նշած անձի (շահառուի): Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման:

Հավատարմագրային կառավարման օբյեկտներ կարող են լինել անշարժ գույքի առանձին տեսակները, արժեթղթերը, ոչ փաստաթղթային արժեթղթերով հավատված իրավունքները, բացառիկ իրավունքները և այլ գույք: Հավատարմագրային կառավարման ինքնուրույն օբյեկտ չի կարող լինել դրամը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Որպես կանոն՝ հավատարմագրային կառավարման հիմնադիրը գույքի սեփականատերն է: Հավատարմագրային կառավարիչը կարող է լինել անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն: Գույքը ենթակա չէ փոխանցման պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի հավատարմագրային կառավարմանը: Հավատարմագրային կառավարիչը գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով չի կարող լինել շահառու:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է մինչև իինգ տարի ժամկետով: Հավատարմագրային կառավարման փոխանցվող գույքի առանձին տեսակների համար օրենքով կարող են սահմանվել պայմանագրի կնքման այլ սահմանային ժամկետներ: Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո այն դադարեցնելու մասին կողմերից որևէ մեկի դիմումի բացակայության դեպքում պայմանագիրը հանարվում է երկարածզված այն ժամկետով և պայմաններով, որոնք նախատեսված էին պայմանագրով:

Հավատարմագրային կառավարման հանձնված գույքն առանձնացվում է կառավարման հիմնադիր այլ գույքից, ինչպես նաև հավատարմագրային կառավարչի գույքից: Գույքի հավատարմագրային կառավարման ժամանակ շահառուի կամ կառավարման հիմնադիրի շահերի համար պատշաճ հոգատարություն չցուցաբերած հավատարմագրային կառավարիչը շահառուին հատուցում է հավատարմագրային կառավարման ընթացքում բաց թողնված օգուտը, իսկ կառավարման հիմնադիր՝ գույքի կողստի կամ վնասվածքի պատճառով հասցված վնասները, ինչպես նաև բաց թողնված օգուտը:

1998 թ. մարտի 25-ին ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատվել է «Արժեթղթերի, արժեթղթերում ներդրում կատարելու համար նախատեսված դրամական միջոցների հավատարմագրային կառավարման գործունեության (տրաստ) օրինակելի կանոնակարգը»: Ներկայումս մշակվում է «ՀՀ սեփականությունը հանդիսացող գույքը հա-

վատարմագրային կառավարման համձնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

ՀՀ կառավարության կողմից 2006 թ. մայիսի 4-ին ընդունվել է «Պետական անտառները համայնքային կազմակերպություններին առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը հաստատելու մասին» որոշումը: Դրանով կարգավորվում են համայնքի վարչական սահմաններուն գտնվող, նախկինում գյուղացիական կոլեկտիվ ու խորհրդային տնտեսություններին պատկանող պետական անտառները և պետությանը սեփականության իրավունքով պատկանող անտառային հողերը համայնքային ենթակայության կազմակերպություններին մինչև 10 տարի ժամկետով (հաշվի առնելով անտառաշինական նախագծերի գործողության ժամկետը) առանց մրցույթի հավատարմագրային կառավարման հանձնելու և անտառային տնտեսության վարմանը վերաբերող հարաբերությունները:

2003 թ. ռուսական «Ինտեր ՌԱՕ ԵՒՍ» ընկերությանը 5 տարի ժամկետով հավատարմագրային կառավարման է հանձնվել Ղայկական ատոմային էլեկտրակայանը, իսկ 2008 թ. այդ ժամկետը երկարաձգվել է և 5 տարով: Սակայն 2012 թ. ՀՀ եներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը ՀՀ անունից լուծարեց «Ինտեր ՌԱՕ ԵՒՍ» ընկերության հետ հավատարմագրային կառավարման պայմանագիրը:

2006 թ. նոյեմբերի 30-ին ՀՀ կառավարության և «Հայփոստ թրասթ մենեջմենթ» ՓԲԸ միջև կնքվել է «Հայփոստ» ՓԲԸ՝ ՀՀ սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման մասին պայմանագիր: Նպատակը՝ «Հայփոստի գործունեությունն առավել բարեկանցիկ, արդյունավետ դարձնելն է: Նախատեսվում է «Հայփոստ» ՓԲԸ-ն դարձնել միջազգային չափանիշներով փոստային և ֆինանսական ծառայություններ մատուցող օպերատոր: Հավատարմագրային կառավարիչը՝ «Կորպորատիվ Ամերիկա» արգենտինական հոլդինգը, շարունակում է ներդրումները տարրեր մակարդակներում: Առ այսօր հանրապետության ողջ տարածքում «Հայփոստն» արդեն վերաբացել է վերանորոգված և տեխնիկապես վերազինված 150-ից ավելի փոստային մասնաճյուղեր և բաժանմունքներ: Առաջիկայում կմեկնարկի կաղորերի վերապատրաստման մեջ ծրագիր: Ինչպես նաև կուսակցություններում գանցի ներդրման աշխատանքները:

Ներկայիս պայմաններուն հավատարմագրային կառավարման ծառայությունների շուկան մտնում է զարգացման նոր փուլ: Ըստ երևոյթին, ֆինանսական կառավարիչների տնտեսագիտական գրագիտության աճին և գույքի հավատարմագրային կառավարման ծառայությունների նկատմամբ պահանջարկի ավելացմանը գույքներաց, հավատարմագրային կառավարումը կընդունի առավել քաղաքակիրք ծներ: Գլխավոր խնդիրը մնում է թրաստային ընկերությունների արտոնագրումը և նրանց ծառայությունների հոլովական չափորոշիչների մշակումը: Ծուկայի փորձագետները առաջարկում են նման չափորոշիչներ հանարել կանոնադրական կապիտալի մեջությունը, թույլատրվող ներդրումների ցանկը, իրականացվող գործարքների բափանցիկությունը և գործունեության գնահատման չափանիշները: Մի շարք երկրներում, մասնավորապես ԱՄ-ում, գո-

յություն ունեն ներդրման օբյեկտների ցանկի սահմանափակումներ՝ շուկայական ակտիվների «օրինական ցանկ», որտեղ հավատարմագրային կառավարիչները կարող են իրականացնել ներդրումներ:

Հավատարմագրային կառավարման շուկայի հետագա զարգացման համար անհրաժեշտ է ընդունել համապատասխան օրենքներ, նորմատիվ ակտեր, որոնք կարգավորեն հարկման, կառավարման հիմնադիրների շահերի պաշտպանության և այլ հարցերը:

**Բանալի բառեր** – գույք, հավատարմագրային կառավարում, թրաստ, կառավարման հիմնադիր, հավատարմագրային կառավարիչ, շահառու, ֆինանսական ակտիվներ

**ВАРДУИ ГАБРИЕЛЯН – Развитие рынка услуг по доверительному управлению в РА.** – Доверительное управление собственностью – перспективная форма отношений между хозяйствующими субъектами, повышающая эффективность использования различных видов имущества. Активное развитие трастов связано с падением доходности на финансовом рынке, где значительно увеличивается спрос на услуги по доверительному управлению. Сегодня в Армении наиболее распространён финансовый траст. Помимо доверительного управления, связанного с ценными бумагами и денежными средствами, появляются предпосылки к управлению недвижимостью. Государство связывает с трастом большие планы, расчитывая на эффективное управление собственностью, в первую очередь пакетами принадлежащих ему акций. С ростом экономической грамотности финансовых менеджеров и спроса на доверительное управление имуществом траст приобретёт более цивилизованные формы. Для его дальнейшего развития нужны законы и нормативные акты, регулирующие налогообложение, защищённость учредителей управления перед структурами, предлагающими услуги траста, и др.

**Ключевые слова:** имущество, доверительное управление, траст, учредитель управления, доверительный управляющий, выгодоприобретатель, финансовые активы

**VARDUHI GABRIELYAN – Development of Trust Services Market in RA.** – Trust property management is a perspective form of relations between economic entities aimed at increasing the efficiency of the use of different types of property. An active development of the trust is primarily due to falling profitability in the financial market where customer demand for trust services to their means significantly increases. Currently, the financial trust is the most common in Armenia. In addition to the trust related to securities and cash, prerequisites appear for real estate trust management. Testamentary trust has not yet manifested itself. The State links big plans with trust considering the possibility of effective management of the property, primarily the state-owned blocks of shares. Trust will acquire more civilized forms alongside with increasing economic literacy of financial managers and increasing demand for trust services. For purposes of its further development it is necessary to enact appropriate legislation, normative acts regulating the issues of taxation, protection of management founders before institutions offering trust services etc.

**Key words:** property, trust management, trust, trustor, trustee, beneficiary, financial assets

---

## ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՍՊԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՅ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը, ի թիվս այլ խնդիրներ լուծելու, մեծապես պայմանավորված է տվյալ ոլորտում գործող սուբյեկտների հարկման մեխանիզմների բարելավմամբ և կիրառվող ռեժիմների պարզեցմանք: Իհարկե, Յայաստանի Յանրապետությունում սահմանված են և գործում են հարկման հատուկ ռեժիմներ (շրջանառության հարկ, արտոնագրային վճարներ, հաստատագրված վճարներ), որոնք չնայած նախատեսված չեն գուտ փոքր և միջին ձեռնարկությունների համար, այդուհանդերձ դրանցից շատերը գործում են այդ ռեժիմներում: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՅ օրենքով սահմանված է, որ տվյալ ոլորտին դասվելու հանար տնտեսավարող սուբյեկտները, ի թիվս այլ չափորոշչների, պետք է բավարարեն նաև իրացման հասույթի գծով սահմանված պահանջը (100 մլն դրամից մինչև 1000 մլն դրամ), ակնհայտ է դառնում, որ փոքր և միջին շատ կազմակերպություններ ննան պայմաններում գործում են հարկման ընդհանուր ռեժիմում: Յետևաբար, Վերջիններիս հարկային հաշվառման խնդիրները ձեռք են բերում կարևոր նշանակություն, որոնք արդյունավետ լուծելու առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ առողջիւղը: Նման կազմակերպությունների կողմից վճարվող հիմնական հարկատեսակներից մեկը շահութահարկն է, որի հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով, սկզբունքներով և կանոններով, ինչպես նաև մի շարք այլ իրավական ակտերով, եթե օրենքով նախատեսված չեն դրանց կիրառման առանձնահատկությունները: Դամաձայն ՀՅ օրենսդրության նշված հարկատեսակը վճարողները հարկային մարմնին գրավոր տեղեկացնում են իրենց ընտրած հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների սկզբունքների և կանոնների, օգտագործվող հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի մասին: Յետևաբար, այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված չէ համախառն եկամտի կամ համախառն եկամտի նվազեցումների հաշվարկման կամ որոշման առանձնահատկությունները, կազմակերպությունները հնարավորություն ունեն կիրառելու հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարագվորող օրենքները: Դիտարկենք այն դեպքերը, երբ համախառն եկամտի կամ համախառն եկամտի նվազեցումների կարգավորումը սահմանված չէ «Հահութահարկի մասին» ՀՅ օրենքով, և կազմակերպությունները հաշվառման համար կարող են կիրառել Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (այսուհետև՝ ՖՀՍՍ)՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտնե-

ոի խորհրդի թողարկած «Փոքր-միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը» (այսուհետ՝ **ՓՄԿ-ների ՖՀՍՍ**) հաշվի առնելով:

Ընդհանուր առնամբ, **ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ի նպատակն** է այդ սուբյեկտների համար բարելավել վարկերի հասանելիությունը, բարձրացնել առևիտի արդյունավետությունը, իսկ երբ անբողջական ՖՀՍՍ կիրառումը պարտադիր չէ, նաև թերևացնել հարկային բեռը<sup>1</sup>: Այժմ դիտարկենք վերջինիս իրականացման մեխանիզմները՝ անդրադառնալով հարկվող շահույթը որոշելու նպատակով օգտագործվող տնտեսական ցուցանիշներին:

**Ֆինանսական ծախսեր:** Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է այն ստանալու հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, որոնց թվին են դասվում նաև վարկերի և այլ փոխառությունների տոկոսները, բացառությամբ որոշ դեպքերի<sup>2</sup>: **ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ում** ֆինանսական գործիքների (ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ) ճանաչմանը, ապահանաչմանը, չափմանը և բացահայտմանը վերաբերող դրույթները ներկայացված են 11-րդ՝ «Հիմնական ֆինանսական գործիքներ» և 12-րդ՝ «Այլ ֆինանսական գործիքներին վերաբերող հարցեր» բաժիններում: Ընդ որում, 11-րդ բաժինը կիրառվում է հիմնական ֆինանսական գործիքների նկատմամբ և բոլոր կազմակերպությունների կտրվածքով, իսկ 12-րդ բաժինը՝ այլ, ավելի բարդ ֆինանսական գործիքների և գործարքների նկատմամբ: Քանի որ գործնականում փոքր և միջին կազմակերպությունների գերակշիռ նաև ընտրում է **ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ն** ամբողջությամբ, ուստի կարծում ենք, որ վերլուծությունները պետք է հրականացնել այդ տրամաբանությամբ:

Պետք է նշել, որ **ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ն** հիմնական ֆինանսական գործիքների թվին է դասում դրամական միջոցները, պարտքային գործիքները (դերիտորական պարտք, տրված կամ ստացված մուրհակ կամ փոխառություն), փոխառություն ստանալու պարտավորվածությունները և ոչ փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերում և առանց հետվաճառքի հրավունքի սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերում ներդրումները: Քանի որ ՀՀ-ում գործող փոքր և միջին կազմակերպությունների գերակշիռ նաև չի տիրապետում վերջին երկուսին, հարկ ենք համարում անդրադառնալ դրամական միջոցներին և պարտքային գործիքներին:

Համաձայն **ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ի** ֆինանսական գործիքը պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք: 11-րդ բաժինը պահանջում է ամորտիզացված արժեքի մոդելի կիրառում բոլոր հիմնական ֆինանսական գործիքների համար՝ բացառությամբ ոչ փոխարկելի և առանց հետվաճառքի հրավունքի արտոնյալ բաժնետոմսերում, ինչպես նաև առանց հետվաճառքի հրավունքի սովորական բաժնետոմսերում ներդրումների, որոնք հրապարակայնորեն շրջանառվում են, կամ որոնց հրական արժեքը կարող է արժանահավատորեն այլ կերպ չափվել<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Michael Wells, IFRS for SMEs, 2010, էջ 2:

<sup>2</sup> Տե՛ս «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 1997:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 42:

Երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, կազմակերպությունը պետք է այն չափի գործարքի գնով (ԱԵրայշալ գործարքի հետ կապված ծախսումները, բացի այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական չափումից, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայնությունն իրենից ներկայացնում է ֆինանսավորման գործարք: Միևնույն ժամանակ, հաշվետու ժամանակաշրջանի ավարտին կազմակերպությունը պետք է չափի պարտքային ֆինանսական գործիքները ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակաշրջանի ընթացքում տոկոսային եկամտի կամ ծախսի բաշխման միջոց է: Դա այն տոկոսադրույթն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող կամ ավելի կարծ ժամանակաշրջանի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն գեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույթը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ՝ հաշվեկշռային արժեքի հիման վրա:

Արդյունավետ տոկոսադրույթը հաշվարկելիս կազմակերպությունը պետք է գնահատի դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամկետ վճարման, գննան կամ համանման օացիոններ) և արոեն իսկ հայտնի պարտքային կորուստները: Ընդ որում, այս դեպքում ապագա պարտքային հնարավոր կորուստները չպետք է հաշվի առնվեն: Արդյունավետ տոկոսադրույթի հաշվարկման ժամանակ կազմակերպությունը պետք է ամորտիզացնի դրան վերաբերող բոլոր գանձումները, վճարված կամ ստացված ֆինանսական վճարները, գործարքի հետ կապված ծախսումները և այլ պարզևավճարներ կամ գեղչեր՝ գործիքի գործողության ակնկալվող ժամկետի ընթացքում:

Արդյունավետ տոկոսադրույթի եղանակով հաշվարկված տոկոսային ծախսի և վարկի մնացորդի հաշվարկը ցուցադրենք օրինակով:

2005 թ. հունվարի 1-ին Ա ընկերությունը Բ բանկից վերցնում է 1,000,000 ՀՀ դրամի փոխառություն՝ տարեկան 7% անվանական տոկոսադրույթով և 10 տարի մարման ժամկետով: Փոխառությունը մարվում է 142,378 ՀՀ դրամ տարեկան հավասարաչափ վճարումներով՝ մինչև 2014 թ. դեկտեմբերի 31-ը: Ա ընկերությունը Բ բանկին վարկ ստանալու համար վճարում է նաև վերադարձնան ոչ ենթակա գումար՝ վարկի 2.5%-ի չափով, այն է՝ 25,000 ՀՀ դրամ: Չնայած փոխառության պայմանագիրը ենթադրում է առանց տույժերի կիրառման ժամկետից շուտ վճարներ կամ վարկի ժամկետից շուտ մարում, սակայն Ա ընկերությունը չունի նման մտադրություն, ինչի վրա էլ կատարված են հաշվարկները:

Վարկի սկզբնական հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է հետևյալ կերպ.

	ՀՀ դրամ
Վարկի մայր գումար	1,000,000
Բանկի կողմից գանձված վճար	25,000
Վարկի հաշվեկշռային արժեք	1,025,00

10 հավասարաչափ 142,378 ՀՀ դրամ տարեկան վճարումների և 1,025,000 ՀՀ դրամ սկզբնական արժեքի դեպքում արդյունավետ տոկոսադրույթը կկազմի 6.4699%: Այսպիսով, 10 տարվա ժամանակահատվածում վարկի հաշվեկշռային արժեքը, ինչպես նաև վարկի տոկոսային ծախսը ներկայացված են աղյուսակ 1-ի հաշվարկներում:

Ինչպես տեսնում ենք, տվյալ ժամանակահատվածի տոկոսային ծախսը հաշվարկվում է նախորդ ժամանակահատվածի վարկի հաշվեկշռային արժեքին արդյունավետ տոկոսադրույթը կիրառելով: Տարեկան տոկոսային ծախսը յուրաքանչյուր տարի նվազում է՝ արտահայտելով վարկի հաշվեկշռային արժեքի նվազումը և բանկի կողմից գանձված վճարի ամրապնդացիամ<sup>4</sup>:

Այսպիսով, ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ն կիրառող սուբյեկտները կարող են շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործել արդյունավետ տոկոսադրույթի եղանակով հաշվարկված տոկոսային ծախսը՝ դրանով իսկ զգալիորեն նվազեցնելով տվյալ հարկատեսակի գծով հարկային բեռը:

#### Աղյուսակ 1

Ամսաթիվ	Կանխիկի արտահոր	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք
			ՀՀ դրամ
1-հունվար-05	-	-	1,025,000
31-դեկտեմբեր-05	142,378	66,316	948,938
31-դեկտեմբեր-06	142,378	61,395	867,955
31-դեկտեմբեր-07	142,378	56,155	781,732
31-դեկտեմբեր-08	142,378	50,577	689,931
31-դեկտեմբեր-09	142,378	44,638	592,191
31-դեկտեմբեր-10	142,378	38,314	488,126
31-դեկտեմբեր-11	142,378	31,581	377,329
31-դեկտեմբեր-12	142,378	24,413	259,364
31-դեկտեմբեր-13	142,378	16,780	133,726
31-դեկտեմբեր-14	142,378	8,652	-
Ընդամենը	1,423,780	398,820	

<sup>4</sup> Աղյուր՝ PwC's Manual of Accounting - IFRS 2014:

Հարկվո՞ւ օյթեկտը որոշելիս Եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացվում է հաշվեգրման եղանակով, որի դեպքում հարկատուն Եկամուտների և ծախսերի հաշվառումն իրականացնում է՝ համապատասխանաբար Ելեկով հարկատուի կողմից այդ Եկամուտներն ստանալու իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից՝ անկախ Եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Հաշվեգրման եղանակով եկամուտները հաշվառելիս հարկատուն հաշվի է առնում հետևյալ առանձնահատկությունները՝

ա) Եկանտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է հարկատուին անվերապահ վճարման (հատուցման), կամ հարկատուն կատարել է գործարքից կամ պայմանագրից բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս,

բ) հարկատուի կողմից ծառայություններ մատուցելու դեպքում նշված իրավունքը հանձնվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ բվում նաև՝ ըստ փուլերի) պահից:

Համաձայն ՓՄԿ-ների ՖՆՍՍ-ի՝ կազմակերպությունը պետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվությունները՝ բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության՝ կիրառելով հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքը։ Վերջինիս դեպքում հոդվածները ճանաչվում են որպես ակտիվներ, պարտավորություններ, սեփական կապիտալ, եկամուտ կամ ծախսեր, եթե դրանք բավարարում են այդ հոդվածների սահմանման և ճանաչման չափանիշները։

Եկամտի ճանաչումը ակտիվները և պարտավորությունները ճանաչելու և չափելու ուղղակի արդյունք է: Կազմակերպությունը պետք է Եկամուտը ճանաչի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (կամ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ներկայացվում է), երբ առաջացել է ապագա տնտեսական օգուտների աճ՝ պայմանավորված ակտիվի աճով կամ պարտավորության

<sup>5</sup> Տես «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդված 7, 1997:

նվազմամբ, որը կարող է արժանահավատորեն չափել<sup>6</sup>:

Կազմակերպությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.

ա) կազմակերպությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականությանը վերաբերող ռիսկերի և հատույցների նշանակալի նասը,

բ) կազմակերպությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն,

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,

դ) հավանական է, որ գործարքին վերաբերող տնտեսական օգուտները կիոսեն կազմակերպություն,

ե) գործարքին վերաբերող կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Եթե ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, կազմակերպությունը պետք է ճանաչի գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա (Երբեմն կոչվում է ավարտվածության տոկոսի մերող): Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,

բ) հավանական է, որ գործարքին վերաբերող տնտեսական օգուտները կիոսեն դեպի կազմակերպություն,

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքին վերաբերող կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները<sup>7</sup>:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հասույթի ճանաչման և չափման ընդհանուր սկզբունքները «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքում և ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ում համընկնում են: Միևնույն ժամանակ, ՖՀՍՍ-ում ներկայացված են գործունեության տարբեր ոլորտների և դեպքերի համար հասույթի որոշման դրույթներ, որոնք բացակայում են «Ծահութահարկի մասին» ՀՀ օրենքում, ուստի կարգավորվում են ՖՀՍՍ-ով հարկվող շահույթը որոշելիս:

Անդրադարձ փոքր և միջին կազմակերպությունների ՖՀՍՍ-ների հասույթի ճանաչման և չափման որոշ առանձնահատկությունների:

**Կառուցման պայմանագրեր:** Այս պայմանագրերը վերաբերում են շինարարական ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների հասույթի ճանաչման սկզբունքներին: Շինարարությունը ՀՀ տնտեսության կարևոր ոլորտներից է, ինչի վկայությունն է այն փաստը, որ 2013 և 2012 թվականներին տվյալ ճյուղի հաշվին ապահովվել է ՀՆԱ-ի համապատասխանարար՝ 10%-ը և 12.5%-ը<sup>8</sup>: Եթե կառուցման պայմանագրի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, կազմակերպությունը պայ-

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 8:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 100:

<sup>8</sup> [www.armstat.am](http://www.armstat.am)

մանագրի հասույթը և ծախսումները, որոնք պայմանավորված են կառուցման պայմանագրով, համապատասխանաբար պետք է ճանաչի որպես հասույթ և որպես ծախս՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պայմանագրային աշխատանքների ավարտվածության աստիճանի հիման վրա (հաճախ կոչվում է ավարտվածության տոկոսի մերող):

Ավարտվածության տոկոսի մերողը կիրառվում է ծառայությունների մատուցումից և կառուցման պայմանագրերից հասույթը ճանաչելիս: Կազմակերպությունը ծառայությունների գործարքի կամ կառուցման պայմանագրով սահմանված աշխատանքների կատարմանը գուգընթաց պետք է վերանայի և անհրաժեշտության դեպքում ճշգրտի հասույթի և ծախսումների գնահատումները: Գործարքի կամ պայմանագրի ավարտվածության աստիճանը պետք է որոշվի՝ կիրառելով այն մերողը, որն առավել արժանահավատորեն է չափում կատարված աշխատանքները:

Յնարավոր մեթոդները ներառում են՝

ա) տվյալ պահի դրությամբ իրականացված աշխատանքների համար կատարված ծախսումների և գնահատված ընդհանուր ծախսումների միջև հարաբերակցությունը: Ընդ որում, տվյալ պահի դրությամբ կատարված աշխատանքների համար ծախսումները չեն ներառում ապագա աշխատանքներին վերաբերող ծախսումները, ինչպիսիք են ծախսումները նյութերի կամ կանխավճարների գծով,

բ) կատարված աշխատանքների ուսումնասիրությունը,

գ) ծառայությունների գործարքի կամ պայմանագրի աշխատանքների ֆիզիկական ավարտվածության աստիճանը:

Վերը նշված 1-ին մեթոդով հասույթի հաշվարկման օրինակը կարող ենք պատկերացնել հետևյալ օրինակով.

Ա շինարարական ընկերությունը պայմանագրությամ հետ՝ կառուցելու էլեկտրակայան: Կառուցման ընդհանուր ծախսը գնահատվում է 150,000 հազար ՀՀ դրամ: Պայմանագրությունը ընդհանուր հասույթը գնահատվում է 200,000 հազար ՀՀ դրամ: Ա ընկերությունից կպահանջվի երեք տարի էլեկտրակայանը կառուցելու համար:

Առաջին տարվա վերջում Ա ընկերության ծախսերը կազմել են 60,000 հազար ՀՀ դրամ: Յաճախորդին դուրս է գրվել հաշիվ-ապրանքագիր 50,000 հազար ՀՀ դրամի չափով: Յանաձայն Ա ընկերության կողմից առաջարկվող կրեդիտորական պարտքի մարման ժամկետների՝ Բ ընկերությունը գումարը պետք է վճարի երկրորդ տարվա սկզբին:

Կիրառելով ավարտվածության տոկոսի մեթոդը ավարտվածության աստիճանը որոշելու համար, Ա ընկերությունը պետք է մինչև տվյալ ամսաթվի համար կրած ծախսումները համեմատի գնահատված ընդհանուր ծախսումների հետ:

Կատարված ծախսերի և գնահատված ծախսերի հարաբերակցությունից պարզ է, որ պայմանագիրը առաջին տարվա վերջում կատարված է 40%-ով ( $60,000 / 150,000$ ): 80,000 հազար ՀՀ դրամ հասույթ (200,000 հազար ՀՀ դրամի 40%-ը) պետք է ճանաչվի որպես հասույթ առաջին տարվա վերջում<sup>9</sup>:

<sup>9</sup> Աղյուր՝ PwC's Manual of Accounting - IFRS 2014:

Պատվիրատումերի կողմից կատարված միջանկյալ վճարումները և կանխավճարները հաճախ չեն արտացոլում կատարված աշխատանքների փաստացի ծավալը:

Եթե կառուցման պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել՝

ա) կազմակերպությունը պետք է հասույթ ճանաչի միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական են, որ կիրակատուցվեն, և

բ) կազմակերպությունը պետք է ճանաչի պայմանագրի ծախսումները որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Ապրանքների հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասի փոխանցումը կարող է տեղի ունենալ ապրանքների առաքումից առաջ կամ հետո: Փոխանցման պահը կախված է պայմանագրի պայմաններից<sup>10</sup>: Միջազգային առևտություններում ապրանքների սեփականությանը վերաբերող ռիսկերի և հատույցների փոխանցումը որոշելու համար օգտագործվում են ինկոտերմները (Incoterms): Վերջիններս Միջազգային առևտություն պալատի (International Chamber of Commerce) կողմից հրապարակված և միջազգայնորեն ճանաչված ստանդարտներ են ու ամբողջ աշխարհում օգտագործվում են ապրանքների միջազգային և ներքին վաճառքները կարգավորելու համար: 1936 թ. ընդունված ինկոտերմները կանոններ են, որոնք նշակել և պահպանվում են ոլորտի մասնագետների կողմից ու դարձել են միջազգային գործարար կանոնների ստանդարտ: Սկսած 2011 թ. հունվարի 1-ից՝ գործողության մեջ է «Ինկոտերմ 2010-ը»<sup>11</sup>:

Սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների փոխանցման վրա կարող է ազդել վաճառողի կողմից ապահովագրական պայմանագրի կնքումը առաքման ընթացքում: Բերենք ասվածը հաստատող օրինակ:

Ա ընկերությունը արտադրում և վաճառում է տրանսֆորմներ: Տրանսֆորմները գնորդին են առաքվում ծովով, և Ա ընկերությունը կնքում է ապահովագրական պայմանագիր ու ապահովագրական ընկերությանը փոխանցում գործարանից մինչև գնորդի պահեստը տրանսֆորմների առաքման հետ կապված ռիսկերը: Ըստ պայմանագրի՝ ապրանքների վճարման կամ կորստի դեպքում վաճառողին փոխառուցվում է ապրանքների ամրող շուկայական արժեքը: Ռիսկերը և հատույցները փոխանցվում են գնորդին տրանսֆորմները գնորդի պահեստ հասնելուց մեկ ամիս անց:

Այս դեպքում վաճառողը պետք է ճանաչի հասույթը ապրանքները գնորդի պահեստ հասնելու պահին: Վաճառողը գնորդին չի փոխանցել տրանսֆորմների սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերը և հատույցները ապրանքը գործարանից դուրս գալիս, քանի որ ստացված ապրանքի կորստի կամ վճարման դեպքում ցանկացած ապահովագրական փոխառուցում վճարվում է վաճառողին: Հասույթի ճանաչման պայ-

<sup>10</sup> Տե՛ս "PwC's Manual of Accounting - IFRS 2014", point 9.59, 2014:

<sup>11</sup> <http://www.iccwbo.org/products-and-services/trade-facilitation/incoterms-2010/>

մանը չի բավարարվում, մինչև ապրանքները չեն հասնում վաճառողի պահեստ<sup>12</sup>:

**Հանքարդյունաբերություն:** Հասույթի ճանաչումը հատկապես դժվար կարող է լինել հանքարդյունաբերական ընկերություններում: Հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից է, որը 2013 և 2012 թվականներին ապահովել է ՀՆԱ-ի գրեթե 3%-ը<sup>13</sup>: Ենտևաբար, հասույթի ճիշտ ճանաչումը և առողջապահումների կողմից ֆինանսական հաշվետվությունների հաստատումը շատ կարևոր են տվյալ ոլորտում գործող կազմակերպությունների համար: Հասույթի ճանաչման խնդիրները կապված են այն փաստի հետ, որ ոլորտում արտադրությունը հաճախ կազմակերպվում է համատեղ ձեռնարկություններում, և ընկերությունները պետք է վերլուծեն փաստերը և հանգանաքները՝ որոշելու, թե երբ և որքան հասույթ ճանաչել: Միևնույն ժամանակ, արդյունահանված հանքարդը գնորդին հասցնելը բավականին երկար ժամանակ է պահանջում, որի ընթացքում փոփոխվում են և ռեսուրսների գները, և պարունակությունը: Հանքարդյունաբերական ընկերությունները սովորաբար օգտագործում են «Մինչև նավի վրա» (Free on Board – FOB) և «Արժեք, ապահովագրում, փոխադրում» (Cost, Insurance, Freight – CIF) ինկոստերմները: Առաջին դեպքում գնորդն է ստանձնում ապրանքի հետ կապված բոլոր ռիսկերը հանքանյութը նշված նավահանգստում նավի վրա բարձելուց հետո, երկրորդ դեպքում վաճառողը վճարում է մինչև նավահանգիստ ապրանքի տեղափոխման ծախսերը, իսկ ռիսկերը և հատույցները վաճառողից փոխանցվում են գնորդին հանքանյութը նավի վրա բարձելուց հետո: Հանգանաքներով պայմանավորված՝ կողմները կարող են համատեղել տարբեր ինկոստերմների պայմաններ:

Ստացված կանխավճարները հասույթը ճանաչելու ապացույց չեն, քանի որ տեղի չի ունենում ռիսկերի և հատույցների փոխանցում: Ստացված գումարը պետք է վերադարձվի, եթե տեղափոխող նավը խորտակվի կամ բեռը գողանան:

Շատ հաճախ վաճառքի պայմանագրերը պարունակում են պայմանական կամ նախնական գնագոյացման (provisional pricing) պայմաններ. հանքանյութի առաքման օրը կիրառվում է նախնական գին՝ հիմնված խտանյութի այն ֆորվարդային գնի վրա, որը կլինի գնորդի կողմից ապրանքը վերջնական ստանալու պահին (առաքման փակում)՝ առաքումից մեկ կամ երկու ամիս հետո: Կաճառողները ստանում են նախնական վճարում առաքման պահին, իսկ վերջնական վճարումը կատարվում է առաքումը փակելու ժամանակ: Նախնական գումարը կարող է կազմել վերջնական գումարի մինչև 90%-ը:

Ֆորվարդային գինը կստահելի հիմք է առաքման պահին վաճառքից ստացվելիք հասույթը չափելու համար: Յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանում նախնական ճանաչված հասույթը պետք է ճշգրտվի՝ շուկայական ամենաթարմ տվյալների հիման վրա մինչև առաքումը փակվելու պահը:

<sup>12</sup> Աղյուր՝ PwC's Manual of Accounting - IFRS 2014:

<sup>13</sup> www.armstat.am

**Պաշարներ:** ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ում պաշարների չափման սկզբունքները ներկայացված են 13-րդ՝ «Պաշարներ» բաժնում, համաձայն որի՝ կազմակերպությունը պաշարները պետք է չափի ինքնարժեքից և գնահատված վաճառքի գնից՝ հանած համալրման և վաճառքի գնահատված նվազագույն ծախսումները<sup>14</sup>: Պաշարների արժեգրկումը ներկայացված է ՖՀՄՍ-ի 27-րդ՝ «Ակտիվների արժեգրկում» բաժնի «Պաշարների արժեգրկում» ենթաբաժնում, ըստ որի՝ կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ պետք է գնահատի՝ արդյոք պաշարներն արժեգրկած են: Ընդ որում դա պետք է կատարի պաշարների յուրաքանչյուր հոդվածի հաշվեկշռային արժեքը համեմատելով դրա վաճառքի գնի հետ՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները: Եթե պաշարների որևէ հոդված արժեգրկած է, կազմակերպությունը պետք է նվազեցնի պաշարի հաշվեկշռային արժեքը՝ այն հասցելով դրա վաճառքի գնին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները<sup>15</sup>:

ՀՀ-ում պաշարների բնական և այլ կորուստների չափը սահմանվում է «Հարկնան նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի այլ կորուստների չափերի հետ կապված հարաբերությունները սահմանող» կարգով<sup>16</sup>: Վերջինիս դրույթները չեն վերաբերում «Շահութահարկի մասին» օրենքով սահմանված բնական կորուստներին, ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստներին, պատահական կորուստներին, տեխնոլոգիական կորուստներին, խոտանից կորուստներին և թափոններին: Փաստացի այլ կորուստներն առաջանում են սննդամբերքի, դեղերի (դեղանյութերի) և օրգանական ծագում ունեցող այլ հումքի (նյութերի), ապրանքների (արտադրանքի) պիտանիության (օգտագործման) ժամկետը անցնելու դեպքում, ժամանակի ընթացքում մաշվածության և (կամ) քայլայման հետևանքով օրգանական ծագում չունեցող նյութական այլ արժեքների (հումքի և նյութերի), ապրանքների (արտադրանքի) սպառման հատկանիշների անկման կամ կորստի դեպքում: Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է փաստացի այլ կորուստների չափով, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 1 տոկոսը (տարեկան): Նյութածախսի կորուստները համախառն եկամտից նվազեցվում են, եթե հիմնավորվում են հարկ վճարողի և (կամ) այլ կազմակերպությունների (անհատ ձեռնարկատերերի) և (կամ) պետական մարմինների կողմից կազմված տեխնոլոգիական պրոցեսը բնութագրող փաստաթթով և փաստացի կորստի չափն արձանագրող ակտով կամ արձանագրությամբ<sup>17</sup>:

Ըստ ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի 27-րդ՝ «Ակտիվների արժեգրկում» բաժնի՝ յուրաքանչյուր հաջորդող հաշվետու ամսաթվի դրությամբ կազմակերպությունը պետք է կատարի վաճառքի գնի նոր գնահատում՝ հանելով համալրման

<sup>14</sup> Տես նույն տեղը, էջ 57:

<sup>15</sup> Տես նույն տեղը, էջ 110:

<sup>16</sup> Տես ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի № 1594 -Ն որոշումը:

<sup>17</sup> Տես «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի այլ կորուստների չափերի հետ կապված հարաբերությունները սահմանող կարգ», ՀՀ կառավարություն, 2012:

և վաճառքի ծախսումները: Երբ պաշարների արժեգրկման նախկին հանգամանքներն այլևս գոյություն չունեն, կամ երբ տնտեսական իրավիճակի փոփոխության հետևանքով առկա է հստակ վկայություն վաճառքի գնի աճի վերաբերյալ՝ հանած հանալրման և վաճառքի ծախսումները, ապա կազմակերպությունը պետք է հակադարձի արժեգրկման գումարը այնպես, որ նոր հաշվեկշռային արժեքը լինի ինքնարժեքից և վերանայված վաճառքի գնից՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, նվազագույնը (այսինքն՝ հակադարձումը սահմանափակված է սկզբնական արժեգրկումից կորստի գումարով): Օրենքի համաձայն՝ եկամուտ չի համարվում արտարժույթի և արտարժույթով արտահայտված այլ ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը<sup>18</sup>:

Այսպիսով, «Շահութահարկի նախն» օրենքով թույլատրվում է պաշարների արժեքի նվազեցման դեպքում կատարել համախառն եկամտից նվազեցում, սակայն ոչ ավելի, քան համախառն եկամտի մեկ տոկոսը, մինչեղու ՓՄԿ-ների ՖՀՍՍ-ով ննան սահմանափակում չկա: Միևնույն ժամանակ, եթե ՖՀՍՍ-ով նոր գնահատման արդյունքում կան հստակ վկայություններ պաշարների արժեքի աճի վերաբերյալ, ապա պետք է կատարվի հակադարձում, մինչդեռ օրենքով նույնպես նման բան նախատեսված չէ:

Իրականացված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ եթե վերը ներկայացված դեպքերում կազմակերպությունները կիրառում են ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների սկզբունքները, ապա հարկային նարմինները, ունենալով տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվյունների վերաբերյալ անկախ առողջությունների կողմից տրված դրական եզրակացություն, կարող են ժամանակ և ռեսուրսներ չծախսել հաշվառման ու թվերի ճշգրտությունը ստուգելու համար: Հետևաբար, փոքր և միջին կազմակերպությունների առողջությունը կարող է էականորեն նպաստել ինչպես հարկվող շահույթի հաշվառման մեխանիզմների կատարելագործման, այնպես էլ ննան սուբյեկտների նկատմամբ հարկային վարչարարության բարելավման հետ կապված խնդիրների լուծմանը:

**Բանալի բառեր** – «փոքր-միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվյունների միջազգային ստանդարտ», շահութահարկ, համախառն եկամուտ, հարկվող շահույթ, ֆինանսական ծախսեր, արդյունավետ տոկոսադրույթ, հասույթ, պաշարներ, կառուցման պայմանագրեր

**ТИГРАН АВЕТИСЯН – Пути совершенствования налогового учёта на малых и средних предприятиях РА.** – Когда закон о подоходном налоге не определяет расчёта или спецификаций валового дохода и вычеты с валового налога, организации вправе прибегнуть к законам о бухгалтерском учёте и финансовой отчётности. Если организации применяют принципы МСФО для МСП, налоговые органы, располагая положительным мнением независимых аудиторов, могут не тратить время на проверку. Таким образом, аудит малых и средних предприятий позволит усовершенствовать механизм учёта налогооблагаемой прибыли и улучшить их налоговое администрирование.

<sup>18</sup>Տես «Շահութահարկի նախն» ՀՀ օրենք, հոդված 8, 1997:

**Ключевые слова:** подоходный налог, валовой доход, финансовые расходы, эффективная ставка, выручка, запасы

**TIGRAN AVETISYAN – *Ways of Improving Tax Accounting in Small and Medium Enterprises of RA.*** – When the law on "Income Tax" of RA does not define the calculation or determination of the specifications of the gross income or deductions from gross income, organizations may apply the laws of accounting and financial reporting. If in the calculation of financial costs, revenues and inventory in certain cases organizations apply the principles of the IFRS for SMEs, the tax authorities, which have a positive independent audit opinion on the financial statements of the company, may not spend the time and resources to verify the accuracy of numbers and costs. Thus, the audit of SMEs can make a significant contribution to the improvement of the mechanisms of accounting of taxable profits and in issues of improving tax administration of such organisations.

**Key words:** "International Financial Reporting Standards for Small and Medium Enterprises", income tax, gross revenue, taxable income, finance income, effective interest rate, revenue, inventory, construction contracts

---

## **ՀՅ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՂՐՈՒԹՅԱՆ ԳՈՏԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱԳՐԵԳԱՏԱՎՈՐՎԱԾ ՄՈՂԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏԱՐԱԾԵՐԻ ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

### **ՎՈԼՈՂՅԱ ՄԱՆԱՍՅԱՆ**

ՀՅ գյուղական տարածքների համաչափ զարգացման և գյուղատնտեսական արտադրության նախընտրելի գոտիական մասնագիտացման հիմնախնդիրներն ընդգրկում են հարցերի լայն շրջանակ: Դա ամենից առաջ գյուղական տարածքներին ժամանակակից ծառայություններ մատուցելու համար ագրոպարենային շուկային անհրաժեշտ ենթակառուցվածքների, տրանսպորտային հաղորդակցման ուղիների և այլնի ստեղծումն ու գյուղատնտեսական ապրանքարտադրողների համար դրանց մատչելիություն ապահովելն է: Գյուղական տարածքների սոցիալ-տնտեսական և բնապահպանական այժմյան վիճակը բացասական ազդեցություն է ունենում հանրապետության ողջ տնտեսության (մարզերի, տարածաշրջանների և համայնքների) համաչափ զարգացման և գոտիական մասնագիտացման վրա: Այդ պատճառով իշնում է բնակչության կենսամակարդակը, աճում են գյուղական աղքատությունը և գյուղից աշխատունակ բնակչության արտագաղթը: Դա հանգեցնում է ազրարային հատվածի տնտեսական ներուժի ամկանը, օգտագործվող ցանքատարածությունների կրծատման հետևանքով գյուղատնտեսական հումքի և հայրենական պարենի արտադրության նվազմանը:


Գյուղական տարածքների դժվարին պայմանների հետևանքներից են ժողովրդագրական իրավիճակի շարունակական վատքարացումը, նոր գյուղական համայնքների ու բնակավայրերի դատարկման և գյուղական բնակչության թվաքանակի զգալի նվազումը, երիտասարդության արտահոսքի ու ծնելիության մակարդակի անկումը և այլն: Հայաստանի Հանրապետության 953 գյուղական համայնքերից ու բնակավայրերից 36-ում ոչ ոք չի ապրում, իսկ 61 գյուղերում բնակչությունը 100 մարդուց պակաս է<sup>1</sup>:

Հանրապետության գյուղական բնակչության արտագաղթի աճի հաշվեմնացորդը 2013 թվականին կազմել է -31.1 հազ. մարդ. դա ամենավատ ցուցանիշն է սկսած 1995 թվականից: ՀՅ ազգային վիճակագրական ծառայության տվյալներով՝ քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի միջև տարբերությունը շարունակում է աճել: Այսպես, եթե 1970 թվականին մեկ գյուղական բնակչին հասնում էր քաղաքի 1.46 բնակիչ, ապա 2013 թվականին այդ ցուցանիշը գերազանցեց 1.72 մարդը:

<sup>1</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության մարզերը և երևան քաղաքը թվերով (2008-2012)», Վիճակագրական ժողովածու, ՀՅ ԱՎԾ, Եր., 2013, էջ 245-317:

Գծապատկեր 1

**კვ აყილაკან თარადღნერի սოფჩალ-თნთხუაკან և ქნავახევანასაკან  
კარგდაცმან ქრელიტიქან ალგორითმები**



Ծուկային հարմարվելու աստիճանից, ագրոարտադրական ռեսուրսների առկայությունից, տնտեսության կառուցվածքից և բնակչության ու իշխանության հոգեկերտվածքից կախվածությունը շուկայական մրցակցության պայմաններում հանգեցրեց Քայաստանի Քանրապետության տարածքային զարգացման անհամաշխափությունների խորացմանը, որը հիմնականում արտահայտվում է ցածրադիր գոտու (և ամենից առաջ՝ Երևանի) տնտեսական դերի ու նշանակության աճով, որի հետևանքով ավելի է աճել ցածրադիր և լեռնային գոտիներում տեղաբաշխված մարզերի (հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային) միջև կենսամակարդակի ճեղք

վածքը: Բացի դրանից, ուղղաձիգ լանդշաֆտային և գյուղատնտեսական գոտիներն ըստ աշխարհագրական բնութագրող մեջությունների և ագրոկլիմայական ներուժի ի սկզբանե եղել են տարասեռ: Անվիճելի է, որ ստեղծված դրությունից դուրս գալու միջոցը նարզերի, տարածաշրջանների և գյուղական համայնքների զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման և իրագործման մեջ է:

Կառավարման վարչական մեթոդներից հրաժարվելը և դեպի շուկայական մեթոդներին անցումը հրատապ դարձրին մարզային և համայնքային կազմավորումների գոտիական մասնագիտացումը և արտադրության ռացիոնալ տեղաբաշխման հիմնախնդիրը, այսինքն՝ այդ տարածքներում արտադրվող մթերքների ընդհանուր ծավալում ամենամեծ մասնաբաժինը կազմող գյուղատնտեսական մթերքի արտադրության շուկայական մրցունակ հնարավորությունների և ագրոարտադրական ռեսուրսային ներուժի բացահայտումը ու տնտեսական գնահատումը:

Ծրագրանպատակային մոտեցմամբ՝ մեր կողմից մշակվել է վարչատարածքային կազմավորումների (և ամենից առաջ՝ մարզերի ու համայնքների) սոցիալ-տնտեսական և բնապահպանական ներուժի վերլուծության ալգորիթմ (տե՛ս գծապատկեր 1):

Որպես հիմնական սահմանական եղանակային (ինդիկատիվ) ցուցանիշներ՝\* օգտագործել ենք գյուղական բնակչության կենսամակարդակը, տարածքի ռեսուրսային ներուժը (կադրային, ագրոարտադրական, գրոսաշրջության, ինժեներակառուցվածքային), սոցիալական ենթակառուցվածքներով ապահովվածությունը (դպրոցների, մանկապարտեզների, հիվանդանոցների, մշակութային, ժամանցային հաստատությունների թիվը և այլն), բյուջետափինանսական ապահովվածությունը: Այդ ցուցանիշների վերլուծությամբ սահմանվում են տնտեսության ագրարային հատվածի նախընտրելի գոտիական մասնագիտացման և տարածքների զարգացման առավել կարևոր նշանակություն ունեցող մարզային և համայնքային ծրագրերի ուղղությունները, ինչպես նաև՝ ըստ տեղադիրքի (մայրաքաղաքի, մարզկենտրոնների, հրացման շուկաների նկատմամբ մոտիկությունը և գյուղական համայնքների ու բնակավայրերի սահմանամերձ կամ բարձր լեռնային լինելը), ըստ գյուղատնտեսական հողատեսքների բերդիության և ըստ ագրոկլինայական պայմանների՝ դրանց տարբերակման աստիճանը:

Տնտեսության ագրարային հատվածի առանձնահատկությունը հետևյալն է:

▪ բնակչության առանձնահատուկ կայուն խնճերի՝ գյուղատնտեսական արտադրության սուբյեկտների և ագրարային հարաբերությունների

\* Սահմանական եղանակային (ինդիկատիվ) ցուցանիշները արտացոլում են մակրոտնտեսական, միջնուղային և միջտարածաշրջանային համամասնությունների ձևավորումը և զարգացումը կարգավորելու հնարավորությունները, կախվածությունը տնտեսության ռազմավարական ոլորտն ընդգրկող մեծություններից: Որպես երկարաժամկետ տնտեսական մրցակցության մեջ ավելի հրազեկ դարձնելու ծրագիր-կանխատեսման հանգամանք, այն հիմնականում կողմնորոշվում է դեպի մակրոտնտեսական մակարդակին վերաբերող ցուցանիշների գործիքները, որոնք սահմանվում են ստորին և վերին նշանակության միջանցքների տեսքով և կրում են վեկտորային բնույթ (տե՛ս **Борисов А.** Большой экономический словарь, Изд. 2-е переработанное и дополненное, М., 2005, էջ 280):

(գյուղացիության) առկայությունը,

▪ արտադրության արդյունքների կախվածությունը ոչ միայն աշխատանքային պայմաններից, այլ նաև հողի որակի, տեղադիրքի, կլիմայական բնութագրիչների և եղանակային պայմանների տարբերություններից,

▪ գյուղատնտեսական արտադրության նախընտրելի մասնագիտացման ու հիմնական ենթաճյուղերի և ռացիոնալ տեղաբաշխման մեջ տարածքային (գոտիական) գործոնի առանձնահատուկ դերը,

▪ ագրարային տնտեսավարման ձևերի սոցիալական և կազմակերպչական բազմատեսակությունը, միջջուղային ու միջտնտեսական կոռագրացիայի և ագրոարդյունաբերական ինտեգրման զարգացումը, այդ թվում՝ կոնկրետ ագրոլանդշաֆտային գոտու առանձին տեղամասի սահմաններում գտնվող գյուղական հանայնքներում,

▪ տնտեսավարման փոքր ձևերի (և ամենից առաջ՝ գյուղացիական տնտեսությունների) կայունությունը և ձևափոխությունները պատճական զարգացման գործընթացում, փոփոխվող շուկայական պայմանների նկատմամբ նրանց հարմարվողականությունը (գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող կազմակերպությունների միջև ֆյուչերսային պայմանագրերի ընդլայնում, վարկերի, խթանող վճարների տրամադրում, սուբսիդավորում և պետական աջակցության այլ ձևերի կիրառում),

▪ ագրոարտադրական գործունեության եղանակների և կենսակարգավորման ձևերի (ներառյալ գյուղական հանայնքների ու բնակավայրերի ձևավորված համակարգերի) կախվածությունը գյուղատնտեսական արտադրության կազմակերպման եղանակներից, ինչպես նաև ազգային փորձամասնությունների ավանդական տնտեսաձևերի, ապրելակերպի և պահանջմունքների առանձնահատկություններից,

▪ գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունների ազդեցությամբ բնական միջավայրի հետ մարդու կապերի ձևավորումը, նրան բնորոշ արտադրական կառուցվածքի, ենթակառուցվածքների և հասարակական կապերի առանձնահատկությունների հետ,

▪ գյուղական հանայնքների ու բնակավայրերի ձևավորված համակարգին և, որպես ոիսկային ոլորտ, ագրարային հատվածի ամբողջականության մյուս գործոններին համապատասխանող բնական տարբեր աղետներից զգալի կորուստներ կրող ագրարային հատվածի համար հրատապ համարվող ոիսկերի մեղմացման միջոցառումների իրականացումը և ապահովագրական համակարգի ներդրումը:

Բերված ալգորիթմի հիմնա վրա կարելի է առանձնացնել գյուղական տարածքների նվազագույնը երեք խումբ. ա) գյուղատնտեսական մթերքներ արտադրում են գյուղացիական տնտեսությունները, առևտրային կազմակերպությունները և ֆերմերային տիպի խոշոր տնտեսությունները, բ) գյուղատնտեսական արտադրություն վարում են գյուղացիական տնտեսությունները և առևտրային կազմակերպությունները, գ) գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվում են գյուղացիական տնտեսությունները և ֆերմերային տիպի խոշոր տնտեսությունները<sup>2</sup>:

<sup>2</sup> **Տե՛ս Պալատկին И., Атиюкова О., Павлов А.** Дифференциация сельских территорий по уровню развития// "АПК: экономика, управление", 2008, № 5, էջ 40-42:

Այդպիսի խմբավորման հիմքում ընկած է մասնագիտացման մակարդակը, այսինքն՝ աշխատանքի տարածքային (գոտիական) և ճյուղային բաժանման արդյունքները: Այն պայմանավորված է համեմատաբար ցածր աշխատանքային ծախսերով քանակական առումով տեղական պահանջմունքները զգալիորեն գերազանցող գյուղատնտեսական մթերքների որոշակի տեսակներ արտադրելու հնարավորությամբ, ինչպես նաև նախընտրելի է զարգացնել մասնագիտացման այն ենթաճյուղերը, որոնց արտադրանքը մրցունակ է արտաքին շուկայում և առավելապես կոննորոշված է արտահանմանը: Կարևոր է բացահայտել նաև այն գործոնները, որոնք կարող են փոփոխություններ առաջացնել տնտեսությունների մասնագիտացման արտադրական ուղղություններում և որոշել մարզային ու համայնքային կազմավորումների ազրարային հատվածի նախընտրելի մասնագիտացումը, իհմանական ենթաճյուղերը և տեղը աշխատանքի միջնորդային ու միջտարածաշրջանային բաժանման մեջ (համեմատական առավելություն ունեցող գյուղներքների արտադրության խթանում, նպատակային սուբսիդավորում և դրամաշնորհային ծրագրերի իրականցում, վարկավորման մատչելիության բարձրացում, փոքր ու միջին ձեռնարկատիրության մարքեթինգային աջակցության ընդլայնում, գյուղական համայնքների ենթակառուցվածքների զարգացման միջոցով ներդրումային պայմանների բարելավում և միջնարզային ու ներմարզային տնտեսական ինտեգրման խթանում):

Ազրոպարենային համակարգի զարգացման ինտեգրալ ցուցանիշների հաշվարկման՝ դիրքավորման ձևափոխված մատրիցաների կառուցման հիման վրա մարզային և համայնքային կազմավորումների (և ամենից առաջ՝ մարզերի) խոշորացված մասնագիտացման գնահատման համար իրականացվել է դրանց տիպականացում: Ինտեգրալ նշանակությունը որոշելու համար խմբի ցուցանիշները ընդգրկում են գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները, իհմանական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքը, ճյուղում ու ենթաճյուղում զբաղված աշխատողների քանակը, ներդրված կապիտալի չափերը:

Վերապահություն արտահայտող բանաձևի օգնությամբ հանրագումարային ինտեգրալ ցուցանիշը որոշվել է գյուղացիական տնտեսություններ վարողների կշռային գործակիցների փորձագիտական հարցումների հիման վրա:

Ազրարային հատվածի ինտեգրալ ցուցանիշը հավասար է.

$$0.4\bar{\sigma} + 0.3U_2 + 0.15U_{\text{սֆ}} + 0.15U_s,$$

որտեղ  $\bar{\sigma}$ -ն գյուղատնտեսական արտադրության ծավալն է,  $U_2$ -ն՝ աշխատողների թիվը ազրարային հատվածում,  $U_{\text{սֆ}}$ -ն՝ ազրարային հատվածի արտադրական ֆոնդերի արժեքը,  $U_s$ -ն՝ ներդրումները ազրարային հատվածում:

Ազրոպարենային համակարգի ինտեգրալ ցուցանիշը հավասար է.

$$0.4\bar{\sigma}_{\text{սդ}} + 0.3U_2 + 0.15U_{\text{սֆ}} + 0.15U_s,$$

որտեղ  $\bar{\sigma}_{\text{սդ}}$ -ն ազրոպարենային համակարգի արտադրության ծավալն է,  $U_2$ -սդ-ն՝ աշխատողների թիվը ազրոպարենային համակարգում,  $U_{\text{սֆ}}$ -սդ-ն՝ ազրոպարենային համակարգի արտադրական ֆոնդերի արժեքը,  $U_s$ -սդ-ն՝ ներդրումները ազրոպարենային համակարգում:

Վիճակագրական տվյալների հիման վրա կառուցել ենք մարզերի

դիրքավորման ձևափոխված մատրիցան, որի վերլուծությունը վկայում է, որ ՀՀ նարգերի միայն 7%-ն ունի ագրոարդյունաբերական արտադրության մեջ ներուժ, նույ 25%-ն ունի ագրարային հատվածի զարգացման զգալի ներուժ, սակայն մնացած նարգերում երկուսի գծով մասնագիտացման մակարդակը բարձր չէ, բայց ունեն արտահայտված նախադրյալներ ագրարային հատվածի հետագա զարգացման համար:

Մարգերի մասնագիտացման խորացման մեջ ագրարային ուղղությանը նախապատվություն տալու առումով առաջարկում ենք օգտագործել Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի օրինակով մեր մշակած ու փորձարկած՝ մարզային և տարածաշրջանային կազմավորումների զարգացման արտադրական ուղղությունների որոշման մեթոդիկան: Հետազոտության մեթոդիկան ընդգրկում է աստիճանակարգման և ոչ աստիճանակարգման մեթոդներով վիճակագրական տեղեկատվության հավաքումը և մշակումը, քլասթերային վերլուծությունը, քլասթերային բնութագրության կշռային գործակիցների և քլասթերացման օբյեկտների որոշումը, իրացման շուկայական համակարգերի, արտադրական բազայի և տարածքի ագրոարտադրական ռեսուրսային ներուժի ուսումնասիրությունը:

Շիրակի մարզի տարածաշրջաններում որպես գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը բնութագրող ցուցանիշներ օգտագործվել են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, կաթի արտադրությունը, սպանդի համար իրացված անասունը և թռչունը (սպանդային քաշով), խոշոր եղջերավոր անասունների մատուցիչ, խոզերի և թռչունների միջին օրական կենդանի քաշաճը, արտադրանքի ինքնարժեքը (տե՛ս գծապատկեր 2):


Համաձայն «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարությունը և ՀՀ գյուղի ու գյուղատնտեսության 2010-2020 թթ. կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության № 1476-Ն<sup>3</sup> որոշման՝ Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի բուսաբուծության ներճյուղային կառուցվածքի մեջ նախընտրելի մասնագիտացում և հիմնական ենթաճյուղեր են ճանաչված հացահատիկային տնտեսությունը, կարտոֆիլագործությունը, բանջարաբուծությունը և կերային մշակաբուսերը: Հացահատիկային և հատիկալընթեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները ավանդաբար գրաղեցնում են վարելահողերի 55-60 %-ը: Ընդ որում՝ բերքատվությունը շուրջ 25.3 գ/հա է, որը փոքր-ինչ բարձր է մարզային միջին ցուցանիշից (22.4 գ/հա)<sup>4</sup>: Պետք է նշել, որ Ախուրյանի տարածաշրջանում հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ մասնագիտացումը պարենային-կերային է և անասնաբուծությունը կերերով ապահովելու խնդիրը մասամբ է լուծում: Բանջարաբուծությունը նույնպես չի կարող ճանաչվել գոտիական մասնագիտացում որոշող նախընտրելի գլխավոր ենթաճյուղ, քանի որ ցերմությամբ բուսաճական ժամանակաշրջանի ապահովվածության պայմանը տարածաշրջանում

<sup>3</sup> Տե՛ս «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1 դեկտեմբերի, № 60 (794), 2010, ՀՀ կառավարության պաշտոնական հրատարակություն, Եր., 2011, էջ 83-85:

<sup>4</sup> Տե՛ս «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010», Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱԳԾ, Եր., 2011, էջ 40:

## ԳԺԱՎԱՏԼԵՐ 2

### Տարածքի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման փուլերի որոշումը աշխատանքը վիճակագրական տեղեկատվության հետ



բավարար չէ. ՀՀ-ում բանջարանոցային մշակաբույսերի մասնագիտացման նախընտրելի սորտատեսակների հասունացման և տնտեսապես արժեքավոր աճեցման փուլերին համար ( $10^0$ -ից բարձր շերմաստիճանային միագույնարձ) անհրաժեշտ է  $3500\text{-}4000^0$  շերմաապահովածություն, մինչդեռ Ախուրյանի տարածաշրջանում դա ընդամենը  $2500\text{-}3000^0$  է: Հետևաբար նախընտրելի է բանջարանոցային մշակաբույսերի վաղահաս և ցրտադիմացկուն սորտատեսակների արտադրության գծով մասնագիտացումը: Ավելի մեծ ծավալի շուկայական պահանջարկ ունեցող գյուղներքի արտադրության ուղղությամբ գյուղատնտեսական ապրանքարտադրողներին շահագրգռելու նպատակով պետք է գործուն ուշադրություն դարձվի տարածաշրջանի բուսաբուծության նախընտրելի հեռանկարային մասնագիտացմանը՝ տեխնիկական մշակաբույսերի (և ամենից առաջ՝ գանգրավուշի ու շաքարի ճակնդեղի) աճեցման, վերամշակման և իրացման ոլորտներին, ինչպես նաև հարկավոր է աջակցել մասնագիտացված կերային մշակաբույսեր արտադրողներին՝ և պետական, և մասնավոր հատվածի կառույցների ու կազմակերպությունների գործառույթների հստակ ձևակերպմանը:

Իրագործելի արտադրական բազայի և իրացման համակարգերի հաշվարկները ցույց են տալիս, որ առաջարկված մեթոդիկայի օգնությամբ և ագրոարտադրական ռեսուրսային ներուժի հաշվառմամբ անասնաբուծության ներճյուղային կառուցվածքուն որպես նախընտրելի մասնագիտացման հիմնական ուղղություններ պետք է ընտրել կարնամսատու տավարաբուծությունը, մսակաթնաբրդատու ոչխարաբուծությունը, ալպիական մեղվաբուծությունը: Ինչպես նաև խոզաբուծությունը և թռչնաբուծությունը:

Այս մարզի գյուղացիական տնտեսություններուն և տնտեսավարման այլ ձևերում վերջին տարիներին արագորեն զարգանում է մսակաթնաբրդատու ոչխարաբուծության արտադրական ուղղությունը: Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2001-2005 թթ. մարզի գյուղացիական տնտեսություններուն մանր եղջերավոր անասունների գլխաքանակը միջին հաշվով կազմել է 67147.4 գլուխ, 2006-2010 թթ.՝ 77002.4 գլուխ, իսկ 2013 թ.՝ 86484 գլուխ<sup>5</sup>: Ոչխարաբուծական մթերքների և դրանց վերամշակումից ստացվող օրգանական սննդամբերքի արտադրության համար կարևոր նախադրյալ է ալպիական ու ենթալպյան գոտու արոտավայրերի (գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի 53.4 տոկոսը՝ 114.6 հազ. հա) առկայությունը մարզում: Մասնագիտացման այդ ուղղությունը համապատասխանեցվել է ագրարային հատվածի զարգացման և գյուղատնտեսական մթերքների, հումքի և պարենի շուկաների կարգավորման հետ, համաձայն որի՝ անասնաբուծությունը և ամենից առաջ՝ մսակաթնաբրդատու ոչխարաբուծությունը ճանաչված են նախընտրելի ուղղություն, ինչին բավականաչափ նպաստում են ոչխարի մսի տարածաշրջանային (և ամենից առաջ՝ Իրանի և արաբական երկրների) շուկաների առկայությունը, ինչպես նաև ոչխարի պանրի ու

<sup>5</sup> Տես «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2000-2005», Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2006, էջ 140, «Գյուղատնտեսությունը Հայաստանի Հանրապետությունում 2006-2010», Վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Եր., 2011, էջ 140, «Անասնագլխաքանակի համատարած հաշվառման հանրագումարներ (2014 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ)», Վիճակագրական տեղեկագիր, Եր., 2013, էջ 3:

գառան մսի նկատմամբ տեղական շուկայի աճող պահանջարկը: Արտաքին շուկայի պահանջների բավարարման առումով առանձնահատուկ կարևորություն է ստանում մսակաբնաբրդատու արտադրական ուղղությամբ ոչխարաբուծության գոտիական մասնագիտացման խորացումը, ուստի նպատակահարմար է մշակել ենթաճյուղի զարգացման ռազմավարական ծրագիր, որով կիմնավորվի մանր եղթերավորների գլխաքանակի կրկնապատկումը և բնական կերահանդակների ռացիոնալ օգտագործման ու ամբողջ տարին արածեցնելու (հեռագնա ամառային արոտներից գյուղամերձ առումներ փոխադրելու միջոցով) լավագույն սխեմաների կիրառումը:

Քանի որ կերահանդակները անասնաբուծության գլխավոր ռեսուրսներն են, ակնհայտ առաջնայնություն են ստանում դրանց պահպանության և բարելավման բնապահպանական և տնտեսական խնդիրները հատկապես լեռնային արոտավայրերում: Կերահանդակների կառավարման ռազմավարական հայեցակարգը պետք է ուղղություններ պարունակի գյուղատնտեսական տարրեր գոտիների համար, որպեսզի արոտային սեզոնին լավագույն օգտագործվեն կերահանդակների ռեսուրսները, և ձմռան սեզոնին կենդանիներն ապահովված լինեն մսուրային համապատասխան կերերով:

Այսպիսով, ՀՀ ռազմավարական և պարենային անվտանգության ապահովման ծրագրերի մշակելու առարկա պետք է դառնա գյուղական տարածքների համաշաբաթ զարգացման միասնական հայեցակարգը, քանի որ ճյուղային ու տարածաշրջանային նպատակային մասնակի ծրագրերը չեն ապահովում անհրաժեշտ արդյունքներ: Կանխատեսելի հեռանկարում ՀՀ-ն տնտեսության ագրարային հատվածից կախված կլինի ոչ միայն պարենային անվտանգության ապահովածության, այլև, որպես առաջնային եկամտի աղբյուր, գյուղական բնակչության արտագաղթը գրադարձության միջոցով կանխելու հանգամանքով: Թեև տնտեսության մյուս ոլորտների մասնաբժինը պետական եկամուտների կառուցվածքում աճելու է, այնուամենայնիվ գլխավոր առաջնայնություններից է լինելու գյուղատնտեսական արտադրության աճը: Չնայած խնդրի դժվարությանը, մեր կարծիքով, դա հնարավոր է անել գյուղական տարածքների համաշաբաթ զարգացման ռազմավարության մշակման միջոցով, այդ խնդրի լուծմանը կարող է նեցուկ լինել մարդարային և համայնքային կազմավորումների նախընտրելի գոտիական մասնագիտացումը որոշելու մեր առաջարկած վերոհիշյալ ալգորիթմը:

**Բանալի բառեր – գյուղական տարածքներ, շուկայական մրցունակություն, գոտիական մասնագիտացում, ալգորիթմ, ինտեգրալ ցուցանիշներ, որոշման մեթոդիկա, մարզային և համայնքային կազմավորումներ**

**ВОЛОДЯ МАНАСЯН – Агрегированная модель определения поясной специализации сельскохозяйственного производства как фактор развития сельских территорий РА.** – В статье анализируется социальное и эколого-экономическое развитие сельских территорий Армении, преодоление трудностей путем уточнения приоритетной поясной специализации, отраслевой структуры и роста рыночной конкурентоспособности сельскохозяйственного производства. Предлагается алгоритм определения приоритетных специализаций по Ахурянскому региону Ширака с учётом его агроклиматического потенциала и экономических особенностей.

**Ключевые слова:** сельские территории, конкурентоспособность, поясная специализация, интегральный показатель, методика определения, областные и муниципальные образования

**MANASYAN VOLODYA – Aggregation Model of Definitions of Rural Production of Zone Specializations and the Development of Rural Areas in RA.** – The article analyzes the social-ecological-economic problems of the development of rural areas of RA, the possibilities of overcoming them by precision of the priority zone specializations of intersectoral structure and market competitiveness growth of rural production. The author proposes the algorithm identifying priority specialization of Akhuryan region (Shirak region) considering its agro-climatic potential and economic features.

**Key words:** rural areas, market competitiveness, zone specialization, algorithm, integral indicators, methods of decision, regional and community forms

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

### INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ** – փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ

**ARTAK XACHTRYAN** – кандидат философских наук, доцент, заведующий кафедрой социальной работы и социальных технологий ЕГУ

**ARTAK KHACHATRYAN** – PhD, Associate Professor, Head of the Chair of Social Work and Social Technologies, YSU

Էլ. փոստ՝ artkhachatryan@yandex.ru

2. **ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր

**АМАЛЯ САРИБЕКЯН** – кандидат экономических наук, профессор кафедры управления и предпринимательства ЕГУ

**AMALYA SARIBEKYAN** – PhD, Professor of the Chair of Management and Business, YSU

Էլ. փոստ՝ samalja@yahoo.com

3. **ՎՈԼՈԴՅԱ ՌՈՎՍԵՊՅԱՆ** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի պրոֆեսոր

**ВОЛОДЯ ОВСЕПЯН** – кандидат экономических наук, профессор кафедры экономической теории ЕГУ

**VOLODIA HOVSEPYAN** – PhD, Professor of the Chair of Theory of Economics, YSU

4. **ԱԼՎԱՐԴ ԽԱՐԱՏՅԱՆ** – տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ

**ALVARD KHARATYAN** – кандидат экономических наук, доцент кафедры математического моделирования в экономике ЕГУ

**ALVARD KHARATYAN** – PhD, Associate Professor of the Chair of Mathematical Modeling in Economics, YSU

Էլ. փոստ՝ alvardkharatyian@yahoo.com

5. **ՎԱՐԴՈՒԻ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ** – ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դասախոս

**VARDUHI GABRIELYAN** – преподаватель кафедры экономической теории ЕГУ

**VARDUHI GABRIELYAN** – Lecturer of the Chair of Theory of Economics, YSU

Էլ. փոստ՝ vardg77@yahoo.com

- 6. ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ – ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ասալիրանտ**  
**ТИГРАН АВЕТИСЯН** – аспирант кафедры финансов и бухгалтерского учета ЕГУ  
**TIGRAN AVETISYAN** – PhD student of the Chair of Finances and Accounting, YSU
- 7. ՎՈԼՈԴՅԱ ՄԱՆԱԾՅԱՆ – աշխարհագրական գիտությունների թեկնածու,**  
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի դոցենտ  
**ВОЛОДЯ МАНАСЯН** – кандидат географических наук, доцент кафедры экономики природопользования Армянского государственного экономического университета  
**VOLODYA MANASYAN** – PhD, Associate Professor of the Chair of Environmental Economics, Armenian State University of Economics

**«ԲԱՆՔԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ»  
ՀԱՆԴԵՍԻ «ՍՈՑԻՌԼՈԳԻԱ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐՔԻ  
2014 թ. ՀԱՄԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**ՍՈՑԻՌԼՈԳԻԱ**

<b>Աղարաբյան Ստեփան – Ազգային ինքնությունը մեկնաբանող սոցիոլոգիական արդի տեսությունների վերլուծություն</b> .....	<b>1.3*</b>
<b>Աստվածատուրով Սեդրակ, Մարզպանյան Հարություն – Արտագաղթի, մարդկային կապիտալի վերարտադրության և գեներային ռիսկերի փոխկապվածությունը Հայաստանի Հանրապետությունում</b> .....	<b>2.3</b>
<b>Գալստյան Հայկ – Մշակույթը հասարակության արդիականացման համատեքստում</b> .....	<b>1.27</b>
<b>Խաչատրյան Արտակ – Սոցիալական աշխատանքը և ընտանիքի ինստիտուտը հետխորհրդային Հայաստանում</b> .....	<b>3.3</b>
<b>Մաթևոսյան Հակոբ – Սփյուռքային ինքնության ձևավորման խնդիրների շուրջ</b> .....	<b>1.10</b>
<b>Յարմալոյյան Մարինե – Բնակչության սոցիալական պաշտպանության համակարգի և մոդելի ձևավորումը հետխորհրդային Հայաստանում</b> .....	<b>1.17</b>
<b>Վարդանյան Եվգինե – ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների դերը բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում</b> .....	<b>2.13</b>

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

<b>Ավետիսյան Տիգրան – Առողջապես բանկային ռիսկերի կառավարման և ՓՄՁ-ների վարկունակության բարելավման անհրաժեշտ գործոն ՀՀ-ում</b> .....	<b>2.64</b>
<b>Ավետիսյան Տիգրան – Հարկային հաշվառման կատարելագործման ուղիները ՀՀ փոքր և միջին կազմակերպություններում</b> .....	<b>3.58</b>
<b>Բաղդասարյան Արեգ – ՀՀ արժեթղթերի շուկայի զարգացման հայեցակարգային մոտեցումները</b> .....	<b>1.46</b>
<b>Գարրիելյան Վարդուհի – Հավատարմագրային կառավարման ծառայությունների շուկայի զարգացումը ՀՀ-ում</b> .....	<b>3.47</b>
<b>Գալստյան Գագիկ – Անցումային տնտեսության տեսության ներածություն</b> .....	<b>2.21</b>

\* Թվերից առաջինը նշանակում է «Բանքեր Երևանի համալսարանի» «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» շարքի հերթական համարը, իսկ երկրորդը՝ հոդվածի եջը:

<b>ԳԱՆՈԳՅԱՆ ԶՈԼԻՒԵՏՈՎԱ – Կառավարչական հաշվառման համակարգ-</b>	
<b>ման հիմնախնդիրները .....</b>	<b>2.35</b>
<b>Գյողալյան Վարդուշ – ՀՀ գյուղական բնակավայրերում բնակչության</b>	
<b>գբաղվածության հիմնախնդրի շուրջ.....</b>	<b>2.28</b>
<b>Խաչատրյան Նոննա – Ներդումային քաղաքականության առանձնա-</b>	
<b>հատկությունները զբոսաշրջության ոլորտում .....</b>	<b>1.70</b>
<b>Խառատյան Ալվարդ – Գլոբալ անհավասարություն և աղքատություն.</b>	
<b>արդի հիմնախնդիրները .....</b>	<b>3.35</b>
<b>Յովհաննիսյան Թամարա – Կինը և ձեռնարկատիրությունը Յայա-</b>	
<b>տանում .....</b>	<b>2.44</b>
<b>Յովսեփյան Վոլոդյա – Տնտեսական աճը և բնակչության կենսամա-</b>	
<b>կարդակը .....</b>	<b>3.25</b>
<b>Մանասյան Վոլոդյա – ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիա-</b>	
<b>կան մասնագիտացման որոշման ագրեգատավորված մոդել՝ որ-</b>	
<b>պես գյուղական տարածքների համաչափ զարգացման գործոն .....</b>	<b>3.70</b>
<b>Մարկոսյան Աշոտ, Թոքմաջյան Սոֆիա, Յակոբյան Նարինե – Ազգա-</b>	
<b>յին տնտեսության մրցունակության բարձրացման արդի հիմնա-</b>	
<b>խնդիրները ՀՀ-ում .....</b>	<b>1.36</b>
<b>Մելքոնյան Նարեկ – ԱՊՊԱ գծով ապահովագրավճարների վերլուծու-</b>	
<b>թյուն ՀՀ օրինակով .....</b>	<b>1.64</b>
<b>Միիթարյան Ժիրայր – Կապիտալի հոսքերի միտումները Կենտրոնա-</b>	
<b>կան և Արևելյան Եվրոպայի երկրներում և ֆինանսատնտեսական</b>	
<b>ճգնաժամը .....</b>	<b>1.54</b>
<b>Մարգսյան Սաքենիկ – Յայաստանում բժշկական զբոսաշրջության</b>	
<b>զարգացման հիմնախնդիրները .....</b>	<b>2.76</b>
<b>Մարիբեկյան Ամալյա – Յասարակական-տնտեսական զարգացման ար-</b>	
<b>դի առանձնահատկությունները .....</b>	<b>3.11</b>
<b>Միմոնյան Արամ – Մրցակցության խթանումը պետական գնումների</b>	
<b>հանակարգում .....</b>	<b>2.57</b>

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

### ՍՈՑԻՈԼՈԳԻԱ СОЦИОЛОГИЯ SOCIOLOGY

<i>Արտակ Խաչատրյան</i> – Սոցիալական աշխատանքը և ընտանիքի ինստիտուտը հետխորհրդային Հայաստանում.....	3
<i>Artyak Xachatryan</i> – Социальная работа и институт семьи в постсоветской Армении	
<i>Artak Khachatryan</i> – Social Work and Family Institution in Post- Soviet Armenia	

### ՏԱՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ЭКОНОМИКА ECONOMICS

<i>Ամալյա Սարիբեկյան</i> – Հասարակական-տնտեսական գարգացման արդի առանձնահատկությունները .....	11
<i>Amalya Saribekyan</i> – Современные особенности общественно-экономического развития	
<i>Amalya Saribekyan</i> – Peculiarities and Modern Problems of Socioeconomic Development: Theoretical and Practical Revelation	
<i>Վոլոդյա Օվսեպյան</i> – Տնտեսական աճը և բնակչության կենսամակարդակը.....	25
<i>Volodja Ovsepyan</i> – Экономический рост и благосостояние	
<i>Volodja Ovsepyan</i> – Economic Growth and Standard of Living	
<i>Ալվարդ Խարատյան</i> – Գլոբալ անհավասարություն և աղքատություն. արդի իիմնախնդիրները .....	35
<i>Alvard Kharatyan</i> – Глобальное неравенство и бедность: современные проблемы	
<i>Alvard Kharatyan</i> – Global Inequality and Poverty: Present-Day Problems	
<i>Վարդուհի Գաբրիելյան</i> – Հավատարմագրային կառավարման ծառայությունների շուկայի զարգացումը ՀՀ-ում.....	47
<i>Varduhি Gabrielyan</i> – Развитие рынка услуг по доверительному управлению в РА	
<i>Varduhি Gabrielyan</i> – Development of Trust Services Market in RA	
<i>Տիգրան Ավետիսյան</i> – Հարկային հաշվառման կատարելագործման ոլորդիները ՀՀ փոքր և միջին կազմակերպություններում.....	58
<i>Tigran Avetisyan</i> – Пути совершенствования налогового учёта на малых и средних предприятиях РА	
<i>Tigran Avetisyan</i> – Ways of Improving Tax Accounting in Small and Medium Enterprises of RA	

**Վոլոդյա Մանասյան – ՀՀ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման որոշման ազրեգատավորված մոդելը՝ որպես գյուղական տարածքների համաշափ զարգացման գործոն..... 70**

**Volodya Manasyan – Aggregated Model of Definitions of Rural Production of Zone Specializations and the Development of Rural Areas in RA**

**Մանասյան Վոլոդյա Անդրեևի հեղինակների մասին ..... 80**

Сведения об авторах  
Information about the Authors

**«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի «Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն» շարքի 2014 թ. համարների տարեկան բովանդակությունը..... 82**

Содержание журнала "Вестник Ереванского университета" (серия "Социология, Экономика") за 2014 г.

The annual contents of the "Sociology, Economics" issues of the "Bulletin of Yerevan State University" in 2014

Դասիչ՝ 77716

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107

Адрес редакции: Ереван, ул. Алекса Манукяна 1, 107

Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ [erhbanber@ysu.am](mailto:erhbanber@ysu.am)  
Կայք՝ [ysu.am](http://ysu.am)

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

Գ. Գրիգորյան  
Г. Григорян  
G. Grigoryan

Նամակարգչային ձևավորում՝  
Компьютерная верстка  
Computer designer

Մ. Աբգարյան  
М. Абгарян  
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 29. 12. 2014:  
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրական 5 մամուլ:

.....  
«Լիմուշ» ՍՊԸ, Երևան, Պուշկինի փող., 40-76: